# Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2015

## *Բովանդակություն*

*Ներածություն* ..... 3
***1. Հանցավորության ընդհանուր վիճակը*** ..... 4
1) Մարդու դեմ ուղղված հանցագործությունները ..... 6
2) Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ ..... 10
3) Ընդհանուր բնույթի հանցագործություններ ..... 12
***2. Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ*** ..... 13
1) Մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերի վերաբերյալ ..... 13
2) Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի վերաբերյալ: ..... 17
3) Հատկապես կարևոր գործերով քննության ոլորտ ..... 19
4) ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերի վերաբերյալ. .. 21
5) ՀՀ ոստիկանության ՔԳՎ, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ՖՆ քննչական վարչության և ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից նախապատրաստվող նյութերի և քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն ..... 24
***3. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ*** ..... 27
1) Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ ... 30
2) Հատկապես կարևոր գործերով քննության վերաբերյալ ..... 31
3) ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերի վերաբերյալ .. 32
***4. Պետական շահերի պաշտպանության ոլորտ*** ..... 33
***5.Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ*** ..... 38
***6. Վերահսկողական-տեսչական գործունեության ոլորտ*** ..... 43
***7. Միջազգային-իրավական օգնության ոլորտ*** ..... 46
***8. Իրավական ապահովման ոլորտ*** ..... 50
***9. ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ*** ..... **55**
1) Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ ..... 55
2) Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ ..... 60
3) Պետական շահերի պաշտպանության ոլորտ ..... 62
4) Պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ ..... 63
***10. ՀՀ դատախազության պետական ծառայության ոլորտ*** ..... 64

## *Ներածություն*

Հայաստանի Հանրապետության դատախազությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ներպետական և միջազգային համապատասխան իրավական ակտերով, 2014թ. ընթացքում բավարար աշխատանքներ է կատարել հանցավորության կանխարգելման, հանցագործությունների բացահայտման, քննության որակն ու արդյունավետությունը բարելավելու, հետաքննության և նախաքննության, դատարանում մեղադրանքի պաշտպանության, դատական ակտերի բողոքարկման, պետական շահերի պաշտպանության, պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, ինչպես նաև դատախազական գործունեության կազմակերպման, մյուս՝ վերահսկողական-տեսչական, միջազգային համագործակցության, իրավական ապահովման ոլորտներում:

Դատախազական լիազորությունների իրականացման ընթացքում կատարվել են մի շարք ուսումնասիրություններ ու վերլուծություններ, որոնց արդյունքները քննարկվել են դատախազության համապատասխան խորհրդակցություններում, և դրանց արդյունքների հիման վրա կազմված ու համապատասխան ակտերում ամրագրված կանխորոշումները կարևոր նշանակություն են ունեցել դատախազական գործունեության կազմակերպման և դատախազական լիազորությունների իրականացման արդյունավետության ապահովման, ինչպես նաև քրեական պետական քաղաքականության մշակման և իրականացման համար:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից 2014 թվականին քրեական պետական քաղաքականության մշակման և իրականացման համատեքստում համապատասխան վերլուծություններն ու ամփոփումներն իրականացվել և դատախազության գործունեության կազմակերպման ուղղությունները հիմնականում կանխորոշվել են դատախազության լիազորություններին համահունչ ստեղծված՝ «Հատկապես կարևոր գործերով քննության» (դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն, ինչպես նաև մեղադրանքի պաշտպանություն և դատական ակտերի բողոքարկում, համապատասխան լիազորություններն իրականացնում է ՀՀ նախաքննության բոլոր մարմինների կենտրոնական ապարատում քննվող գործերով և նախապատրաստվող նյութերով), «Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության», «Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման», «ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով», «Պետական շահերի պաշտպանության», «Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության», «Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով», «Վերահսկողական-տեսչական» վարչությունների և «Միջազգային-իրավական կապերի», «Իրավական ապահովման և եվրաինտեգրման» բաժինների կողմից:

Սույն հաղորդման մեջ վերլուծություններն ու ամփոփումները կատարված են վերը նշված, միմյանցից տարբերվող իրավակազմակերպական, կառուցվածքային

գործունեության կազմակերպման և մասնագիտացման ուղղությունների հնարավոր համադրմամբ:

## *1. Հանցավորության ընդհանուր վիճակը*

Հաշվետու ժամանակահատվածի հանցավորության ընդհանուր վիճակի վերլուծությունը:

2014թ. ընթացքում գրանցվել է հանցագործության 17,546 (2013թ.՝ 18,333) դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 787-ով կամ 4.3%-ով: Բացահայտումը կազմել է 79.9% (2013թ.՝ 82.6%), այսինքն՝ բացահայտումը նվազել է 2.7%-ով:

Արձանագրվել է հրազենի գործադրմամբ կատարված հանցագործության 68 (2013թ.՝ 66) դեպք, որոնցից բացահայտվել է 57-ը (2013թ.՝ 49):

2014թ. ընթացքում աճել են՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը՝ 200-ով (2013թ.՝ 4,727 – 2014թ.՝ 4,927) կամ 4.2%-ով, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը՝ 190-ով (2013թ.՝ 6,475 – 2014թ.՝ 6,665) կամ 2.9%-ով, այլ հանցագործությունների դեպքերը՝ 7-ով (2013թ.՝ 47 – 2014թ.՝ 54) կամ 14.9%-ով:

Նույն ժամանակահատվածում նվազել են՝ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը՝ 303-ով (2013թ.՝ 3,121 – 2014թ.՝ 2,818) կամ 9.7%-ով, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը՝ 257-ով (2013թ.՝ 1,127 – 2014թ.՝ 870) կամ 22.8%-ով, պետական իշխանության, պետական ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը՝ 624-ով (2013թ.՝ 2,836 – 2014թ.՝ 2,212) կամ 22%-ով:

2014թ. ընթացքում հանցագործությունների ընդհանուր թվի նվազման պայմաններում աճել է միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների թիվը:

Այսպես, միջին ծանրության հանցագործություններն աճել են 330 դեպքով կամ 8.8%-ով (2013թ.՝ 3,743 – 2014թ.՝ 4,073), ծանր հանցագործությունները՝ 231 դեպքով կամ 7.5%-ով (2013թ.՝ 3,088 – 2014թ.՝ 3,319), իսկ առանձնապես ծանր հանցագործությունները՝ 43 դեպքով կամ 33.1%-ով (2013թ.՝ 130 – 2014թ.՝ 173):

Միջին ծանրության և ծանր հանցագործությունների դեպքերի աճի հետ բացահայտման վիճակը վատթարացել է և կազմել է՝ միջին ծանրության հանցագործությունների համար 74.5% (2013թ.՝ 80.5%), իսկ ծանր հանցագործությունների համար՝ 54.8% (2013թ.՝ 58%):

Դրական միտում է նկատվել առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման գործում: 2014թ. բացահայտումը կազմել է 86.1% (2013թ.՝ 80.8%):

2014թ. ընթացքում հանցագործություն կատարած 253 (2013թ.՝ 327) անձ եղել է նախկինում դատապարտված, որոնցից 120-ը (2013թ.՝ 163)՝ 2 և ավելի անգամ:

2014թ. հետախուզվել է 13,526 (2013թ.՝ 13,524) հանցագործ, որոնցից 1,777-ը (2013թ.՝ 1,886) կամ 13.1%-ը (2013թ.՝ 13.9%) հայտնաբերվել են:

2015թ. հունվարի 1-ի դրությամբ հետախուզման մեջ է մնացել 11,749 հանցագործ, որոնցից 10,448-ը կատարել է միջին ծանրության, 723-ը՝ ծանր, 196-ը՝ առանձնապես ծանր, իսկ 382-ը՝ ոչ մեծ ծանրության հանցագործություն:

2015թ. հունվարի 1-ի դրությամբ 11,749 հետախուզվողից 9,918-ը հետախուզվում է ՀՀ քր. Օր.-ի 327-րդ հոդվածի հատկանիշներով, իսկ 1,831-ը՝ ՀՀ քր. Օր.-ի այլ հոդվածների հատկանիշներով, այդ թվում՝ 60-ը՝ սպանության, 22-ը՝ սպանության փորձի, 105-ը՝ դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու, որոնցից 77-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 18-ը՝ մարդկանց թրաֆիքինգի, 16-ը՝ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների, որոնցից 3-ը՝ բռնաբարության, 55-ը՝ մարդու դեմ ուղղված այլ հանցագործությունների, 7-ը՝ բանդիտիզմի, 16-ը՝ հրազեն, ռազմամթերք պատրաստելու և ապօրինի շրջանառելու, 9-ը՝ ՃԵԿ-ը խախտելու, 67-ը՝ խուլիգանության, 91-ը՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, 17-ը՝ հասարակական անվտանգության կարգի դեմ ուղղված այլ հանցագործությունների, 63-ը՝ ավազակության, 14-ը՝ կողոպուտի, 152-ը՝ գողության, 111-ը՝ յուրացում կատարելու, 475-ը՝ խարդախության, 5-ը՝ տրանսպորտային միջոցները փախցնելու, 13-ը՝ սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների, 198-ը՝ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների, 213-ը՝ պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների, 187-ը՝ այլ հանցագործությունների կատարման համար:

ՀՀ դատախազության կատարած աշխատանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործությունների բացահայտման աշխատանքների վրա, մի շարք օբյեկտիվ պատճառներից զատ, լուրջ ազդեցություն ունեն նաև այնպիսի սուբյեկտիվ պատճառներ, ինչպիսիք են՝ դատախազի, քննիչի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող աշխատակիցների համագործակցության մակարդակը, կոնկրետ քրեական գործերով իրականացվող քննության որակը, քննչական և օպերատիվ-հետախուզական աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպումը, քննության նկատմամբ իրականացվող գերատեսչական վերահսկողությունն ու դատախազական հսկողությունը:

Անհանգստացնող է հետաքննության մարմինների կողմից ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ցածր որակն ու անարդյունավետությունը:

Հանցագործությունների բացահայտման աշխատանքներում տեղ գտած նշված թերությունները խոչընդոտում են երկրում պատշաճ քրեական քաղաքականության իրականացմանը, նվազեցնում հանցագործությունների կանխարգելմանն ուղղված ջանքերի արդյունավետությունը, նպաստավոր պայմաններ ստեղծում նոր հանցագործությունների կատարման համար:

Լուրջ անելիքներ կան հետախուզման մեջ գտնվող մեղադրյալների գտնվելու վայրը պարզելու, նախորդ տարիներին կատարված հանցագործությունները բացահայտելու, հանցավոր խմբերի բոլոր անդամներին և անչափահասներին հանցավոր գործունեության ներգրավողներին ի հայտ բերելու, հանցագործությունների կատարմանը նպաստող պայմաններն ու պատճառները քննությամբ պարզելու և ներգործության համարժեք միջոցներ ձեռնարկելու գործում:

Ստեղծված իրավիճակը շտկելու և հանցագործությունների բացահայտման աշխատանքները ակտիվացնելու համար առաջնահերթ խնդիր է նախաքննության և օպերատիվ-հետախուզական աշխատանքների որակի կտրուկ բարելավումը, նախաքննական և հետաքննական մարմինների սերտ համագործակցությունը,

քննության ճիշտ պլանավորումը, բոլոր հնարավոր վարկածների մշակումը և դրանց օպերատիվ ստուգումը:

ՀՀ դատախազությունը, հանցագործության դեմ պայքարում իրավապահ մարմինների գործունեության համակարգման առումով մեծ դեր ունենալով հանդերձ, ՀՀ Սահմանադրությամբ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում չի կարող անմիջական մասնակցություն ունենալ հանցավորության դեմ պայքարում: Դատախազությունը, այդ ոլորտում համակարգելով իրավապահ մարմինների աշխատանքները, վերջիններիս գործնական ցուցումներ և հանձնարարություններ տալով, չի կարող երաշխավորել դրանց կատարման արդյունավետությունը, ինչն իր ազդեցությունն է թողնում հանցավորության դեմ պայքարի արդյունավետության վրա: Ելնելով այդ նկատառումներից, «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրում» և դրանից բխող միջոցառումների ցանկում որպես միջոցառում ներառվել է **հանցավորության դեմ պայքարում իրավապահ մարմինների գործողությունների համակարգման կազմակերպաիրավական կառուցակարգերի ապահովումը**:

Ըստ այդմ, ՀՀ դատախազության կողմից նախապատրաստվել և շրջանառության մեջ է դրվել «Դատախազության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծ, համաձայն որի՝ հանցավորության դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինների արդյունավետ համագործակցության կազմակերպման նպատակով առաջարկվում է դատախազությանը վերապահել իրավապահ մարմինների գործունեության համակարգումը, իսկ հանցավորության դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինների գործունեության համակարգման կազմակերպաիրավական ձևերը կսահմանվեն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամանով:

### *1) Մարդու դեմ ուղղված հանցագործությունները*

Մարդու դեմ ուղղված հանցագործությունները 2014թ. ընթացքում 200 դեպքով (2013թ.՝ 4,727 – 2014թ.՝ 4,927) կամ 4.2%-ով աճել են:

Ընդ որում, աճել են **սպանության** (2013թ.՝ 48 – 2014թ.՝ 53), **սպանության փորձի** (2013թ.՝ 25 – 2014թ.՝ 28) **դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու** (2013թ.՝ 186 – 2014թ.՝ 216), **բռնաբարության և բռնաբարության փորձի** (2013թ.՝ 19 – 2014թ.՝ 22) և **մարդու դեմ ուղղված այլ հանցագործությունների** (2013թ.՝ 3,112 – 2014թ.՝ 3,420) դեպքերը: Նվազել են դիտավորությամբ առողջությանը միջին կամ թեթև վնաս պատճառելու (2013թ.՝ 1,412 -2014թ.՝ 1,321), **մարդկանց թրաֆիքինգի** (2013թ.՝ 14 – 2014թ.՝ 8), **սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների** (2013թ.՝ 116 – 2014թ.՝ 97) դեպքերը:

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման ցուցանիշում էական փոփոխություն չի արձանագրվել: 2014թ. բացահայտումը կազմել է 96%: 2014թ. ընթացքում գրանցվել է հանցագործության 17,546 (2013թ.՝ 18,333) դեպք,

այսինքն՝ դեպքերը նվազել են 787-ով կամ 4.3%-ով: Բացահայտումը կազմել է 79.9% (2013թ.՝ 82.6%), այսինքն՝ բացահայտումը նվազել է 2,7%-ով:

2013թ. հետ համեմատած 2014թ. սպանության դեպքերն աճել են 5-ով (2013թ.՝ 48 – 2014թ.՝ 53) կամ 10,4%-ով, սպանության փորձի դեպքերը՝ 3-ով (2013թ.՝ 25 – 2014թ.՝ 28) կամ 12%-ով, իսկ առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերը՝ 30-ով (2013թ.՝ 186 – 2014թ.՝ 216) կամ 16,1%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում 12%-ով բարելավվել է գրանցված սպանությունների բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 84.9% (2013թ.՝ 72.9%): Սպանության 53 (2013թ.՝ 48) դեպքից բացահայտվել է 45-ը (2013թ.՝ 35):

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված սպանության փորձերի դեպքերի բացահայտման ցուցանիշը նվազել է 13,4%-ով՝ կազմելով 78,6% (2013թ.՝ 92%): 2014թ. սպանության փորձի 28 (2013թ.՝ 25) դեպքից բացահայտվել է 22-ը (2013թ.՝ 23):

Հաշվետու ժամանակահատվածում 91 դեպքով կամ 6,4%-ով նվազել են դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու դեպքերը (2013թ.՝ 1,412 – 2014թ.՝ 1,321): Միաժամանակ, 30 դեպքով կամ 16.1%-ով աճել են դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերը (2013թ.՝ 186 – 2014թ.՝ 216):

Բացասական միտում է նկատվել նաև նշված հանցագործությունների բացահայտման գործում: 2014թ. բացահայտումը կազմել է 75% (2013թ.՝ 83.9%), 216 (2013թ.՝ 186) դեպքից բացահայտվել է 162-ը (2013թ.՝ 156):

Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի աճը որոշակիորեն կարող է պայմանավորված լինել նման դեպքերի բացահայտման ոչ բարձր ցուցանիշով: 2013թ. արձանագրված 186 դեպքից չի բացահայտվել 30-ը, բացահայտումը կազմել է ընդամենը 83.9%, իսկ 2014թ. արձանագրված 216 դեպքից չի բացահայտվել 54-ը, բացահայտումը կազմել է ընդամենը 75%:

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես՝ **դիտավորյալ սպանության, սպանության փորձի և ծանր մարմնական վնասվածք պատճառելու դեպքերի** հաշվառման, կանխարգելման, դրանց կատարմանը նպաստող հանգամանքների ուսումնասիրության, բացահայտման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների և կատարված աշխատանքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ ինչպես նախկինում, հաշվետու ժամանակահատվածում նույնպես առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց վերացման ուղղությամբ ձեռնարկվել և ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

Այսպես, դիտավորյալ սպանության, սպանության փորձի և առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դեպքերին հիմնականում նախորդում են հանցագործություն կատարած անձանց և տուժողների միջև ծագած վիճաբանությունները, դրանց վերաբերյալ պարզաբանումները, որոնք հաճախ կրում են շարունակական բնույթ, իսկ առանձին դեպքերում զուգորդվում են հասարակական վայրերում կազմակերպվող հանդիպումներով:

Օպերատիվ աշխատանքների ոչ բավարար մակարդակի, այն է՝ ժամանակին տեղեկություն չստանալու արդյունքում, կատարվածի մասին տեղեկությունը ստացվում է միայն դեպքից (սպանություն, ծանր մարմնական վնասվածք) հետո:

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում պարզվել է նաև, որ **բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների** թվի աճը հիմնականում պայմանավորված է

ինչպես իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված պրոֆիլակտիկ միջոցառումների անարդյունավետությամբ, այնպես էլ բնակչության անհանդուրժողականությամբ: Այդ բնույթի հանցագործությունների պատճառ են հանդիսանում, հիմնականում, կենցաղային հարցերը:

Հարկ է նշել, որ բավարար չեն նաև այդ բնույթի հանցագործությունների բացահայտման ուղղությամբ ձեռնարկված քննչական միջոցառումները, ինչպես նաև նախաքննության և հետաքննության մարմինների համագործակցությունը: Վերը թվարկված թերությունների վերացման, նախաքննության և հետաքննության մարմինների համագործակցության ուժեղացման, հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ ՀՀ դատախազության կողմից կատարվել է զգալի աշխատանք, մասնավորապես՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման և այդ դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում տրվել են բազմաթիվ հանձնարարականներ, գրավոր ցուցումներ, վերացվել են քրեական գործի վարույթը կասեցնելու և նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումներ:

Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցագործությունների հասարակական վտանգավորության աստիճանը բարձր է՝ հաշվի առնելով այն, որ դրանք հիմնականում կատարվում են հասարակական վայրերում, այլ անձանց ներկայությամբ՝ հասարակության անդամների մոտ առաջացնելով անպաշտպանվածության զգացում, հատկապես, երբ այդ հանցագործությունները կատարած անձինք չեն բացահայտվում և, խուսափելով քրեական պատասխանատվությունից, մնում են ազատության մեջ:

Հանցագործությունների բացահայտման աշխատանքներում տեղ գտած նշված թերությունները խոչընդոտում են երկրում պատշաճ քրեական քաղաքականության իրականացմանը, նվազեցնում հանցագործությունների կանխարգելմանն ուղղված ջանքերի արդյունավետությունը, նպաստավոր պայմաններ ստեղծում նոր հանցագործությունների կատարման համար:

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման, հասարակության մեջ բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ձևավորելու նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է տվյալ բնույթի հանցանք կատարած անձանց նկատմամբ ձևավորել արդարացի խիստ պատժողական և միասնական պրակտիկա, միջոցներ ձեռնարկել հասարակության իրավագիտակցության, օրինապաշտության և պատժի անխուսափելիության գիտակցության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ: Այդ նպատակով հարկավոր է ակտիվացնել բնակչության շրջանում տարվող իրավախախտումների նախականխիչ աշխատանքները, վեր հանել և վերացնել այդ աշխատանքներում տեղ գտած թերությունները, ձեռնարկել միջոցներ՝ ուղղված հասարակության մեջ հանցագործությունների բոլոր տեսակների նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը, հակաօրինական և հանրորեն վտանգավոր վարքագծի դատապարտմանը, այս բնույթի հանցավոր ոտնձգություն կատարած անձանց նկատմամբ նշանակված պատիժների մասին հասարակությանն իրազեկել զանգվածային լրատվության միջոցներով և քարոզչական այլ ակտիվ աշխատանքներով:

Ընդհանրապես պետք է նշել, որ վերջին տարիներին հաճախակի են դարձել այն դեպքերը, երբ տուժողները ճիշտ չեն ներկայացնում մարմնական վնասվածքներ

ստանալու հանգամանքները, պատճառաբանելով, թե, իբր, դրանք ստացել են վայր ընկնելու կամ իրենց անզգույշ գործողությունների հետևանքով: Առանձին դեպքերում դատավարության այս մասնակիցները նույնիսկ միտումնավոր շեղում են քննությունը՝ մատնանշելով մարմնական վնասվածք ստանալու միանգամայն այլ հանգամանքներ, փոխելով արարքի կատարման եղանակը, ժամանակը, վայրը: Մի շարք դեպքերում էլ վկաները կամ տուժողները, ճանաչելով հանցագործություն կատարած անձին կամ նրա մասին իմանալով այնպիսի տեղեկություններ, որոնք թույլ կտան պարզելու հանցագործություն կատարած անձի ինքնությունը, դրանք չեն հայտնում քննությանը, որով արհեստական դժվարություններ են ստեղծում հանցագործության բացահայտման համար:

Խնդրի լուծման համար նախատեսվել է զուգորդել ինչպես սուտ ցուցմունք տալու համար մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու, այնպես էլ վկաների, տուժողների նկատմամբ համապատասխան պաշտպանության միջոցների կիրառման ուղիները:

Նշված հանցատեսակի դեպքերի աճի պայմաններում խիստ կարևոր է այս բնույթի հանցագործությունների կանխմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Պետք է նշել, որ բռնի հանցագործությունների ընդհանուր կանխարգելումը հիմնականում կախված է երկրում հետևողականորեն իրականացվող սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումներից, որոնք միտված են համամարդկային արժեքների, բարոյական մթնոլորտի բարելավմանն ու սոցիալական արդարության սկզբունքի իրականացման հաստատմանը:

Այս առումով, առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի կանխարգելման գործում մեծ է ոչ միայն իրավապահ մարմինների և, ընդհանրապես, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, այլ նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ հասարակական կազմակերպությունների, փաստաբանների, ՀԼՄ-ների դերը:

Ինչ վերաբերում է իրավապահ մարմիններին, ապա ընդհանուր առմամբ նման բնույթի հանցագործությունների կանխման աշխատանքներին անհրաժեշտ է ներգրավել ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներին, որպեսզի ժամանակին վեր հանվեն մարդկանց միջև ծագած կոնֆլիկտային իրավիճակները և միջոցներ ձեռնարկվեն դրանք հարթելու ուղղությամբ: Այդ առումով, կանխարգելմանը միտված աշխատանքներն ավելի արդյունավետ կարող են դառնալ, եթե ոստիկանությունում ժամանակին ու պատշաճ միջոցներ ձեռնարկվեն առաջին հայացքից աննշան համարվող, կենցաղային վեճերի պատճառներն ու դրանց նպաստող պայմանները վերացնելու ուղղությամբ:

Ինչպես մյուս հանցատեսակների, այնպես էլ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի կանխարգելումը սերտորեն կապված է դրանք հայտնաբերելու, գրանցելու, հնարավորինս սեղմ ժամկետում բացահայտելու և այդ հանցագործությունները կատարած անձանց արդարացի պատժի ենթարկելու հետ: Ուստի, հանձնարարվել է ուժեղացնել դատախազական հսկողությունը ինչպես նախաքննության, այնպես էլ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմինների նկատմամբ և պահանջել, որպեսզի վերջիններս պատշաճ մակարդակով կատարեն հանցագործությունների բացահայտմանն ուղղված իրենց պարտականությունները:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է **թրաֆիքինգի դեպքերի** նվազում 42.9%-ով (2013թ.՝ 14 – 2014թ.՝ 8), որն առաջին հայացքից կարող է մտահոգիչ թվալ՝ հաշվի առնելով այս հանցատեսակի լատենտային բնույթը: Սակայն վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ նվազումն ունի օբյեկտիվ պատճառներ: Նախ, մեր երկրում քննարկվող խնդրով զբաղվող շահագրգիռ հասարակական, միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունները վկայում են, որ վերջին տարիներին հանրապետությունում էապես նվազել է թրաֆիքինգի ռիսկայնությունը: Դա պայմանավորված է երևույթի մասին բնակչության՝ հատկապես խոցելի խմբերի իրազեկության բարձրացմամբ, ինչպես նաև թրաֆիքինգ իրականացնողների նկատմամբ արդարացի խիստ պատիժների ապահովմամբ, ընդհանուր կանխիչ մթնոլորտի ձևավորմամբ: Նշվածն առավել հիմնավորվում է նրանով, որ վերջին տարիներին թրաֆիքինգի փաստերով հարուցված քրեական գործերով բացահայտված դեպքերն առավել վաղ տարիներին արձանագրված դեպքեր են:

### *2) Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ*

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունները 2014թ. ընթացքում նախորդ տարվա համեմատ 190 դեպքով կամ 2.9%-ով ավելացել են՝ կազմելով 6,665 դեպք (2013թ.՝ 6,475):

2.3%-ով նվազել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 58.8% (2013թ.՝ 61.1%):

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման, ծնող պատճառների ու դրանց նպաստող պայմանների վերացման համար հարկավոր է բարձրացնել հանցագործությունների բացահայտման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների որակն ու արդյունավետությունը, իրականացնել նպատակային և հետևողական գործունեություն՝ այս բնույթի հանցագործությունների փաստերի գրանցման ու բացահայտման ուղղությամբ:

2014 թվականին 166 դեպքով (2013թ.՝ 5,829 – 2014թ.՝ 5,995) կամ 2.8%-ով ավելացել են **անձնական գույքի հափշտակության դեպքերը**, մինչդեռ **պետական կամ հանրային գույքի հափշտակության** դեպքերը նվազել են 14-ով (2013թ.՝ 190 – 2014թ.՝ 176) կամ 7.4%-ով:

119-ով (2013թ.՝ 1,323 – 2014թ.՝ 1,442) կամ 9%-ով ավելացել են **բնակարանային գողության**, 36-ով (2013թ.՝ 184 – 2014թ.՝ 220) կամ 19.6%-ով՝ **կողոպուտի**, 82-ով (2013թ.՝ 877 -2014թ.՝ 959) կամ 9.4%-ով՝ **անձնական գույքին խարդախությամբ տիրանալու**, 56-ով (2013թ.՝ 146 – 2014թ.՝ 202) կամ 38.4%-ով՝ **յուրացման կամ վատնման** դեպքերը:

35-ով (2013թ.՝ 110 – 2014թ.՝ 75) կամ 31.8%-ով նվազել են պետական կամ հանրային գույքի գողության դեպքերը:

Ինչպես նշվեց, հաշվետու ժամանակահատվածում, անձնական գույքի հափշտակության դեպքերի աճի պայմաններում, արձանագրվել է նաև բնակարանային գողությունների աճ՝ 119 դեպքով կամ 9%-ով: 1.4%-ով նվազել է բնակարանային գողությունների բացահայտման ցուցանիշը, եթե 2013թ. այն կազմել է 34.2%, ապա 2014թ. ընդամենը՝ 32.8%: Պետք է նշել, որ 2012թ. բնակարանային

գողությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 49.7%, այսինքն՝ երկու տարվա ընթացքում բնակարանային գողությունների բացահայտման ցուցանիշը նվազել է 16.9%-ով:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ժամանակահատվածում, գրանցված բնակարանային գողությունների գերակշիռ մասը կատարվել է հարմարեցված բանալու կամ տեխնիկական միջոցների գործադրմամբ դռան փականն անվնաս բացելու եղանակով, սակայն լայն տարածում ունեն նաև պատուհանից կամ պատշգամբից մուտք գործելու միջոցով կատարված գողության դեպքերը:

Ըստ վերլուծությունների՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների նման ցուցանիշների առկայությունը պայմանավորված է ազգաբնակչության ծանր սոցիալական պայմաններով, արտերկիր մեկնած քաղաքացիների կողմից բնակարանները, շենք-շինությունները տևական ժամանակ առանց հսկողության թողնելու հանգամանքով:

Հանցագործությունների, այդ թվում՝ գողությունների և, հատկապես, բնակարանային գողությունների դեմ արդյունավետ պայքարի նպատակով անհրաժեշտ է ապահովել քննչական և հետաքննական մարմինների արդյունավետ համագործակցություն, միջոցներ ձեռնարկել հանցածին կողմնորոշումներ ունեցող, այդ թվում՝ համասեռ արարքների համար դատապարտված և պատժի կրման վայրերից վերադարձած անձանց անհատական պրոֆիլակտիկայի ու ռեցիդիվի կանխման ուղղությամբ, որով կբարձրացվի նաև հանցագործների նկատմամբ իրականացվող պատժի արդյունավետության ապահովումը:

Վերը թվարկված թերությունների վերացման, համագործակցության ուժեղացման, հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ ՀՀ դատախազության կողմից կատարվել են զգալի աշխատանքներ, մասնավորապես՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման և այդ դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում տրվել են բազմաթիվ գրավոր ցուցումներ, հանձնարարականներ, վերացվել են քրեական գործի վարույթը կասեցնելու և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումներ:

Որոշակի փոփոխություններ են կատարվել նաև **ավազակության** դեպքերի շարժընթացում. եթե 2013թ. ընթացքում արձանագրվել է 73 դեպք, ապա 2014թ. ընթացքում՝ 69 դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 4-ով կամ 5.5%-ով: 9.5%-ով աճել է ավազակության դեպքերի բացահայտման ցուցանիշը: 2013թ. այն կազմել է 63%, իսկ 2014թ.՝ 72.5%:

2013թ. հետ համեմատ 2014թ. ընթացքում 36-ով կամ 19.6%-ով աճել են **կողոպուտի** դեպքերը: Դեպքերի աճին զուգահեռ, 4.1%-ով աճել է նաև նշված դեպքերի բացահայտման ցուցանիշը, եթե 2013թ. այն կազմել է 50%, ապա 2014թ.՝ 54.1%:

2014թ. ընթացքում որոշակի բացասական փոփոխություններ են տեղի ունեցել **խարդախությամբ անձնական գույքի հափշտակության** դեպքերի շարժընթացում՝ արձանագրվել է նման հանցագործությունների աճ 82 դեպքով (2013թ.՝ 877 – 2014թ.՝ 959) կամ 9.4%-ով:

### *3) Ընդհանուր բնույթի հանցագործություններ*

2014 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատ, 303 դեպքով կամ 9.7%-ով նվազել են հասարակության անվտանգության և կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը՝ կազմելով 2,818 (2013թ.՝ 3,121) դեպք:

2%-ով նվազել է նշված հանցագործությունների բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 90.1% (2013թ.՝ 92.1%):

2014 թվականին արձանագրվել է **խուլիգանության** 200 (2013թ.՝ 185) դեպք, որոնցից 30-ը (2013թ.՝ 32) կատարվել է զենքի գործադրմամբ, այսինքն՝ խուլիգանության դեպքերը աճել են 15-ով կամ 8.1%-ով, իսկ զենքի գործադրմամբ կատարվածները նվազել են 2-ով կամ 6.3%-ով:

1%-ով նվազել է խուլիգանության դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 92.5% (2013թ.՝ 93.5%), ընդ որում, զենքի գործադրմամբ խուլիգանությունների դեպքերի բացահայտման ցուցանիշը 12.3%-ով աճել է՝ կազմելով 96.7% (2013թ.՝ 84.4%):

Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրանք, որպես կանոն, կատարվել են ալկոհոլային խմիչքների ազդեցության տակ գտնվող անձանց կողմից, երեկոյան ժամերին, հասարակական և բազմամարդ վայրերում: Այդ հանցագործությունների ծնող պատճառների և դրանց նպաստող պայմաններից է, օրինակ, ալկոհոլի ազդեցության տակ անձի մոտ առաջացող ագրեսիվ վարքագծի դրսևորումը:

Վերը հիշատակված գործոնը հաճախ սուբյեկտիվ բնույթ է կրում և, որպես հանցագործությունների կատարմանը դրդող և նպաստող պայման, անկանխատեսելի է ու կանխարգելման իմաստով անվերահսկելի:

Բարդություններ են առաջանում խուլիգանության դեպքերի հաշվառման և բացահայտման ընթացքում՝ կապված հանցանքը հիմնավորող ապացույցներ՝ ականատեսների ցուցմունքներ ձեռք բերելու հետ: Հաճախ այդ բնույթի հանցագործությունները կատարվում են հանցագործի բնակության վայրում և դեպքերը մնում են չբացահայտված այն պատճառով, որ վկաները հարևաններ են ու, ի վերջո, նրանք կամ հրաժարվում են բացատրություններ տալուց, կամ էլ տալիս են իրականությանը չհամապատասխանող բացատրություններ:

Ինչ վերաբերում է խուլիգանության դեպքերի էական նվազմանը, ապա այն պայմանավորված է նաև խուլիգանության հանցակազմի առկայության վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 30.03.2012թ թիվ ԱՎԴ/0014/01/11 նախադեպային որոշմամբ տրված մեկնաբանությամբ, որով, ըստ էության, նեղացվել են խուլիգանության հանցակազմի սահմանները և մարմնական վնասվածքներով գրանցված դեպքերի քրեաիրավական որակման առումով դրանց ուղեկցող ոչ բոլոր հակահասարակական արարքներն են դիտվել որպես ուղղակի դիտավորությամբ կատարված հասարակական կարգի կոպիտ խախտումներ և դրա արդյունքում բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորումներ:

Նախորդ տարվա համեմատությամբ 2014թ. 79 դեպքով կամ 18.2%-ով աճել են **հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրա ապօրինի շրջանառության** դեպքերը՝ 512 (2013թ.՝ 433) դեպք:

2013թ. համեմատությամբ 203 դեպքով կամ 19.3%-ով նվազել են **ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու** դեպքերը (2013թ.՝ 1,050, 2014թ.՝ 847):

15 դեպքով կամ 7.7%-ով նվազել են նաև մահվան ելքով ՃԵԿ-ի խախտման դեպքերը՝ 181 (2013թ.՝ 196) դեպք, սակայն աճել է այդ բնույթի հանցագործությունների բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 97.2% (2013թ.՝ 95.4%):

Տրանսպորտային հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքներ շարունակում են մնալ՝ ճանապարհների շինարարական, ինժեներատեխնիկական և կառուցապատման աշխատանքներում առկա թերությունները, ինչպես նաև քաղաքային ճանապարհներին երթևեկության նշանների, հետիոտնային նշագծումների, իսկ գյուղական բնակավայրերում նաև լուսավորության բացակայությունը, որոնք անուղղակիորեն նպաստում են այս բնույթի հանցագործությունների կատարմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ճանապարհատրանսպորտային հանցագործությունների դեպքերը հիմնականում կատարվում են վարորդների կողմից ալկոհոլի օգտագործման, սահմանված արագության գերազանցման, ինչպես նաև մայրուղիների որոշ հատվածներում լուսավորության և համապատասխան ճանապարհային նշանների բացակայության պատճառով: Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների դեպքերի մեծ մասը կատարվում է տաքսիների վարորդների կողմից:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես 2014 թվականին, այնպես էլ նախորդ տարի, վթարների առաջացման հիմնական պատճառը եղել է վարորդների կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցները վարելը, վրաերթների դեպքերում՝ հետիոտների կողմից փողոցը ոչ սահմանված տեղերով հատելը, ճանապարհների ոչ բարվոք վիճակը, ավտոմայրուղիներում սահմանված արագության գերազանցումը, ոչ սեզոնային անվադողերով տրանսպորտային միջոցների շահագործումը, ճանապարհների լեռնային հատվածներում բազմաթիվ ոլորանների առկայությունը, վտանգավոր հատվածներում արգելապատնեշների բացակայությունը կամ դրանց անորակությունը և այլն:

## *2. Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ*

### *1) Մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերի վերաբերյալ*

2014թ. ընթացքում դատախազական հսկողություն է **իրականացվել մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերի** վերաբերյալ նախապատրաստված և ավարտված 32,065 նյութի նկատմամբ, որը 2,188-ով ավելի է, քան 2013թ.

ընթացքում: Նշված նյութերից 14,388-ը նախապատրաստվել են **մարդու դեմ ուղղված** հանցագործությունների դեպքերով, որը 1,044-ով ավելի է, քան 2013թ. ընթացքում, 10,587-ը՝ **սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված** հանցագործությունների դեպքերով, որը 1,926-ով ավելի է, քան 2013թ. ընթացքում և 7,090-ը՝ **ընդհանուր բնույթի հանցագործությունների** դեպքերով, որը 782-ով պակաս է, քան 2013թ. ընթացքում:

2014թ. նախապատրաստված 32,065 նյութից 9,591-ով կամ 29.9%-ով հարուցվել է քրեական գործ: Ընդ որում, **մարդու դեմ ուղղված հանցագործությունների** դեպքերով նախապատրաստված 14,388 նյութից քրեական գործ է հարուցվել 2,010-ով կամ 14%-ով, **սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված** հանցագործությունների դեպքերով նախապատրաստված 10,587 նյութից՝ 6,058-ով կամ 57.2%-ով, իսկ **ընդհանուր բնույթի հանցագործությունների** դեպքերով նախապատրաստված 7,090 նյութից՝ 1,523-ով կամ 21.5%-ով:

Քրեական գործի հարուցումը մերժված 21,143 նյութից 16,297-ով կամ 77.1%-ով (2013թ.՝ 19,087 նյութից 14,527-ով կամ 76.1%-ով) քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացնող հիմքով, իսկ 4,846-ով կամ 22.9%-ով՝ (2013թ.՝ 4,560, 23.9%) ոչ արդարացնող հիմքով: Ընդ որում, մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով մերժված 11,921 նյութից քրեական գործի հարուցումը արդարացնող հիմքով մերժվել է 9,353-ով կամ 78.4%-ով (2013թ.՝ 11,465 նյութից 8933-ով կամ 77.9%-ով), սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով մերժված 4,035 նյութից՝ 2,699-ով կամ 66.9%-ով (2013թ.՝ 3,174 նյութից՝ 2,344-ով կամ 73.8%-ով), իսկ ընդհանուր բնույթի հանցագործությունների դեպքերով մերժված 5,187 նյութից՝ 4,245-ով կամ 81.8%-ով (2013թ.՝ 4,448 նյութից՝ 3,250-ով կամ 73.1%-ով):

Նախապատրաստված նյութերով անցնող անձանցից 90-ը եղել են պաշտոնատար անձինք, 196-ը անչափահաս, 507-ը՝ կին, 278-ը՝ նախկինում դատված, 47-ը՝ օտարերկրացի:

ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից ստուգվել է 21,229 մերժված նյութերով կայացված որոշումների օրինականություն (2013թ. 19,465):

Ստուգման արդյունքում քրեական գործի հարուցումը մերժելու մասին 380 (2013թ.՝ 228) որոշում վերացվել է: Նշված 380 նյութից 208-ը նախապատրաստվել է նախաքննության, իսկ 172-ը՝ հետաքննության մարմնի կողմից:

2014թ. ընթացքում նախապատրաստված նյութերի նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելիս դատախազների կողմից տրվել է 140 (2013թ.՝ 339) ցուցում:

2014թ. ընթացքում դատախազական հսկողություն է իրականացվել **մարդու, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի** հանցագործությունների դեպքերի վերաբերյալ հարուցված և վարույթը ավարտված 5,102 (2013թ.՝ 4,434) քրեական գործի նկատմամբ, այսինքն՝ աճը կազմել է 668 քրեական գործ: Նշված 5,102 քրեական գործից 1,725-ը (2013թ.՝ 1,040) քննվել է **մարդու դեմ ուղղված հանցագործությունների** դեպքերով, 2,128-ը (2013թ.՝ 1,372)՝ **սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված**

հանցագործությունների դեպքերով, 1,249-ը (2013թ.՝ 2,022)՝ **ընդհանուր բնույթի հանցագործությունների** դեպքերով:

2014թ. ընթացքում ավարտված 5,102 (2013թ.՝ 4,434) քրեական գործից 1,794-ը (2013թ.՝ 1,739) կամ 35.2%-ը (2013թ.՝ 39.2%)՝ 2,263 (2013թ.՝ 2,195) անձանց վերաբերյալ ուղարկվել է դատարան, 3,264-ը (2013թ.՝ 2,660) կամ 64%-ը (2013թ.՝ 60%) կարճվել է, այդ թվում՝ 1,654-ը (2013թ.՝ 1,010)՝ արդարացնող, իսկ 1,610-ը (2013թ.՝ 1,650)՝ ոչ արդարացնող հիմքով, 44-ը (2013թ.՝ 35) կամ 0.8%-ն (2013թ.՝ 0.8%) ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ:

ՀՀ դատախազության կողմից ստուգվել է 6,570 (2013թ.՝ 5,290) քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման օրինականություն, որոնցից 356-ով (2013թ.՝ 139) քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումները վերացվել են:

2014թ. ընթացքում 5,213 (2013թ.՝ 3,161) քրեական գործի վարույթ կասեցվել է, որոնցից՝ 3,441-ը որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու, 1,723-ը՝ մեղադրյալի հետախուզման, 52-ը՝ այլ հիմքով:

ՀՀ դատախազության կողմից ստուգվել է 9,910 (2013թ.՝ 7,860) քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումների օրինականություն, որոնցից 373-ով (2013թ.՝ 363) որոշում է կայացվել վարույթը կասեցնելու մասին որոշումը վերացնելու մասին:

2014թ. ընթացքում քրեական գործերով դատախազների կողմից տրվել է 1,737 (2013թ.՝ 1308) գրավոր ցուցում: Դրանց դեմ բերվել է 35 բողոք (2013թ.՝ 5), որոնցից 1-ը (2013թ.՝ 2) բավարարվել է:

Քրեական գործերով տրված ցուցումները հիմնականում վերաբերել են նախաքննության լրիվությունը, բազմակողմանիությունը և օբյեկտիվությունը ապահովելուն ուղղված քննչական գործողություններ կատարելուն, մեղադրյալների արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալուն, ինչպես նաև նախաքննության և հետաքննության մարմինների արդյունավետ համագործակցությունն ապահովելուն:

2014թ. ընթացքում 63 քրեական գործ դատախազի կողմից վերադարձվել է լրացուցիչ նախաքննության (2013թ.՝ 29): Լրացուցիչ նախաքննության արդյունքում 33-ը (2013թ.՝ 14) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 21-ը՝ ընթացքի մեջ է, 9-ը՝ (2013թ.՝ 2) կարճվել է, որոնցից 6-ը՝ արդարացնող, 3-ը՝ ոչ արդարացնող հիմքով:

Մինչդատական վարույթում ընդունված որոշումներով նյութերով քրեական գործերի հարուցումը մերժելու մասին 28 (2013թ.՝ 22) որոշում է վերացվել դատարանի կողմից:

Դատարանների կողմից վերացվել է քրեական գործի վարույթը կարճելու 18 (2013թ.՝ 13) և կասեցնելու 3 որոշում:

Հաշվետու ժամանակաշրջանում դատախազական հսկողության ոլորտների հետ կապված կատարվել է 4 ամփոփում**:** Դրանք են.

«2014թ. 1-ին կիսամյակում ամփոփվել է 2013թ. ընթացքում ՀՀ քր. Օր.-ի 104-րդ և 34-104-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության վիճակը, ինչպես նաև ՀՀ քր. Օր.-ի 34-104-րդ և 112-րդ հոդվածներով

նախատեսված արարքների քրեաիրավական որակման տարանջատման հիմնախնդիրները:»:

«2014թ. 1-ին կիսամյակում ամփոփվել է նաև 2013թ. ընթացքում ՀՀ քր. Օր.-ի 178-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների քրեաիրավական որակման հետ կապված հիմնախնդիրների, ինչպես նաև հանցագործությունների վերաբերյալ նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության պրակտիկան:»:

«2014թ. 2-րդ կիսամյակում ամփոփվել է 2013թ. ընթացքում ՀՀ քր. Օր.-ի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության վիճակը:»:

«2014թ. 2-րդ կիսամյակում ամփոփվել է 2014թ. 9 ամսվա ընթացքում արձանագրված սպանության, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, ավազակության և գողության դեպքերով դատախազական ներգործության միջոցներ ձեռնարկելու պրակտիկան:»:

2014թ. ընթացքում դատախազների կողմից վարույթից հեռացվել է հետաքննություն և նախաքննություն իրականացնող 90 (2013թ.՝ 49) անձ, որոնցից 26-ը (2013թ.՝ 17) վարույթից հեռացվել են հետաքննության և նախաքննության ժամկետները խախտելու համար:

2014թ. ընթացքում արձանագրվել է նախաքննության և հետաքննության մարմինների աշխատակիցների կողմից թույլ տրված 135 (2013թ.՝ 133) իրավախախտում, որոնցից 26-ը (2013թ.՝ 36) կապված են եղել հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման, գրանցման, հաշվառման և ընթացքը լուծելու հետ, այդ թվում՝ 4-ը (2013թ.՝ 9)՝ նյութերով քրեական գործի հարուցումն անհիմն մերժելու, 11-ը (2013թ.՝ 4)՝ նյութերն անհիմն կարգագրին կցելու, 1-ը (2013թ.՝ 1)՝ դեպքը չգրանցելու համար, 104-ը (2013թ.՝ 90)՝ հետաքննության և նախաքննության ընթացքի հետ, այդ թվում՝ 28-ը (2013թ.՝ 29)՝ հետաքննության և նախաքննության կատարման ժամկետները խախտելու համար:

2014թ. ընթացքում հետաքննություն և նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 128 (2013թ.՝ 57) միջնորդություն, որոնցից 23-ը (2013թ.՝ 12) կապված են եղել հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման, գրանցման, հաշվառման և ընթացքը լուծելու հետ, 102-ը (2013թ.՝ 41)՝ հետաքննության և նախաքննության ընթացքի հետ, 3-ը (2013թ.՝ 4)՝ այլ:

Դատախազների կողմից ներկայացված միջնորդություններով անցկացված ծառայական քննությունների արդյունքում հետաքննություն և նախաքննություն իրականացնող 58 (2013թ.՝ 15) անձ ենթարկվել է կարգապահական տույժի, 1-ը (2013թ.՝ 0)՝ քրեական պատասխանատվության:

2014թ. ընթացքում քրեական գործերով և նյութերով պետական, տեղական ինքնակառավարման և այլ մարմիններին դատախազների կողմից ներկայացվել է 96 (2013թ.՝ 142) հաղորդում-միջնորդություն, որոնցից 41-ը նախաքննության և հետաքննության ընթացքի, 6-ը՝ հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման, գրանցման, հաշվառման և ընթացքը լուծելու վերաբերյալ, 49-ը՝ այլ:

2014թ. ընթացքում արձանագրվել է անչափահասների կողմից կատարված 389 (2013թ.՝ 418) հանցագործության դեպք:

***2) Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի վերաբերյալ:***

Եթե 2013թ. ընթացքում իրավասու մարմինների կողմից նախապատրաստվել է կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված 1,698 նյութ, որոնցից 502-ով հարուցվել է քրեական գործ, ապա 2014 թ. ընթացքում նախապատրաստվել է կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված 1,462 նյութ կամ նախորդ տարվա համեմատությամբ 236-ով պակաս: Դրանցից 666-ով հարուցվել է քրեական գործ, որը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 164-ով:

Հաշվետու ժամանակահատվածում 765 (2013թ.՝ 1,106) նյութով քրեական գործի հարուցումը մերժվել է, որոնցից 744-ը (2013թ.՝ 914)՝ արդարացման, իսկ 21-ը (2013թ.՝ 192)՝ ոչ արդարացման հիմքով՝ գերակշռությամբ պատճառված նյութական վնասները հատուցելու հիմքով:

Քրեական հետապնդում իրականացնող բոլոր մարմինների կողմից նախորդ տարիներից փոխանցվածների հետ 2014թ. ընթացքում քննվել է ընդամենը 1,049 (2013թ.՝ 768) քրեական գործ:

2014թ. ընթացքում հարուցված 666 կոռուպցիոն բնույթի քրեական գործերից 53-ը (2013թ.՝ 71) վերաբերել է ՀՀ քր. Օր.-ի 179-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված՝ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված հափշտակություններին, 86-ը՝ (2013թ.՝ 145) ՀՀ քր. Օր.-ի 205-րդ հոդվածով նախատեսված՝ հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելուն, 31 (2013թ.՝ 28) քրեական գործ՝ ՀՀ քր. Օր.-ի 214-րդ հոդվածով նախատեսված՝ առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելուն, 88-ը (2013թ.՝ 57)՝ ՀՀ քր. Օր.-ի 308-րդ հոդվածով նախատեսված՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելուն, 44-ը (2013թ.՝ 23)՝ ՀՀ քր. Օր.-ի 311-րդ հոդվածով՝ կաշառք ստանալուն, 7-ը (2013թ.՝ 5)՝ ՀՀ քր. Օր.-ի 311[1]-րդ հոդվածով՝ հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալուն, 42-ը (2013թ.՝ 26)՝ ՀՀ քր. Օր.-ի 314-րդ հոդվածով՝ պաշտոնեական կեղծիքին և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում ըստ էության ավարտվել է կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված 524 (2013թ.՝ 348) գործ, 401 (2013թ.՝ 225) քրեական գործի վարույթ կարճվել է, 322-ը (2013թ.՝ 174)՝ արդարացման, 79-ը (2013թ.՝ 51)՝ ոչ արդարացման հիմքով:

Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված 123 քրեական գործով 45 անձ (2013թ.՝ 123 գործ, 41 անձ) գտնվել է նախնական կալանքի տակ:

Ընթացք տրված 38 քրեական գործով 27 անձի վերաբերյալ վարույթները կասեցվել են (2013թ.՝ 24), որոնցից 27-ով (2013թ.՝ 16)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, 11-ը՝ այլ հիմքով:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հետախուզման մեջ գտնվելու պատճառով կասեցված գործերից 9-ը (2013թ.՝ 7) վերաբերել են ՀՀ քր. Օր.-ի 205-րդ հոդվածով

նախատեսված՝ հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքերին:

Հաշվետու ժամանակաշրջանում նախորդ ժամանակահատվածից փոխանցված գործերի հետ անավարտ է մնացել 555 (2013թ.՝ 309) քրեական գործ, որոնցով 15 (2013թ.՝ 23) անձ գտնվում է կալանքի տակ:

Ոչ արդարացման հիմքով կարճված քրեական գործերով հանցագործություններով պատճառված նյութական վնասը կազմել է 1,436,226,000 (2013թ.՝ 438,289,000) դրամ, որից վերականգնվել է 849,681,000 (2013թ.՝ 328,685,000) դրամ կամ վերականգնումը կազմել է 60% (2013թ.՝ 75%), իսկ մերժված նյութերով պատճառված նյութական վնասը կազմել է 1,480,423,000 (2013թ.՝ 6,866,514,000) դրամ, որից վերականգնվել է 1,480,423,000 (2013թ.՝ 6,512,246,000 դրամ) դրամ կամ վերականգնումը կազմել է 100% (2013թ.՝ 94.8%):

Հաշվետու ժամանակահատվածում քննիչին վարույթից հեռացնելու 1 (2013թ.՝ 1) որոշում է կայացվել՝ դատախազի գրավոր ցուցումի պահանջները չկատարելու պատճառաբանությամբ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման ոչ բարձր աստիճանը և նախապատրաստված նյութերի քանակը պայմանավորված է այդ բնույթի հանցագործությունների լատենտայնությամբ, ինչպես նաև բացահայտման ուղղությամբ իրավապահ մարմինների չհամագործակցված աշխատանքների արդյունքով:

Ըստ բնագավառի փորձագետների՝ կոռուպցիոն երևույթների հաղթահարմանն ուղղված պատասխանատվության մեխանիզմների կիրառումը ենթադրում է իրավապահ մարմինների համատեղ և ներդաշնակ աշխատանք՝ միտված մեկ ընդհանուր նպատակի՝ կոռուպցիոն երևույթների բացահայտմանն ու դատապարտմանը:

Այդ խնդրին միտված՝ հաշվետու տարում հրավիրվել են խորհրդակցություններ, ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցառումներ՝ կոռուպցիոն բնույթի երևույթների բացահայտման նպատակով խթանելու հասարակության ակտիվությունը, այդ բնագավառի աշխատանքները դարձնելու առավել թափանցիկ ու մատչելի:

Կատարված ուսումնասիրությունները միաժամանակ վկայում են, որ կոռուպցիոն երևույթներն առավել շատ տարածված են բնակչության սպասարկմանն առնչվող մարմինների ստորին և միջին պաշտոնատար անձանց շրջանում և, այդ պատճառով էլ, նման երևույթների բացահայտմանը զուգահեռ, որպես կանխարգելիչ աշխատանքների միջոց հատկապես կարևորվել է դրանց կատարմանը նպաստող պայմանների ու պատճառների կապակցությամբ անհրաժեշտ միջնորդագրերի հղումը:

Նկատի ունենալով, որ քաղաքացիներն առօրյա կյանքում հաճախակի շփվում են միջին օղակների պաշտոնյաների հետ, որտեղ բարձր են կոռուպցիոն ռիսկերը, ուստի անհրաժեշտ է հենց այդ ոլորտում կոռուպցիայի, դրա ծնող պայմանների ու պատճառների կանխարգելման քայլեր ձեռնարկել:

ՀՀ դատախազությունը որդեգրել է այն սկզբունքը, որ հանցագործությունների դեմ տարվող պայքարի ակտիվացումը, զուգակցված արդարացի պատիժների հետ, նախ և առաջ ենթադրում է գործերի խորացված, բազմակողմանի և օբյեկտիվ քննության ապահովում, հանցավոր դեպքերի և

հանցագործության բոլոր մասնակիցների բացահայտում, առնչվող բոլոր հանցավոր արարքների հայտնաբերում, քննության նկատմամբ պահանջկոտության բարձրացում, կանխիչ աշխատանքների որակական մակարդակի ապահովում, ներգերատեսչական տարբեր ծառայությունների և իրավապահ բոլոր մարմինների համագործակցություն, ինչպես նաև հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների բացահայտում ու ներգործության համարժեք կիրառում:

Խիստ մտահոգիչ են այն դեպքերը, երբ որպես տնտեսվարող սուբյեկտներ և հարկային պարտավորություններից խուսափողներ դատի են տրվում ոչ իրական անձինք: Նման դեպքերում կարևոր է բացահայտել և քրեական պատասխանատվության ենթարկել իրական կազմակերպիչներին, օժանդակողներին:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների ամբողջ ծավալի բացահայտման, հատկապես հարկային և մաքսային հանցագործությունների գործերով իրական կազմակերպիչներին ու օժանդակողներին հայտնաբերելու և քրեական պատասխանատվության ենթարկելու հարցերում դեռևս, բավարար չեն օպերատիվ-հետախուզական և քննչական ծառայությունների համագործակցությունն ու բացահայտման հնարքների օգտագործումը:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների, հատկապես՝ կաշառքի գործերով քննության ընթացքում հաղորդումներ և հայտարարություններ տված անձինք, երբեմն այս կամ այն պատճառաբանություններով և արտաքին ազդեցությունների հետևանքով, հրաժարվում են իրենց հայտարարություններից ու հանցանքը հաստատող իրենց ցուցմունքներից՝ իրենց հետագա վարքագծով փակուղու առաջ կանգնեցնելով քրեական հետապնդում իրականացնող մարմիններին:

Այս դեպքերը բազմիցս քննարկվել են, սակայն, քանի որ խնդիրը դեռևս չի լուծվել, անհրաժեշտ է, որ նման դեպքերում, երբ քրեական գործի մյուս ապացույցները դառնում են անբավարար, քննության առնել սուտ մատնություն կատարելու կամ սուտ ցուցմունք տալու համար նման անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Սա, առաջին հերթին, օրենքի պահանջն է, և երկրորդ՝ քաղաքացիներին զերծ կպահի անհիմն մեղադրանքներ ներկայացնելու ու անպատիժ մնալու սովորույթից կամ իրական փաստերը նենգափոխելու վարքագծից:

### *3) Հատկապես կարևոր գործերով քննության ոլորտ*

2014 թվականի ընթացքում հսկողություն է իրականացվել նախապատրաստված 611 նյութի (2013թ.՝ 430), այդ թվում՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 91 (2013թ.՝ 40), սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 101 (2013թ.՝ 179), ընդհանուր բնույթի հանցագործություններով՝ 130 (2013թ.՝ 73), թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություններով՝ 5 (2013թ.՝ 1), կոռուպցիոն հանցագործություններով՝ 284 (2013թ.՝ 137) նյութի նկատմամբ, իսկ 337 (2013թ.՝ 226) նյութով հարուցվել է քրեական գործ:

Ստուգվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 262 (2013թ.՝ 187) որոշման օրինականությունը: 215 (2013թ.՝ 157) նյութով քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման, իսկ 47 նյութով (2013թ.՝ 30)՝ ոչ արդարացման հիմքով:

Նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ 26 որոշում անօրինական և անհիմն լինելու հիմքով վերացվել է, որոնցով հարուցվել են քրեական գործեր:

Հաշվետու ժամանակաշրջանում հատկապես կարևոր գործերով քննության մասով ավարտված նյութերի նախապատրաստման նկատմամբ դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել 697 (2013թ.՝ 430) քրեական գործի, այդ թվում՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 111 (2013թ.՝ 40), սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 268 (2013թ.՝ 179), ընդհանուր բնույթի հանցագործություններով՝ 130 (2013թ.՝ 73), թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով՝ 15 (2013թ.՝ 1), կոռուպցիոն հանցագործություններով՝ 273 (2013թ.՝ 137) գործ նախաքննության նկատմամբ:

Ավարտվել է 339 (2013թ.՝ 150) քրեական գործի, այդ թվում՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 43 (2013թ.՝ 13), սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 99 (2013թ.՝ 82), ընդհանուր բնույթի հանցագործություններով 42 (2013թ.՝ 24), թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով՝ 3, կոռուպցիոն հանցագործություններով՝ 152 (2013թ.՝ 31) գործի նախաքննություն:

Մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 79 (2013թ.՝ 47) քրեական գործ՝ 168 (2013թ.՝ 56) անձի նկատմամբ, որոնցից՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 9 (2013թ.՝ 5) գործ՝ 12 (2013թ.՝ 7) անձի, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 29 (2013թ.՝ 13) գործ՝ 73 (2013թ.՝ 15) անձի, ընդհանուր բնույթի հանցագործություններով՝ 17 (2013թ.՝ 12) գործ՝ 37 (2013թ.՝ 19) անձի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով՝ 3 գործ՝ 6 անձի, կոռուպցիոն հանցագործություններով՝ 21 (2013թ.՝ 17) գործ՝ 40 (2013թ.՝ 19) անձի նկատմամբ:

Ստուգվել է մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 34 (2013թ.՝ 8), սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 65 (2013թ.՝ 69), ընդհանուր բնույթի հանցագործություններով՝ 22 (2013թ.՝ 11), կոռուպցիոն հանցագործություններով՝ 125 (2013թ.՝ 14) քրեական գործերի վարույթը կարճելու մասին 246 (2013թ.՝ 102) որոշման օրինականությունը:

Նշված քրեական գործերից 210-ը (2013թ.՝ 94) կարճվել է արդարացման, իսկ 36-ը՝ (2013թ.՝ 8) ոչ արդարացման հիմքով:

Վերացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին 69 (2013թ.՝ 1) որոշում:

Ստուգվել է մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 6 (2013թ.՝ 1), սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով՝ 13 (2013թ.՝ 4), ընդհանուր բնույթի հանցագործություններով՝ 8 (2013թ.՝ 3), կոռուպցիոն հանցագործություններով՝ 16 (2013թ.՝ 3) քրեական գործի վարույթը կասեցնելու մասին 43 (2013թ.՝ 11) որոշման օրինականություն: Նշված քրեական գործերից 27-ը (2013թ.՝ 5) կասեցվել է ՀՀ քր.

դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 16-ը՝ (2013թ.՝ 6) 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով:

Վերացվել է վարույթը կասեցնելու մասին 5 (2013թ.՝ 11), որոշում:

Դատախազների կողմից քրեական գործերով տրվել է 42 գրավոր ցուցում:

13 (2013թ.՝ 2) քրեական գործով չի հաստատվել մեղադրական եզրակացությունը՝ թերի քննություն կատարելու պատճառաբանությամբ: Լրացուցիչ քննություն կատարելուց հետո 9 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 2-ի վարույթը կարճվել է, 2 գործի նախաքննությունը շարունակվում է:

Դատարանների կայացրած 3 (2013թ.՝ 0) որոշումով պարտավորեցվել է վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու որոշումները: Հարուցված 3 քրեական գործով կատարվում է նախաքննություն:

Քրեադատավարական խախտումներ թույլ տալու համար 2 (2013թ.՝ 0) քննիչ դատախազների որոշումներով հեռացվել է վարույթից:

2014 թվականի ընթացքում ավարտված քրեական գործերով պետությանը պատճառվել է 89,875,778 (2013թ.՝ 675520030) դրամի վնաս, որից վերականգնվել է 49,301,238 (2013թ.՝ 135466670 ) դրամ:

2014 թվականի ընթացքում այս ոլորտում քննվել է ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածով հարուցված 14 քրեական գործ, որոնցից 4-ը՝ 242-րդ հոդվածի 2-րդ մասով: Քրեական գործերից 2-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, որոնցից 1-ը՝ 242-րդ հոդվածի 2-րդ մասով: 6 գործի վարույթ կարճվել է, որոնցից 4-ը՝ արդարացման հիմքով: 4 գործ ուղարկվել է այլ մարմին, 2 գործի նախաքննությունը շարունակվում է: 63-ով նյութերով մերժվել է քրեական գործի հարուցումը, որոնցից 41-ը՝ արդարացման, իսկ 22-ը՝ ոչ արդարացման հիմքով:

***4) ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերի վերաբերյալ.***

ՀՀ գլխավոր դատախազի 11.09.2014թ. N 75 հրամանով ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբեռհանցագործությունների գործերով վարչությանն է միացվել ՀՀ գլխավոր դատախազության թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների գործերով բաժինը՝ վերանվանվելով ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչություն, և վերջինիս են փոխանցվել միացված կառուցվածքային ստորաբաժանման հսկողության տակ գտնվող՝ մինչդատական և դատական վարույթներում գտնվող նյութերն ու գործերը:

2014թ. ընթացքում ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով հսկողություն է իրականացվել 236 (2013թ.՝ 207) նյութի նկատմամբ, որոնցից 45-ը (2013թ.՝ 51)՝ ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներում, 191-ը (2013թ.՝ 183)՝ ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում:

ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում նախապատրաստված 191 նյութից 185-ով (2013թ.՝ 131) հարուցվել է քրեական գործ, 6-ով (2013թ.՝ 25) մերժվել է քրեական գործի հարուցումը, որոնցից հանցակազմի կամ հանցադեպի բացակայության հիմքով՝ 4-ը (2013թ.՝ 8), ոչ արդարացման հիմքով՝ 2-ը (2013թ.՝ 17):

ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներում նախապատրաստված 45 (2013թ.՝ 51) նյութից 43-ով (2013թ.՝ 46) հարուցվել է քրեական գործ, 2-ով (2013թ.՝ 5) մերժվել է քրեական գործի հարուցումը հանցակազմի բացակայության հիմքով:

Նյութերով դատավարական ղեկավարումն իրականացնող դատախազների կողմից տրվել է 15 (2013թ.՝ 27) գրավոր ցուցում:

Հաշվետու ժամանակահատվածում դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել 394 (2013թ.՝ 270) քրեական գործով, որոնցից 285-ը՝ ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական (2013թ.՝ 221), 77-ը (2013թ.՝ 47)՝ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ ՔԳ վարչությունում, 2-ը՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական, 30-ը (2013թ.՝ 2)՝ ՀՀ ֆինանսների նախարարության քննչական վարչություններում:

2014թ. հունվարի 1-ի դրությամբ անավարտ է 123 քրեական գործ (2013թ.՝ 72), վարույթ է ընդունվել 213 (2013թ.՝ 178) քրեական գործ, որոնցից հարուցվել է 177-ը (2013թ.՝ 131), այլ մարմիններից ստացվել է 23-ը (2013թ.՝ 27), վերսկսվել է նախկինում վարույթը կասեցված կամ կարճված 7-ը (2013թ.՝ 18) և ընդամենն ավարտվել է 85 (2013թ.՝ 83) քրեական գործի վարույթ, որոնցից 70-ը (2013թ.՝ 58) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարաններ՝ ըստ էության քննելու, 15 (2013թ.՝ 25) քրեական գործի վարույթ կարճվել է, քննչական ենթակայության կարգով այլ մարմիններ է ուղարկվել 27-ը (2013թ.՝ 15), 15 (2013թ.՝ 10) քրեական գործի վարույթ միացվել է, իսկ 35 (2013թ.՝ 41) քրեական գործի վարույթ կասեցվել է, այդ թվում՝ մեղադրյալների քննությունից թաքնվելու հիմքով՝ 17-ը (2013թ.՝ 18), այլ հիմքերով՝ 1-ը (2013թ.՝ 5), իսկ հանցագործությունը չբացահայտվելու հիմքով՝ 17-ը (2013թ.՝ 18):

Հաշվետու ժամանակաշրջանի վերջում անավարտ է մնացել 123 (2013թ.՝ 72) քրեական գործ:

Վարույթը կարճված 15 (2013թ.՝ 25) քրեական գործից հանցակազմի բացակայության հիմքով կարճվել է 6-ը (2013թ.՝ 9), համաներման ակտով՝ 4 գործ 5 անձի նկատմամբ (2013թ.՝ 4 գործ, 5 անձ), իրադրության փոփոխման հիմքով՝ 1 գործ 1 անձի նկատմամբ (2013թ.՝ 6 գործ, 6 անձ), վաղեմության ժամկետն անցնելու հիմքով՝ 4-ը (2013թ.՝ 4):

2014թ. ընթացքում 3 քրեական գործով վերացվել է վարույթը կարճելու 1 և վարույթը կասեցնելու մասին 2 որոշում և ուղարկվել ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչություն՝ նախաքննությունը շարունակելու:

ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում 2014թ. ընթացքում քննված քրեական գործերով դատախազական հսկողության և դատավարական ղեկավարման ընթացքում տրվել է 95 (2013թ.՝ 79) գրավոր ցուցում, որոնցից ոչ մեկը չի բողոքարկվել:

ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում 2014թ. ընթացքում քննվող քրեական գործերով քննիչների կողմից դատարան է ներկայացվել կալանքի՝ 54 (2013թ.՝ 86), խուզարկության՝ 34 (2013թ.՝ 212) միջնորդություն:

Դատարան ներկայացված կալանքի 54 (2013թ.՝ 85) միջնորդությունն էլ բավարարվել է:

Հաշվետու ժամանակահատվածում դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել թմրանյութերի ապօրինի շրջանառության և թմրանյութերի մաքսանենգության համակցության դեպքերով 32 (2013թ.՝ 13) քրեական գործով՝ 43 (2013թ.՝ 17) անձի նկատմամբ, որոնցից 13 գործ 32 անձի նկատմամբ՝ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ ՔԳՎ վարչությունում, 19 գործ 11 անձի նկատմամբ՝ ՀՀ ֆինանսների նախարարության քննչական վարչությունում):

Նշված քրեական գործերից 9-ը (2013թ.՝ 4) 22 (2013թ.՝ 6) անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է առաջին ատյանի դատարաններ՝ ըստ էության քննելու, 5 գործ 17 անձի նկատմամբ ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ ՔԳ վարչություն, իսկ 4 գործ 5 անձի նկատմամբ ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարության քննչական վարչություն:

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ ՔԳ վարչությունում քննված 3 (2013թ.՝ 3) գործի վարույթ կասեցվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (հանցագործությունը չբացահայտվելու հիմքով):

Դատարան ուղարկված 4 (2013թ.՝ 5) գործով 4 (2013թ.՝ 12) անձի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, որոնցից 4-ը (2013թ.՝ 10) դատապարտվել է ազատազրկման:

19 (2013թ.՝ 7) անձի նկատմամբ 20 (2013թ.՝ 5) քրեական գործ նախաքննության փուլում է, որոնցից 6 գործ 13 անձի նկատմամբ՝ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ ՔԳ վարչությունում, իսկ 14 գործ 6 անձի նկատմամբ՝ ՀՀ ֆինանսների նախարարության քննչական վարչությունում:

Ուսումնասիրվել և ամփոփվել է 2012-2013թթ. ընթացքում կիբեռհանցագործությունների դեպքերի վերաբերյալ հաղորդումների քննարկման, լուծման, քրեական գործերի հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակի վերաբերյալ հարցը:

Ուսումնասիրության արդյունքները 24.11.2014թ. քննարկվել են ոլորտը համակարգող՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցությունում:

2014թ. ընթացքում անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ քննվել է 2 (2013թ.՝ 0) քրեական գործ:

2014թ. ընթացքում ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում քննված քրեական գործերով ձերբակալվել է 45 (2013թ.՝ 39) անձ:

Անավարտ մնացած քրեական գործերով կալանքի տակ է 40 մեղադրյալ (2013թ.՝ 9):

2014թ. ընթացքում ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում մինչդատական վարույթում ավարտված նյութերով, ընթացիկ և ավարտված քրեական գործերով, ինչպես նաև դատարանում քննված և ավարտված քրեական գործերով պատճառված նյութական վնասը կազմում է 67,525,907,092 (2013թ.՝ 1.439.755.175) դրամ, որից վերականգնվել է 612,921,562 (2013թ.՝ 864.568.653) դրամ:

Պետությանն ընդհանուր առմամբ պատճառվել է 569,737,376 (2013թ.՝ 775.290.864) դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 483,954,479 (2013թ.՝

393.901.473) դրամ, իսկ չվերականգնված մասով համապատասխան միջոցներ են ձեռնարկվում պետությանը պատճառված վնասը վերականգնելու ուղղությամբ:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքին պատճառված վնասը կազմում է 6,182,859,716 (2013թ.՝ 664.464.311) դրամ, որից վերականգնվել է 128,967,083 (2013թ.՝ 470.667.180) դրամ:

2014թ. ընթացքում քրեական գործերով իրավական օգնություն հայցելու մասին օտարերկրյա պետությունների իրավապահ մարմիններից ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ստացվել է 23 (2013թ.՝ 12) միջնորդություն:

2014թ. ընթացքում քրեական գործերով իրավական օգնություն հայցելու մասին օտարերկրյա պետությունների իրավապահ մարմիններին ուղարկվել է 36 (2013թ.՝ 22) միջնորդություն:

Ուղարկված միջնորդություններից 31-ը (2013թ.՝ 5) կատարվել է, 5-ը (2013թ.՝ 17)՝ ընթացքի մեջ է, քանի որ պահանջվել են լրացուցիչ տեղեկություններ:

2014թ. ընթացքում օտարերկրյա պետություններում հայտնաբերվել է 3 (2013թ.՝ 1) հետախուզվող:

2014թ. ընթացքում քրեական հետապնդում իրականացնելու համար օտարերկրյա պետության իրավապահ մարմնին է ուղարկվել 1 (2013թ.՝ 0) քրեական գործ:

***5) ՀՀ ոստիկանության ՔԳՎ, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ՖՆ քննչական վարչության և ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից նախապատրաստվող նյութերի և քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն***

2014 թվականի ընթացքում **ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազը** հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացրել ՀՀ ոստիկանության ՔԳՎ, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ՖՆ քննչական վարչության և ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից նախապատրաստվող նյութերի և քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ, որոնք առավելապես վերաբերել են ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի հետ կապված՝ նրանց կամ հանցակցությամբ կատարած հանցագործություններին: Այսինքն, դրանք առնչվում են ոչ թե ընդհանուր հանցատեսակներին, այլ դրանց սուբյեկտներին, որպիսի պայմաններում հանցագործությունների շարժընթացում և կառուցվածքում արձանագրված փոփոխությունների համընդհանուր պատճառների վերլուծությունն արտահայտվում է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստված նյութերի և քննված քրեական գործերի վիճակագրական տվյալներով:

31 (2013թ.՝ 66) նյութի նախապատրաստման նկատմամբ իրականացվել է դատախազական հսկողություն և վերահսկողություն, որոնցից 4-ով քրեական գործի հարուցումը մերժվել է և ստուգվել է որոշման օրինականությունը, 3-ով հարուցվել է քրեական գործ, իսկ 24 նյութ ուղարկվել է ըստ ենթակայության: Քրեական գործի հարուցումը մերժված 4 նյութից 4-ով էլ հարուցումը մերժվել է արդարացման հիմքով,

իսկ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների դեմ բերվել է 1 բողոք, որը մերժվել է անհիմն լինելու պատճառով: Ոչ անմիջական դատավարական ղեկավարման նյութերով վերացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 6 որոշում և հարուցվել են քրեական գործեր:

2014 թվականի ընթացքում դատախազական հսկողություն և վերահսկողություն է իրականացվել 34 քրեական գործով, որոնցից 9-ը հարուցվել է ընթացիկ տարում, այլ մարմիններից ստացվել է 25-ը: 34 քրեական գործից ավարտվել է 7-ը (կարճվել՝ 7-ը), կասեցվել է՝ 2-ը, ուղարկվել է ըստ ենթակայության՝ 20-ը, միացվել է՝ 1-ը, անավարտ է մնացել՝ 4-ը:

Անմիջական դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության տակ գտնվող գործերով կարճման որոշման դեմ բերվել է 2 բողոք, որոնք 2-ն էլ մերժվել են՝ անհիմն լինելու պատճառով:

Անմիջական դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության տակ չգտնվող գործերով վերացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին 11 որոշում:

2014թ. ընթացքում 2 քրեական գործով վարույթը կասեցվել է՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ) և 2-րդ կետով (մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից, կամ նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ) նախատեսված հիմքերով, որոնցից՝ սեփականության դեմ ուղղված հանցագործություններով՝ 1 գործ, կոռուպցիոն հանցագործություններով՝ 1 գործ:

Հաշվետու ժամանակահատվածում ըստ ենթակայության ուղարկվել է 20 քրեական գործ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է ՀՀ զինված ուժերում մահվան ելքով դեպքերի վերաբերյալ 39 հաղորդում, որոնք քննարկվել և զեկուցվել են ՀՀ գլխավոր դատախազին, իսկ անհրաժեշտության դեպքում պահանջվել և ուսումնասիրվել են նշված դեպքերի վերաբերյալ նախապատրաստվող նյութերն ու քրեական գործերը:

2014 թվականի ընթացքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությունից և ՀՀ քննչական կոմիտեից ստացվել է 23 միջնորդություն՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով քրեական գործ հարուցելը մերժելու, քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործով վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները վերացնելու նպատակահարմարության հարցը քննարկելու խնդրանքով: Դրանք ուսումնասիրվել են, զեկուցվել և ՀՀ գլխավոր դատախազը կայացրել է համապատասխան որոշումները վերացնելու վերաբերյալ 17 որոշում, իսկ միջնորդություններից 6-ը վերադարձվել է՝ վերացումը ոչ նպատակահարմար լինելու պատճառով:

Հանցագործությունների բացահայտմանը խոչընդոտող թերություններն ու բացթողումները վերացնելու համար ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ ոստիկանության ՔԳՎ, ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ ՖՆ քննչական վարչության առջև խնդիր է դրվել՝

-շարունակել նախաքննության արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված աշխատանքները,

-էլ ավելի բարձրացնել քրեական գործերի քննության որակը, պարզել արարքի որակման համար կարևոր նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, բացառել օրենքի խախտմամբ ապացույցների ձեռքբերումը,

-շարունակել հետևողականություն դրսևորել նյութերի նախապատրաստման, քրեական գործերի նախաքննության օրենքով սահմանված ժամկետների պահպանման նկատմամբ, բացառել դրանց անհարկի ձգձգումները,

-քրեական գործերի քննության ընթացքում պարզել յուրաքանչյուր հանցագործություն ծնող պատճառներն ու նպաստող պայմանները և ձեռնարկել համարժեք միջոցներ դրանց վերացման ուղղությամբ, միջնորդագրերի կիրառմամբ համապատասխան մարմինների ղեկավարների ուշադրությունը հրավիրել այդպիսիք վերացնելու անհրաժեշտության վրա,

-կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և նախականխման գործում ձեռնարկել կոնկրետ գործնական միջոցառումներ՝ քննչական ու օպերատիվ-հետախուզական մարմինների ջանքերը միավորելու, այդ բնագավառում նրանց գործունեությունը նպատակային դարձնելու համար,

-ստացված օպերատիվ տվյալների իրացման ժամանակ ուշադրություն դարձնել դրանց հավաստիությանը:

**Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ողջամիտ ժամկետներում նախաքննությանը և դատական քննությանը խոչընդոտող հանգամանք է հանդիսանում ներքոնշյալը.**

Բազմաթիվ մեղադրյալներ, նախաքննության ընթացքում իրենց մեղսագրվող արարքների վերաբերյալ տալով խոստովանական ցուցմունքներ, անգամ ներկայացնելով հետաքննական և քննչական մարմիններին մինչ այդ անհայտ փաստական հանգամանքներ, նախաքննության հետագա ընթացքում կամ դատարանում, քրեական պատասխանատվությունից խուսափելու, ավելի մեղմ պատժի դատապարտվելու ակնկալիքով, հրաժարվում են իրենց նախաքննական ցուցմունքներից՝ ակնհայտ մտացածին պատճառաբանություններ ներկայացնելով այն մասին, որ դրանք տվել են իրենց նկատմամբ կիրառված բռնության արդյունքում:

Նման դեպքերում ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստվում են նյութեր կամ քննվում քրեական գործեր, որի հետևանքով միաժամանակ ծանրաբեռնվում են ծառայության քննիչները, իսկ մեղադրյալների վերաբերյալ քրեական գործերի ընթացքը արհեստականորեն ձգձգվում է՝ մինչև բռնության փաստարկների վերաբերյալ վերջնական որոշման կայացումն ու դրանով պայմանավորված ապացույցների թույլատրելիության հարցի պարզումը: Ուստի ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու և մեղադրյալների վերաբերյալ քննվող քրեական գործերի քննության ձգձգում թույլ չտալու համար նպատակահարմար է բռնության վերաբերյալ տեղեկություն հայտնած անձից հաղորդում ընդունել՝ նախազգուշացնելով ՀՀ քր. օր.-ի 333-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին և հաղորդումն ուղարկել ըստ ենթակայության:

### *3. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ*

ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների դատախազների մասնակցությամբ 2014թ. ընթացքում դատարաններում քննվել և ավարտվել է 1,990 քրեական գործ՝ 2,461 անձի (2013թ.՝ 2,333 գործ, 3,071 անձ) նկատմամբ: Նշված քրեական գործերից 1,725 գործով դատապարտվել է 2,154 անձ (2013թ.՝ 1,954 գործ, 2,593 անձ):

47 քրեական գործով 47 անձի (2013թ.՝ 48 գործով, 48 անձի) նկատմամբ ՀՀ քր. դատ. օր.-ի 464-րդ հոդվածի կարգով կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց:

46 քրեական գործով 59 անձ (2013թ.՝ 37 գործով, 46 անձ) արդարացվել է:

164 քրեական գործ 189 անձի նկատմամբ կարճվել է (2013թ.՝ 283 գործ, 363 անձի նկատմամբ):

8 գործով 12 անչափահասի նկատմամբ դատարանների կողմից կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ:

Դատապարտված անձանցից 91-ը (2013թ.՝ 72-ը) եղել է անչափահաս, 165-ը (2013թ.՝ 222-ը)՝ կին, 343-ը (2013թ.՝ 428-ը)՝ նախկինում դատված, 42-ը (2013թ.՝ 46-ը)՝ օտարերկրացի:

2014թ. ընթացքում դատապարտված անչափահասների թիվը 2013թ. համեմատությամբ աճել է 19-ով կամ 1.4%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում դատարաններում քննված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնասն ընդհանուր առմամբ կազմել է 3,696,548,387 (2013թ.՝ 4,213,868,005) դրամ, որից 1,007,025,234 դրամը՝ (2013թ.՝ 1,928,524,884 դրամ), պետությանը, 245,091,641 դրամը՝ (2013թ.՝ 824,778,286 դրամ), իրավաբանական անձանց, 2,444,431,512 դրամը՝ (2013թ.՝ 1,465,549,195 դրամ), ֆիզիկական անձանց:

Դատական քննությամբ ավարտված գործերով վերականգնվել է ընդամենը 997,207,621 դրամ (2013թ.՝ 746,587,196 դրամ), որից 514,677,812 դրամը՝ (2013թ.՝ 316,708,398 դրամ) պետությանը, 45,719,613 դրամը՝ (2013թ.՝ 160,422,663 դրամ) իրավաբանական անձանց և 436,810,196 դրամը՝ (2013թ.՝ 269.456.135 դրամ) ֆիզիկական անձանց պատճառված վնասներից:

2014թ. ընթացքում դատարաններում քննված և ավարտված 1,990 (2013թ.՝ 2335) քրեական գործից 641-ը (2013թ.՝ 663) եղել է ոչ մեծ ծանրության՝ 721 (2013թ.՝ 821) անձի նկատմամբ, 740-ը՝ (2013թ.՝ 944) միջին ծանրության՝ 985 (2013թ.՝ 1255) անձի նկատմամբ, 553-ը՝ (2013թ.՝ 663) ծանր՝ 693 (2013թ.՝ 891) անձի նկատմամբ և 56-ը՝ (2013թ.՝ 65) առանձնապես ծանր՝ 62 (2013թ.՝ 106) անձի նկատմամբ:

Դատապարտված 2,154 անձից 1,110-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում, որը կազմում է դատապարտվածների 51.5%-ը (2013թ. 2,593 անձից 1,420-ը (54.7%)), այսինքն՝ դատապարտվածների մեջ ազատազրկման դատապարտվածների թիվը 2014թ. ընթացքում նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 3.2%-ով:

Ցմահ ազատազրկման որևէ մեկը չի դատապարտվել (2013թ.՝ 4 անձ):

Ընդհանուր դատապարտվածների մեջ կալանքի է դատապարտվել 76 (2013թ.՝ 75) անձ, իսկ տուգանքի՝ 553 (2013թ.՝ 604) անձ: Այսինքն՝ կալանքի դատապարտված անձանց թիվն աճել է 1-ով կամ 0.6%-ով, իսկ տուգանքի դատապարտված անձանց թիվը 2013թ. համեմատությամբ նվազել է 2.4%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտված 1,990 գործից 6 քրեական գործով մեղադրողները դատարանում հրաժարվել են մեղադրանքից և այդ հիմքով 6 անձանց նկատմամբ դատարանը կայացրել է արդարացման դատավճիռ, որոնք կազմում են մեղադրվող անձանց 0.3%-ը (2013թ.՝ նույն հիմքով 2,333 գործից 11 քրեական գործով արդարացվել է 12 անձ (0.5%)), այսինքն՝ մեղադրողների կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքերը հաշվետու տարում նվազել են 0.2%-ով:

Դատարանների կողմից ազատազրկման հետ չկապված պատիժների է դատապարտվել նախնական կալանքի տակ գտնվող 57 (2013թ.՝ 47) անձ, որոնք ազատ են արձակվել դատական նիստերի դահլիճից:

Դատարանների կողմից նախնական կալանքի տակ չգտնվող 323 (2013թ.՝ 368) անձ դատապարտվել է ազատազրկման:

Հաշվետու ժամանակահատվածում դատարաններում քննված 724 գործով 1,254 անձի վերաբերյալ կիրառվել է դատական քննության արագացված կարգ, որը կազմում է քննված գործերի 36.4%-ը (2013թ.՝ 794 գործ, 967 անձ (34%)), այսինքն՝ 2013թ. համեմատ արագացված դատական քննության կարգի կիրառմամբ ավարտված քրեական գործերի տեսակարար կշիռն ավելացել է 2.4%-ով:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարաններում քննված և ավարտված քրեական գործերով մեղադրողները հիմնականում առարկել են դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ, ինչը պայմանավորված է եղել հիմնականում մեղադրյալների կողմից իրենց առաջադրված մեղադրանքում մեղավոր չճանաչելու, վերջիններիս հանցակիցների բացահայտված չլինելու, հանցագործությամբ պատճառված գույքային վնասը չվերականգնելու, մեղադրյալների անչափահաս լինելու հանգամանքներով:

2014թ. դատական քննության ընթացքում առաջադրված մեղադրանքը խստացնելու կամ մեղմացնելու առումով մեղադրողները միջնորդություններ են ներկայացրել 19 քրեական գործով՝ 19 անձի վերաբերյալ (2013թ.՝ 39 գործով, 51 անձի վերաբերյալ):

Ինչպես վերը նշվեց, 2014թ. ընթացքում 46 քրեական գործով արդարացվել է 59 անձ: Նրանք կազմում են մեղադրվող անձանց 2.4%-ը: Հիշյալ անձանցից 10-ը մեղադրվել է ոչ մեծ ծանրության, 23-ը՝ միջին ծանրության, 24-ը՝ ծանր և 2-ը՝ առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու մեջ (2013թ.՝ 37 գործ, 46 անձ (1.5%)), այսինքն՝ 2013թ. համեմատությամբ 2014թ. արդարացված անձանց ընդհանուր տեսակարար թիվն աճել է 0.9%-ով:

Արդարացման դատավճիռների դեմ մեղադրողների կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան է ներկայացվել 42 բողոք, որոնցից բավարարվել է 7-ը, մերժվել՝ 27-ը, 8-ի քննությունն ընթացքի մեջ է:

Արդարացման դատավճիռներն ուժի մեջ թողնելու վերաբերյալ որոշումների դեմ բերվել է 6 վճռաբեկ բողոք, որոնցից 4-ը մերժվել է, 2-ի քննությունն ընթացքի մեջ է:

2014թ. ընթացքում քննված քրեական գործերով 415 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածը և պատիժը պայմանականորեն չի

կիրառվել, որը կազմում է դատապարտված անձանց 19.2%-ը (2013թ.՝ 490 (18.9%)): Նրանցից 107-ը մեղադրվել է ոչ մեծ ծանրության, 196-ը՝ միջին ծանրության, 112-ը՝ ծանր հանցագործություններ կատարելու մեջ: Հիշյալ գործերով դատարանները և մեղադրողները հիմնականում հաշվի են առել հանցագործության բնույթը, վտանգավորության աստիճանը, հանցանք կատարած անձի կողմից պատճառված վնասի հատուցումը, հանցավորի խնամքին անչափահաս երեխաներ լինելու և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող այլ հանգամանքները:

2013թ. համեմատությամբ 2014թ. ընդհանուր դատապարտված անձանց քանակի մեջ ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չկիրառված դատապարտյալների թիվն աճել է 0.3%-ով:

415 անձից 209 ամբաստանյալի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել մեղադրողների միջնորդության հիման վրա: Մեղադրողների կողմից 88 ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառման անթույլատրելիության հիմքով բերվել են վերաքննիչ բողոքներ, որոնցից 64-ը մերժվել է, 7-ը բավարարվել է, 17 բողոքի քննությունն ընթացքի մեջ է:

Մեղադրողների կողմից ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառման դեմ ներկայացվել է 4 վճռաբեկ բողոք, որոնք վարույթ չեն ընդունվել:

Հաշվետու ժամանակահատվածում 6 անձի նկատմամբ պատիժ նշանակելիս կիրառվել է ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածը, որը կազմում է ընդհանուր դատապարտվածների 0.27%-ը (2013թ.՝ 8 (0.31%)):

Պատիժ նշանակելիս դատարանները ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածը կիրառել են սեփական նախաձեռնությամբ: 3 գործով 3 անձի վերաբերյալ մեղադրողների կողմից բերվել են վերաքննիչ բողոքներ, որոնցից 2-ը մերժվել է, 1-ի քննությունն ընթացքի մեջ է:

2014թ. ընթացքում մեղադրողների կողմից դատարանների կայացրած դատավճիռների դեմ բերվել է ընդամենը 310 (2013թ.՝ 227) վերաքննիչ բողոք, որոնցից 2-ը հետ է վերցվել, 3-ով դեռևս լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 42-ը (2013թ.՝ 45) կամ 13.6%-ը եղել են արդարացման, 192-ը (2013թ.՝ 130) կամ 62.3%-ը՝ պատժի մեղմության, 6-ը (2013թ.՝ 11) կամ 2%-ը՝ պատժի խստության դեմ, 19-ը (2013թ.՝ 17) կամ 6.1%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 49-ը (2013թ.՝ 23) կամ 15.9%-ը՝ այլ հիմքով:

Մեղադրողների կողմից բերված բողոքներից 59 (2013թ.՝ 28) կամ 19.1%-ը բավարարվել է, 189-ը (2013թ.՝ 163) կամ 61.4%-ը մերժվել է, 3-ով (2013թ.՝ 6) կամ 0.97%-ով կայացվել է այլ որոշում, 54-ով կամ 17.5%-ով ամփոփման պահին բողոքի քննարկումն ընթացքի մեջ է եղել:

2014թ. ընթացքում մեղադրողների կողմից դատարանների կայացրած դատավճիռների և որոշումների դեմ բերվել է 97 (2013թ.՝ 80) վճռաբեկ բողոք, որոնցից 4-ը վերադաս դատախազների կողմից հետ է վերցվել: Ներկայացված բողոքներից 47-ը վերադարձվել է: Մնացած բողոքներից 12-ը եղել է արդարացման, 17-ը՝ պատժի մեղմության, 5-ը՝ պատժի խստության դեմ, 3-ը՝ արարքի վերաորակման դեմ, 9-ը՝ այլ հիմքով:

Մեղադրողների կողմից բերված բողոքներից վարույթ է ընդունվել 19-ը, որոնցից բավարարվել է 11-ը կամ շուրջ 58%-ը, 2-ը կամ 10.5%-ը մերժվել է, 1-ով կամ 5.2%-ով կայացվել է այլ որոշում, 5-ով կամ 26%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է: Դեռևս որոշված չէ նաև 27 բողոքների վարույթ ընդունելու հարցը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր-ի 404-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումների դեմ 2014թ. ընթացքում 41 վճռաբեկ բողոք է բերել նաև ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշումներով այդ բողոքներից 25-ի վարույթ ընդունելը մերժվել է, 5 բողոք ընդունվել է վարույթ, որոնցից 4-ը բավարարվել է, 1-ը՝ մերժվել: Բացի այդ, դեռևս որոշված չէ 11 բողոքների վարույթ ընդունելու հարցը:

***1) Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ***

2014թ. ընթացքում դատարաններում քննվել է կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված ընդամենը 94 քրեական գործ 126 անձի (2013թ. 128 գործ, 206 անձ) նկատմամբ կամ 34 գործով և 80 անձով պակաս, որոնցից դատապարտվել է 75 քրեական գործով 99 անձ (2013թ.՝ 109 գործ, 176 անձ), կամ 34 գործով և 77 անձով պակաս:

Ընդ որում, դրանցից 37 քրեական գործով 48 անձի (2013թ.՝ 59 գործ, 95 անձ) նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ:

Դատապարտված 99 անձից 57-ը կամ դատապարտված անձանց 58%-ը (2013թ.՝ 176-ից 65-ը կամ 37%-ը) եղել է պաշտոնատար անձ:

Դատապարտված անձանցից 59-ը (2013թ.՝ 92) ենթարկվել է ազատազրկման ձևով պատժի, 32-ը (2013թ.՝ 66)՝ տուգանքի, մյուսները՝ այլ պատիժների: Ազատազրկումը կազմում է 60% (2013թ.՝ 52.2%):

Դատաքննության արդյունքներով 36 (2013թ.՝ 57) անձ պատժից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ, իսկ 7 գործով 10 անձի (2013թ.՝ 8 գործ, 10 անձ) նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ:

2014 թ. ընթացքում 2 քրեական գործով 2 անձ նախնական կալանքից ազատվել է դատապարտվելով ազատազրկման հետ կապ չունեցող պատժի (2013թ.՝ 3 գործ, 3 անձ), իսկ նախնական կալանքի տակ չգտնվող 4 (2013թ.՝ 48) անձ դատապարտվել է ազատազրկման:

Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար դատապարտված անձանցից 2-ը (2013թ.՝ 2) եղել է նախկինում դատապարտված կոռուպցիոն բնույթի հանցագործություն կատարելու համար, իսկ 2-ը (2013թ.՝ 4)՝ այլ բնույթի:

Կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով դատարաններում քննված բոլոր քրեական գործերով պատճառվել է ընդհանուր հաշվով 207,963,000 (2013թ.՝ 2,161,275,000) դրամի վնաս, որից պետությանը պատճառված վնասը կազմել է 185,999,000 (2013թ.՝ 1,756,924,000) դրամ: Պետությանը պատճառված նյութական վնասից վերականգնվել է 111,393,000 (2013թ.՝ 190,557,000) դրամ կամ 60 %-ը (2013թ.՝ 10.8%):

***2) Հատկապես կարևոր գործերով քննության վերաբերյալ***

2014 թվականի ընթացքում դատարան է ուղարկվել 93 (2013թ.՝ 47) քրեական գործ, որոնք ընդունվել են վարույթ: Նույն ժամանակաընթացքում ավարտվել է 42 (2013թ.՝ 28) գործի դատաքննություն 72 (2013թ.՝ 45) անձի նկատմամբ, այդ թվում՝ ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասով 1 գործ 1 անձի, 112-րդ հոդվածով՝ 2 գործ 2 անձի, 132-րդ հոդվածով՝ 1 գործ 1 անձի, 132.2-րդ հոդվածով՝ 3 գործ 3 անձի, 175-րդ հոդվածով՝ 1 գործ 1 անձի, 177-րդ հոդվածով՝ 2 գործ 4 անձի, 179-րդ հոդվածով՝ 4 գործ 4 անձի, 215-րդ հոդվածով՝ 2 գործ 6 անձի, 242-րդ հոդվածով՝ 1 գործ 1 անձի, 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ 2 գործ 16 անձի, 308-րդ հոդվածով՝ 3 գործ 4 անձի, 311-րդ հոդվածով՝ 5 գործ 8 անձի նկատմամբ:

54 (2013թ.՝ 22) անձ դատապարտվել է ազատազրկման, որոնցից 12-ը պատժից ազատվել է համաներման ակտի կիրառման հիմքով, 13-ը դատապարտվել է տուգանքի, 1 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 1 անձի նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, 3 գործով 3 անձի նկատմամբ գործի վարույթը կարճվել է, որոնցից 1-ը՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 1-ը՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 1-ը՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիմքով:

12 գործով 16 անձի նկատմամբ դատարանում կիրառվել է դատական քննության արագացված կարգ, որոնցով կայացվել են մեղադրական դատավճիռներ:

30 գործով դատախազներն առարկել են դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ: Դատախազները դատական քննության արագացված կարգի դեմ հիմնականում առարկել են այն դեպքերում, երբ մեղադրյալները չեն համաձայնել մեղադրանքի հետ կամ չեն հատուցել պատճառված վնասը:

Արարքին անհամաչափ մեղմ պատիժ նշանակելու դեպքերով դատախազների կողմից ներկայացվել է 3 վերաքննիչ բողոք, որոնցից 1-ը բավարարվել է, 1-ը՝ մերժվել, 1-ը քննարկման ընթացքում է:

1 գործով արարքը դատարանի կողմից վերաորակվել է մեղմացման առումով:

1 գործով 2 ամբաստանյալ առաջադրված մեղադրանքների մի մասով դատարանի կողմից արդարացվել են:

Դատարանների կողմից 3 գործով 3 անձի նկատմամբ գործի վարույթը կարճվել է, որոնցից 1-ը՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 1-ը՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 1-ը՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիմքով:

Կայացված որոշումները չեն բողոքարկվել: Վարույթը կասեցնելու որոշում դատարանի կողմից չի կայացվել:

Դատախազների կողմից քրեական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերվել է 7 վերաքննիչ բողոք, որոնցից 6-ը՝ պատժի մեղմության դեմ: Բողոքներից 1-ը բավարարվել է, 4-ը՝ մերժվել, 1-ի քննությունն ընթացքում է:

Դատախազների կողմից քրեական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերվել է 1 վճռաբեկ բողոք, որ բավարարվել է:

2014 թվականի ընթացքում դատարաններում ավարտվել է ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածով հարուցված 1 գործ 1 անձի նկատմամբ՝ 242-րդ հոդվածի 2-րդ մասով: Նշված անձը դատապարտվել է ազատազրկման:

***3) ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերի վերաբերյալ***

ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով 2014թ. ընթացքում դատարաններում մեղադրանք է պաշտպանվել 73 քրեական գործով 97 անձի (2013թ.՝ 53 գործ, 75 անձ) նկատմամբ: 97 անձից 53-ը (2013թ.՝ 36) եղել է նախնական կալանքի տակ:

53 գործով 75 անձից 8 գործով 8-ը եղել է կին (2013թ.՝ 9 գործ, 9 անձ), 19 գործով 19-ը (2013թ.՝ 11 գործ, 13 անձ)՝ նախկինում դատապարտված, 17 գործով 7-ը՝ (2013թ.՝ 4 գործ, 5 անձ) օտարերկրացի:

Դատապարտվել են ազատազրկման միջին ծանրության հանցագործություններով՝ 13 անձ, տուգանքի՝ 14 անձ, պատիժը ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածով պայմանականորեն չի կիրառվել 2 անձի նկատմամբ, համաներման ակտի կիրառմամբ միջին ծանրության հանցագործություններով պատժից ազատվել են 4-ը, 1-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածը, իսկ 1 անձի նկատմամբ 1 քրեական գործի վարույթ կարճվել է:

Դատապարտվել են ծանր հանցագործություններով ազատազրկման՝ 46 անձ, տուգանքի՝ 15 անձ, պատիժը ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածով պայմանականորեն չի կիրառվել 3 անձի նկատմամբ, համաներման ակտի կիրառմամբ ծանր հանցագործություններով պատժից ազատվել են 2-ը, իսկ 2 անձի նկատմամբ 2 քրեական գործի վարույթ կարճվել է:

Առանձնապես ծանր հանցագործություններով մեղադրանքը պաշտպանվել է 1 գործով 1 անձի (2013թ.՝ 2 գործ, 3 անձ) նկատմամբ, որը դատապարտվել է ազատազրկման:

Դատարանում քննված 70 քրեական գործով 94 անձից ազատազրկման ձևով պատիժ է նշանակվել 60 (2013թ.՝ 36) անձի նկատմամբ, տուգանք՝ 29-ի (2013թ.՝ 31), ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն պատիժը չի կիրառվել 5-ի (2013թ.՝ 3) նկատմամբ, համաներման կիրառմամբ նշանակված պատիժներից ազատվել են 6-ը (2013թ.՝ 10), 1-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածը, 3 անձի նկատմամբ 3 գործի վարույթ (2013թ.՝ 3 գործ, 5 անձ) կարճվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով (համաներման) ակտի կիրառմամբ:

2014թ. ընթացքում ընդհանուր իրավասության դատարաններում արագացված դատական քննության կարգով քննվել է 32 գործ 41 անձի (2013թ.՝ 30 գործ, 39 անձ) նկատմամբ:

2014թ. ընթացքում դատարանների կողմից 3 անձի նկատմամբ կարճվել է 3 գործի վարույթ (2013թ.՝ 3 գործ, 5 անձ)՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի (համաներման կիրառմամբ):

2014թ. ընթացքում վերաքննության կարգով միջին ծանրության հանցագործություններով բողոքարկվել է 7 (2013թ.՝ 3) դատական ակտ՝ պատժի մեղմության դեմ, որոնցից 5-ը բավարարվել է, իսկ 2-ը՝ մերժվել, ծանր հանցագործություններով բերվել է 3 վերաքննիչ բողոք, որոնցից 3-ն էլ մերժվել է:

### *4. Պետական շահերի պաշտպանության ոլորտ*

Պետական շահերի պաշտպանության ոլորտում հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է 234 (2013թ.՝ 224) ուսումնասիրություն, հայտնաբերվել է 339 (2013թ.՝ 362) իրավախախտում, պետության շահերին հասցրած վնասը կամովին վերականգնելու մասին նախազգուշացվել է 72 (2013թ.՝ 257) անձ, ուսումնասիրությունների ընթացքում պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով նախապատրաստվել է 313 (2013թ.՝ 66) նյութ, որոնցով հարուցվել է 39 հայց (2013թ.՝ 196), կամովին պետբյուջե է վերականգնվել է 82,209,750 (2013թ.՝ 87,128,324) դրամ, հարուցվել է 63 (2013թ.՝ 34) քրեական գործ:

Մասնավորապես, *2014թ. ընթացքում ուսումնասիրվել է ՀՀ կրթության և գիտության ու ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների* հարուցած կամ նրանց դեմ ներկայացրած հայցերի, դրանց հիման վրա ընդունված դատական ակտերի հիմնավորվածության, բողոքարկման ու կատարման ուղղությամբ իրականացված աշխատանքների գործընթացում պետական շահերի պաշտպանության վիճակը:

Ուսումնասիրությամբ արձանագրվել են բազմաթիվ խախտումներ ու թերություններ, որոնք տեղ են գտել նախարարության և նրա համակարգում գործող կազմակերպությունների գործունեությունում:

Ուսումնասիրության արդյունքներն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե և ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Նախաքննության ընթացքում 6,050,000 դրամ գումարից 4,000,000 դրամ գումարը վերականգնվել է, իսկ մնացած 2,050,000 դրամի մասով տեսչությունը կատարողական թերթերը պահանջելու բաց թողնված ժամկետները հարգելի համարելու վերաբերյալ ՀՀ վարչական դատարան է ներկայացրել դիմումներ, որոնք դատարանի կողմից բավարարվել են:

Նախարարությունում և նրա ստորաբաժանումներում արձանագրվել են նաև բազմաթիվ խախտումներ ու թերություններ ֆինանսատնտեսական գործունեության, կապիտալ շինարարության, գնումների կազմակերպման և անցկացման գործընթացներում:

Ուսումնասիրության արդյունքներն ուղարկվել են Երևան քաղաքի դատախազություն, ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Ուսումնասիրությամբ հայտնաբերված խախտումների, թերությունների ու բացթողումների վերացման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար ոլորտը համակարգող ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից համապատասխան հաղորդում է ուղարկվել ՀՀ կրթության և գիտության նախարարին:

ՀՀ դատախազության կողմից ուսումնասիրվել է 2010-2013թթ. ընթացքում *ՀՀ էկոնոմիկայի նախարարության և դրա համակարգի կազմակերպությունների* կողմից

հարուցված կամ նրանց դեմ ներկայացված հայցերի, դրանց հիման վրա ընդունված դատական ակտերի հիմնավորվածության, բողոքարկման ու կատարման ուղղությամբ իրականացված աշխատանքների ընթացքում պետական շահերի պաշտպանության վիճակը:

Ուսումնասիրությամբ արձանագրվել են վարչական տուգանքները գանձելու համար դատարան չդիմելու, դատական ակտերը չբողոքարկելու, կատարողական թերթեր չպահանջելու և կատարման չներկայացնելու դեպքեր:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ վարույթներում առկա են եղել ՀՀ վարչական դատարան հասցեագրած հայցադիմումի օրինակները, սակայն դրանց ընթացքի վերաբերյալ տեղեկությունը բացակայել է կամ վարույթներում առկա է եղել կատարողական թերթ պահանջելու գրությունը, սակայն այն ստանալու և կատարման ուղարկելու փաստը հիմնավորող ապացույցները վարույթում բացակայել են, ինչից հետևում է, որ տեսչությունը պատշաճ հետևողականություն չի ցուցաբերել ինչպես դատական ակտերի կայացման, այնպես էլ կատարողական թերթերի ստացման գործընթացում:

Բացի այդ, ուսումնասիրության ընթացքում պարզվել է նաև, որ դատարանի կողմից բավարարված 11 հայցով՝ ընդհանուր 2,450,000 դրամի չափով, կատարողական թերթերը ԴԱՀԿ ծառայություն կատարման չեն ներկայացվել:

Նախարարության անգործության արդյունքում 2010-2013թթ. ընթացքում ընդհանուր առմամբ 26,310,000 դրամ պետական բյուջե չի վերականգնվել: 2011-2013թթ. ընթացքում նախարարության դեմ հարուցված 4 հայցով, որոնցով հօգուտ պետական բյուջեի բռնագանձման ենթակա գումարը կազմել է 2,100,000 դրամ, դատական ակտերը չեն բողոքարկվել:

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են նաև դատական ակտերը չբողոքարկելու դեպքեր:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում և դրա համակարգում կատարված ուսումնասիրության արդյունքներն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե՝ վերհանված թերություններին, բացթողումներին և խախտումներին իրավական գնահատական տալու համար:

2014թ. ընթացքում դատախազության կողմից հարուցվել է 70 (2013թ.՝ 48) քրեական գործ, որոնցից ավարտվել է 14 (2013թ.՝ 32) գործի քննություն՝ դատարան է ուղարկվել 8 (2013թ.՝ 21), կարճվել է 6 (2013թ.՝ 11) քրեական գործ, մինչդատական վարույթի ընթացքում վերականգնվել է 17,276,700 (2013թ.՝ 153,801,000) դրամ, իսկ դատաքննության ընթացքում՝ 4,530,900 (2013թ.՝ 1,100,105,000) դրամ գումար:

2014թ. ընթացքում դատարան է հարուցվել 1,505,098,000 դրամի հայցապահանջով 25 հայց՝ քաղաքացիական դատավարության կարգով: Դատարանները քննել և դատական ակտեր են կայացրել 467,717,000 դրամի 76 հայցով, որոնցից բավարարվել է 461,235,000 դրամի 70 հայցադիմում, փաստացի վերականգնվել է 22,937,000 դրամ, մերժվել է 4,490,000 դրամի հայցագնով 2 հայց, կարճվել է 4 քաղաքացիական գործի վարույթ՝ 1,991,000 դրամ գումարը դատաքննության ընթացքում վճարելու կապակցությամբ հայցից հրաժարվելու հիմքով, իսկ 22 հայցի դատաքննությունն ընթացքի մեջ է:

9 հայց հարուցվել է ընդհանուր իրավասության դատարանների վճիռների հիման վրա բռնագանձման ենթակա գումարները գանձելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի պահանջներին համապատասխան

բաժինն առանձնացնելու, դրա անհնարինության կամ դրա դեմ սեփականության մնացած մասնակիցների կողմից առարկելու, ինչպես նաև շուկայական գնով բաժինը գնելու կամ ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում դրանք հրապարակային սակարկություններով վաճառելու համար բռնագանձումն ընդհանուր սեփականության իրավունքում պատասխանողների բաժինների վրա տարածելու պահանջների մասին: Նշված հայցերից 2-ը բավարարվել է, իսկ 7-ը դատաքննության ընթացքում է:

10 հայց վերաբերել է նախորդ տարվա բավարարված հայցերով պարտապան ֆիզիկական և իրավաբանական անձանց սնանկ ճանաչելուն, որոնցով բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 166,755,000 դրամ: Նշված բոլոր հայցերը բավարարվել են և դատախազությունը ներկայացրել է սնանկության գործերով պահանջատեր գրանցվելու դիմումներ:

2014թ. ընթացքում բավարարված ու օրինական ուժի մեջ մտած վճիռներով պահանջվել և կատարման է ուղարկվել 70 կատարողական թերթ, որոնցով բռնագանձման ենթակա գումարի չափը կազմել է 461,235,000 դրամ, որոնց հիման վրա վերսկսվել է նույնքան կատարողական վարույթ:

2014թ. ընթացքում կատարողական վարույթներով փաստացի բռնագանձվել է 22,937,000 դրամ: Նշված ժամանակաշրջանում դատախազները տարբեր դատական ատյաններում մասնակցել են ընդհանուր առմամբ 39 քաղաքացիական և վարչական գործերի դատաքննությունների:

2014թ. ընթացքում դատախազության մարմինները հարուցել են 78 հայց՝ 1,926,599,479 դրամի (2013թ.՝ 259 հայց, 1,232,583,947 դրամ) բռնագանձման պահանջով:

Դատարաններում քննվել է 166 (2013թ.՝ 289) հայց, որոնցից բավարարվել է 746,299,476 (2013թ.՝ 2,715,943,000) դրամի հայցապահանջով 147 (2013թ.՝ 234) հայց, մերժվել է 7 (2013թ.՝ 31) հայց, կարճվել՝ 12 (2013թ.՝ 24) գործի վարույթ: Հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում բավարարված հայցերով փաստացի վերականգնվել է 83,294,393 դրամ:

2014թ. ընթացքում վարչությունը բերել է 10 վերաքննիչ բողոք, որոնցից բավարարվել է 4-ը, 3 բողոք մերժվել է, իսկ 3-ը դեռևս չեն քննարկվել:

2014թ. ընթացքում ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացված 9 վճռաբեկ բողոքից վերադարձվել է 8-ը, իսկ 1 վճռաբեկ բողոք դեռևս չի քննարկվել:

2014թ. ընթացքում պետական շահերին վնաս պատճառելու վերաբերյալ գործերով բերած վճռաբեկ բողոքների գումարը կազմել է 30,882,000 դրամ:

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքները հետ վերադարձնելու վերաբերյալ գործերով վարչության դատախազները կազմել են եզրակացություններ, որոնց ամփոփումը ցույց է տալիս, որ ՀՀ վճռաբեկ դատարանը բողոքները քննարկելիս շատ հաճախ չի անդրադարձել և գնահատական չի տվել բողոքում նշված բոլոր փաստարկներին, ինչի հետևանքով, հանգել է ոչ հիմնավոր հետևությունների և, առանց վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու և քննելու, դրանք վերադարձրել է:

**2014թ. ընթացքում ուսումնասիրվել է ՀՀ վերահսկիչ պալատի տարեկան և ընթացիկ հաշվետվությունները**, որոնցով պահանջվել են դրանցում արձանագրված խախտումների համար հիմք հանդիսացած փաստաթղթերը:

Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ 2013թ. ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքներով արձանագրվել են բազմաթիվ խախտումներ և չարաշահումներ պետական բյուջեի միջոցների ծախսման գործընթացներում, որոնցով պետությանը պատճառվել են առանձնապես խոշոր չափերի վնասներ, ինչի արդյունքում 2014թ. հունիսի 19-ին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 308-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ ոստիկանության ՔԳՎ հատկապես կարևոր գործերի քննության վարչությանը: Մասնավորապես՝

1) կրթության ոլորտում արձանագրված խախտումներով պահանջվել և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարությամբ տարածքային դատախազություններ են ուղարկվել ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության թվով 15 պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները՝ ՊՈԱԿ-ներում կատարված ստուգման արդյունքներով արձանագրված խախտումներով (սան/օրեր և գնումների գործընթացի խախտումներ) պետությանը պատճառված վնասների հանգամանքները քննարկելու և սահմանված կարգով ընթացքը լուծելու համար:

Այսպես,

1. «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 15 կրթահամալիր» ՊՈԱԿ, Երևան քաղաքի Կենտրոնի քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2. «Երևանի թիվ 12 հատուկ դպրոց» ՊՈԱԿ, Երևան քաղաքի Կենտրոնի քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

3. «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոց» ՊՈԱԿ, Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազությունից հայտնել են, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում է կայացվել:

4. «Փոքր Միեր կրթահամալիր» ՊՈԱԿ-ում իրականացված ուսումնասիրության արդյունքներով Երևան քաղաքի քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ:

5. «Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ, դեռևս ընթացքի մեջ է:

6. «Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ, դեռևս ընթացքի մեջ է:

7. «ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահումյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց» ՊՈԱԿ, դեռևս ընթացքի մեջ է:

8. «Երևանի Օլիմպոս կրթահամալիր» ՊՈԱԿ, Երևան քաղաքի Կենտրոնի քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

9. «Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» ՊՈԱԿ, Երևան քաղաքի Կենտրոնի քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

10.«Երևանի թիվ 1 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ, Էրեբունու քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ:

11. «Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց» ՊՈԱԿ, Մալաթիայի քննչական բաժնի կողմից նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

2) գյուղատնտեսության ոլորտի «Աջակցություն պտղի և ընկուզեղենի արտադրությանը» բաժնում արձանագրված խախտումները և դրանց հիման վրա Փաստինֆո լրատվական կայքում հրապարակված տեղեկատվությունը ուսումնասիրվել է ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից, որի արդյունքում պարզվել է, որ Իտալիայից ներմուծված 10,000 հատ ընկուզենու պատվաստացուները պատվաստվել են նույն քանակությամբ պատվաստակալների հետ, սակայն պատվաստումը արդյունք չի տվել, բոլոր պատվաստացուները փչացել են: Կատարված ուսումնասիրությամբ արձանագրված պետությանը պատճառված նախնական վնասի չափը կազմել է 16,000,000 դրամ:

Ուսումնասիրության շրջանակներում նախապատրաստված նյութերն ուղարկվել են ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչություն՝ հետագա ընթացքը որոշելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ վերահսկիչ պալատի ուսումնասիրության արդյունքներով հարուցվել է քրեական գործ և «Աջակցություն պտղի և ընկուզեղենի արտադրությանը» բաժնում արձանագրված խախտումները ևս վերաբերում են ՀՀ վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվությունում արտացոլված խախտումներին, ուստի առանձին քրեական գործ չի հարուցվել և ուսումնասիրությունը կատարվում է հարուցված քրեական գործի շրջանակներում:

3) ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքներով կազմված 2013թ. տարեկան և ընթացիկ հաշվետվություններում նշված փաստերի ուսումնասիրության արդյունքներով ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության թվով 7 բժշկական հիմնարկների վերաբերյալ հաղորդումներն ուղարկվել են տարածքային դատախազություններ՝ ընթացքը լուծելու համար: 3 բժշկական հիմնարկների վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները դեռևս ընթացքի մեջ են, իսկ 4-ով հարուցվել է քրեական գործ, որից 1-ը ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի հատկանիշներով Կենտրոնի քննչական բաժնում, իսկ մյուսը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի հատկանիշներով Կոտայքի մարզային քննչական բաժնում:

Պետական շահերի պաշտպանության բնագավառում կատարված աշխատանքների վերլուծությունները և ամփոփումները ցույց են տալիս, որ հաշվետու ժամանակահատվածում դրանք ընդհանուր առմամբ բարելավվել են: Սակայն, դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է էլ ավելի ակտիվացնել աշխատանքների կատարումը, մասնավորապես՝ ՀՀ դատախազության տարածքային դատախազությունների կողմից պետական շահերի պաշտպանության ոլորտում դրանց արդյունավետությունը բարձրացնելու առումով:

## *5.Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ*

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում կատարվել է 90 հանցագործություն (2013թ.՝ 91), այդ թվում՝ թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության 55 (2013թ.՝ 47) դեպք, 1-ը (2013թ.՝ 2)՝ ինքնասպանության և 13-ը (2013թ.՝ 17)՝ ինքնասպանության փորձի, 9-ը (2013թ.՝ 10)՝ ծեծի, 3-ը (2013թ.՝ 5)՝ խարդախության, 1-ը (2013թ.՝ 0)՝ սպանության, ՔԿՀ-ից փախուստի 1 դեպք (2013թ.՝ 0), 1-ը (2013թ.՝ 1)՝ ՔԿՀ-ից փախուստի փորձի, 1-ը (2013թ.՝ 0)՝ կաշառք ստանալու, 1-ը (2013թ.՝ 0)՝ խուլիգանության, 1-ը (2013թ.՝ 1)՝ ՔԿՀ-ի ծառայողի գործունեությանը խոչընդոտելու և 3-ը՝ (2013թ.՝ 7)՝ առողջության կարճատև քայքայումով մարմնական վնասվածք հասցնելու:

Հաշվետու ժամանակաշրջանում հոգեբուժական հաստատություններում հանցագործությունների դեպքեր չեն գրանցվել (2013թ.՝ 5):

Ազատազրկման վայրերում ինչպես 2013թ., այնպես էլ 2014թ. անչափահասների կողմից կատարված հանցագործությունների դեպքեր չեն արձանագրվել:

Արձանագրված վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ նախորդ տարվա համեմատ ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգում ձևավորված հանցավորության կառուցվածքն ու շարժընթացը որոշակի փոփոխությունների են ենթարկվել:

Հանցագործությունների դեպքերը նվազել են մեկով: Հանցագործությունների դեպքերի քանակի նվազման պայմաններում չեն նվազել թմրամիջոցների և հոգեներգործուն միջոցների ապօրինի շրջանառության դեպքերը, 2014թ. գրանցվել է այդ բնույթի 55 (2013թ.՝ 47) դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 8-ով կամ 17%-ով:

Թմրամիջոցների և հոգեներգործուն միջոցների ապօրինի շրջանառության դեպքերի աճի պայմաններում պահպանվել է նաև դրանց տեսակարար մեծ կշիռը քրեակատարողական հիմնարկներում ձևավորված հանցավորության ընդհանուր հաշվեկշռում և կազմել 61%-ը:

Հաշվետու ժամանակաշրջանում 1-ով նվազել են ինքնասպանության դեպքերը, 4-ով՝ ինքնասպանության փորձի դեպքերը:

Նախորդ տարվա համեմատ նվազել են ծեծի (9-ը՝ 10-ի դիմաց) և խարդախության (3-ը՝ 5-ի դիմաց) դեպքերը:

Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել է քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների կողմից կատարված հանցագործության 2 (2013թ.՝ 4) դեպք, որոնք առնչվում են վերջիններիս ծառայողական պարտականությունների կատարմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող 38 անձանց մահ (2013թ.՝ 19): Արձանագրված մահվան դեպքերից 5-ով հարուցվել է քրեական գործ ՀՀ քր. օր.-ի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, իսկ 1 դեպքով՝ ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: ՀՀ քր. օր.-ի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված քրեական գործերից 4-ը կարճվել են հանցագործության դեպքի կամ հանցակազմի բացակայության հիմքերով:

2014թ. ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգում ձևավորված հանցավորության արդյունքների վերլուծությունն ու նախորդ տարվա արդյունքների հետ դրանց համադրումը վկայում են, որ որոշ ՔԿՀ-ներում չեն կատարվում բավարար աշխատանքներ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի հայտնաբերման ուղղությամբ: Դրա հետ մեկտեղ, դեռևս ցածր է ու անբավարար արձանագրված դեպքերի բացահայտման վիճակն ու այդ բնագավառում նախաքննական և օպերատիվ-հետախուզական մարմինների համագործակցության արդյունավետությունը, ինչի հետևանքով արձանագրված այդ բնույթի որոշ դեպքեր մնում են չբացահայտված:

Դրա վկայությունն է այն հանգամանքը, որ, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանում, արձանագրված թմրամիջոցների ապօրինի շրջանառության, առավելապես՝ դրանց իրացման բազմաթիվ դեպքեր մնում են չբացահայտված և դրանցով ակտիվ քննություն չի կատարվում ու օպերատիվ-հետախուզական միջոցներ չեն ձեռնարկվում՝ հանցագործության բոլոր մասնակիցներին բացահայտելու և քրեական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես քրեակատարողական հիմնարկներում կատարվող հետաքննությունը առնչվում է մի շարք հիմնախնդիրների, այն առանձին դեպքերում նաև իրականացվում է թերություններով ու բացթողումներով, որոնք հիմնականում ինչպես նախորդ տարիներում, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանում հանգում են հետևյալին: Մասնավորապես, արձանագրված դեպքերով կատարված հետաքննությունը սովորաբար սահմանափակվում է ՔԿՀ-ի տարածքում և դեպքին առնչվող դատապարտյալների ու ՔԿՀ-ի աշխատակիցների մասնակցությամբ գործողություններ կատարելով: Ընդ որում, բավականին ցածր է դատապարտյալների մասնակցությամբ կատարված գործողությունների արդյունավետությունը, քանի որ վերջիններս սովորաբար կամ հրաժարվում են դրանց մասնակցելուց, կամ էլ ուղղակի բացատրություններ չեն տալիս:

Որպես կանոն, նույն դատապարտյալները հրաժարվում են որպես ընթերակա առանձին քննչական գործողությունների կատարմանը մասնակցելուց, որի հետևանքով հետաքննիչների կողմից այդպիսի առանձին գործողությունները կատարվում են ՀՀ Կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 1543-Ն որոշմամբ հաստատված պահանջների համաձայն: Արդյունքում, առանձին գործողությունները (դեպքի վայրի զննությունը, նմուշներ ստանալը) և դրանց արդյունքում ձեռք բերված ապացույցները վիճարկվում են պաշտպանական կողմից:

Միաժամանակ, ուսումնասիրությունները կրկին վկայում են, որ ՔԿՀ-ների պետերը, որպես կանոն, չեն մասնակցում հետաքննությանը, հետաքննիչներին չեն տալիս ցուցումներ:

2014թ. ընթացքում դատարաններում դատախազները մասնակցել են 230 դատական նիստի, այդ թվում. անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ՝ 224, անձի պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ՝ 3, ծանր հիվանդության կամ

արտակարգ հանգամանքների հետևանքով անձին պատժից ազատելու վերաբերյալ՝ 3 դատական նիստի:

Հաշվետու ժամանակաշրջանում պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով միջգերատեսչական անկախ հանձնաժողովների քննարկմանը ՔԿՀ-ների կողմից ներկայացվել է ընդհանուր թվով 673 (2013թ. 1,012) միջնորդություն, որոնցից 11-ը (2013թ.՝ 40) պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ: Հանձնաժողովի կողմից հավանություն է տրվել 204 (2013թ.՝ 321) միջնորդության, որոնցից 4-ը (2013թ.՝ 27)՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ: Ներկայացված միջնորդություններից 184-ը (2013թ.՝ 310) բավարարվել է դատարանի կողմից: Բավարարված միջնորդություններից 3-ով (2013թ.՝ 21) դատապարտյալի պատժի չկրած մասը փոխարինվել է ավելի մեղմ պատժատեսակով: Վերը նշված միջնորդությունների քննարկման արդյունքում կայացված որոշումների դեմ հաշվետու ժամանակաշրջանում դատախազների կողմից բերվել է 32 վերաքննիչ բողոք, որոնցից բավարարվել է 1-ը: Բերվել է 1 վճռաբեկ բողոք, որը վերադարձվել է:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում քննվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների փոփոխման կամ վերացման 70 միջնորդություն, որոնցից բավարարվել է 56-ը: 14 միջնորդության վերաբերյալ կայացված որոշումների դեմ դատախազների կողմից բերվել է 8 վերաքննիչ բողոք (7 բողոք մերժվել է, 1-ը՝ բավարարվել):

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ դատախազության իրավասու ստորաբաժանումների և դատախազների կողմից կատարվել է ոլորտին վերաբերող 1,400 (2013թ. 1,104) ստուգում: Կատարված ստուգումներն իրականացվել են.

1) 208-ը (2013թ. 27)՝ քրեակատարողական հիմնարկներում, կատարված ստուգումների արդյունքներով հարուցվել են 9 քրեական գործեր, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերաբերյալ համապատասխան հաղորդումներ են ուղարկվել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետին, որոնց հիման վրա նշանակվել են ծառայողական քննություններ և քրեակատարողական հիմնարկների խախտումներ թույլ տված 25 աշխատակիցներ ենթարկվել են կարգապահական տույժերի, իսկ ՔԿՀ-ների ծառայողների շրջանում կազմակերպվել են քննարկումներ, և հիմնարկների անձնակազմերը հրահանգավորվել են հետագա ծառայության ընթացքում պատշաճ կարգով ու ժամանակին կատարելու իրենց պարտականությունները,հայտնաբերված խախտումների վերաբերյալ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետին ուղարկվել են համապատասխան հաղորդումներ,

2) 1,028-ը (2013թ. 1,016)՝ ՁՊՎ-ներում, հայտնաբերվել է 9 խախտում, որոնց արդյունքում հաղորդումներ են ներկայացվել ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների պետերին,

3) 164-ը (2013թ. 61)՝ ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումներում, որոնց հիման վրա նշանակվել են ծառայողական քննություններ և իրենց պարտականություններում թերացած 15 աշխատակից ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Հաշվետու ժամանակաշրջանում իրավասու դատախազների կողմից կայացված 5 (2013թ. 6) որոշումներով կասեցվել է օրենսդրությանը հակասող ակտերի

գործողությունը և դրանք վերանայելու միջնորդագրեր են ներկայացվել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչություն, որոնց արդյունքում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի բոլոր որոշումները վերանայվել են:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել և ամփոփվել է 2012-2013թթ. ընթացքում ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերով սահմանված՝ առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, բժշկական օգնություն, ինչպես նաև իրավաբանական օգնություն ստանալու դատապարտյալի հիմնական իրավունքների վիճակը, ինչպես նաև 2013թ. և 2014թ. 1-ին կիսամյակի ընթացքում «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 9-րդ կետերով սահմանված՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ կարճատև, երկարատև տեսակցություններ և կարճատև մեկնումներ տրամադրելու հետ կապված կալանավորված անձանց և դատապարտյալների հիմնական իրավունքների պահպանման վիճակը:

**ՀՀ Նախագահի 30.06.2012թ. N ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից» բխող միջոցառումների ցանկի 7.6 կետով** նախատեսված է ուսումնասիրել պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության դատախազական գործառույթի բնագավառում միջազգային փորձը՝ ըստ անհրաժեշտության նախատեսելով դրա արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ, ուստի նշված լիազորության իրականացման համար պետք է օժտված լինի համապատասխան պետաիշխանական լծակներով: Մինչդեռ, ՀՀ գործող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ դատախազական հսկողության այս բնագավառում դատախազությունը բավարար լծակներ չունի:

Այսպես, ՀՀ քր. դատ. օր.-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի համաձայն՝ նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ընթացքում դատախազը կարող է վերացնել հետաքննության մարմնի, քննիչի ցանկացած որոշում՝ օրենսգրքով նախատեսված դեպքերում: Մինչդեռ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ նույն հսկողական գործառույթն իրականացնելիս, մասնավորապես՝ պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի հրամանների, կարգադրությունների և որոշումների համապատասխանությունը գործող օրենսդրությանը ստուգելիս, դատախազը միայն միջնորդում է վերանայել օրենսդրությանը հակասող ակտը, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը, և այն վերացնելու միջնորդություն ներկայացնել, որի պայմաններում այն վերացնելու լիազորություն չունի, ինչը խոչընդոտում է նշված գործառույթի արդյունավետ իրականացմանը և

միաժամանակ խախտվում է «հսկողության»՝ որպես դատախազական բացառիկ լիազորության, էությունը:

*Օրենսդրությանը հակասող ակտը վերանայելու պահանջը, ըստ էության, չի համապատասխանում հսկողական գործունեության բնույթին և բովանդակությանը, որի հետևանքով նման իրավական կարգավորումը տեսականորեն հիմնավորված չէ, իսկ գործնականում՝ անարդյունավետ:*

Բացի այդ, նույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի ներկայիս խմբագրությամբ՝ հսկողական գործառույթներ կարող են իրականացվել միայն պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն հրամանների, կարգադրությունների և որոշումների նկատմամբ, **որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին**: Նշված ձևակերպմամբ նշված բնագավառում էականորեն սահմանափակվում են դատախազական հսկողության իրավասությունները: Իրականում դատախազական հսկողությունը պետք է իրականացվի ոչ միայն պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց հիմնական իրավունքներին վերաբերող իրավական ակտերի, **այլ նաև նշված անձանց վերաբերող այլ, ոչ հիմնական իրավունքներին, ինչպես նաև ազատություններին և պարտականություններին վերաբերող իրավական ակտերի նկատմամբ**:

ՀՀ դատախազության կողմից պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով արդեն իսկ մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ, որով նշված հոդվածի նոր խմբագրությամբ առաջարկվում է որպես դատախազական հսկողության օբյեկտ ճանաչել պատիժը կատարող մարմինների այն իրավական ակտերը, որոնք վերաբերում են պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկման՝ օրենքով սահմանված **կարգին և պայմաններին**:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի նոր խմբագրությամբ առաջարկվում է որպես դատախազական հսկողության օբյեկտ դիտարկել պատժի կրման և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ամբողջ գործընթացը, ինչն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ:

Հարկ է նկատել նաև, որ առաջարկվող ձևակերպմամբ դատախազական հսկողության օբյեկտ է նաև այն մարմինների գործունեությունը, որոնք անմիջականորեն չեն առնչվում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կատարմանը, սակայն որոնց որոշումներն այս կամ այն կերպ անդրադառնում են պատիժների կամ հարկադրանքի այլ միջոցների կատարման՝ օրենքով սահմանված կարգին և պայմաններին, մասնավորապես՝ խոսքը ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի տեղաբաշխման հանձնաժողովի մասին է:

Նախագծով առաջարկվող կարգավորման նպատակն է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ոլորտում ապահովել մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, ինչը կարող է իրականացվել պատշաճ դատախազական հսկողության պայմաններում:

Նախագծի ընդունումը հնարավորություն կտա ՀՀ դատախազությանը արդյունավետ իրականացնելու պատիժների և հարկադրանքի այլ միջոցների

կիրառման օրինականության նկատմամբ հսկողության սահմանադրական լիազորությունը:

## ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում՝

1) ՀՀ դատախազությունը դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել 34,373 (2013թ.՝ 32,742) նյութի նախապատրաստման, 19,675 (2013թ.՝ 15,830) քրեական գործի հետաքննության և նախաքննության նկատմամբ.

2) դատախազների կողմից վերացվել է հետաքննության և նախաքննության մարմինների կողմից կայացված 1,413 (2013թ.՝ 808) որոշում:

3) քրեական գործերով և նյութերով հետաքննության և նախաքննության մարմիններին տրվել է 2,287 (2013թ.՝ 2,308) գրավոր ցուցում:

4) մինչդատական վարույթում դատախազների կողմից դատարան է ներկայացվել և դատախազների մասնակցությամբ քննվել է 169 (2013թ.՝ 148) միջնորդություն (որպես խափանման միջոց կիրառվել են կալանքը, խուզարկության և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ):

5) դատարանում մեղադրանքը պաշտպանվել է 1,932 (2013թ.՝ 2,232) քրեական գործով:

6) դատախազների կողմից քրեական գործերով դատական ակտերի՝ դատավճիռների, վճիռների և որոշումների դեմ բերվել է 308 (2013թ.՝ 227) վերաքննիչ և 97 (2013թ.՝ 80) վճռաբեկ բողոք: Ընդ որում, 308 (2013թ.՝ 227) վերաքննիչ բողոքից բավարարվել է 59-ը (2013թ.՝ 28), իսկ 97 (2013թ.՝ 80) վճռաբեկ բողոքից՝ 11-ը (2013թ.՝ 7):

7) ՀՀ դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության մասով հարուցվել է 227 (2013թ.՝ 471) հայց, որոնցից դատարանի կողմից քննության է առնվել 166-ը (2013թ.՝ 297), բավարարվել է 147-ը (2013թ.՝ 239): Կատարվել է 2,033 (2013թ.՝ 1,986) ստուգում, ուսումնասիրություն, ամփոփում: Ներկայացվել է 437 (2013թ.՝ 720) նախազգուշացում, հաղորդում, միջնորդագիր և միջնորդություններ:

8) ՀՀ դատախազությունում ստացվել և ընթացք է տրվել 12,993 (2013թ.՝ 12041) դիմումի, բողոքի:

### *6. Վերահսկողական-տեսչական գործունեության ոլորտ*

Հաշվետու ժամանակաշրջանում վերլուծվել են ՀՀ գլխավոր դատախազության 2014 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակների աշխատանքի ծրագրով նախատեսված, ընդհանուր առմամբ՝ 16 կետի (2013թ.՝ 25) պահանջների կատարման վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ կառուցվածքային ստորաբաժանում), դատախազությունների և ՀՀ զինվորական դատախազության կողմից տրված տեղեկանքները (զեկուցագրերը) և ապահովվել է դրանց հետագա քննարկումը ՀՀ գլխավոր դատախազին և ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալներին առընթեր օպերատիվ խորհրդակցություններում, ՀՀ դատախազության կոլեգիայի նիստերում, այդ

կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազին ներկայացվել են համապատասխան եզրակացություններ:

Վերլուծվել և ամփոփվել են ՀՀ գլխավոր դատախազության 2014 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակների աշխատանքի ծրագրերի վերաբերյալ կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված 15 (2013թ.՝ 18) կարծիք և առաջարկություն, որոնք հաշվի առնելով, մշակվել են ՀՀ գլխավոր դատախազության 2014թ. 2-րդ կիսամյակի աշխատանքի ծրագիրը՝ 7 և 2015թ. 1-ին կիսամյակի աշխատանքի ծրագիրը՝ 7 կետերից:

Ուսումնասիրվել, վերլուծվել և ամփոփվել է դատախազություններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և առանձին դատախազներից ստացված՝ 2013 թվականի տարեկան աշխատանքների արդյունքների հաշվետվության վերաբերյալ 31 (2013թ.՝ 65) զեկուցագիր:

Ուսումնասիրվել, ամփոփվել և վերլուծվել է 2013թ. տարեկան աշխատանքների վերաբերյալ դատախազությունների կողմից ներկայացված օպերատիվ խորհրդակցության 19 (2013թ.՝ 38) արձանագրություն:

Հաշվետու ժամանակաշրջանում ամփոփվել, վերլուծվել և ընդհանրացվել է դատախազական լիազորությունների և գործունեության իրականացման աշխատանքային փորձը (պրակտիկան) և դատախազություններին, կառուցվածքային ստորաբաժանումներին ու ավագ դատախազներին ուղարկվել է 4 (2013թ.՝ 9) տեղեկատվական նամակ:

Ամփոփվել են դատախազություններից և կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված՝ դատախազների միջև պարտականությունների բաշխման 12 (2013թ.՝ 47) կարգադրություն:

Վերահսկողական-տեսչական գործունեության ոլորտում կազմվել է ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների 1 (2013թ.՝ 7) կարգադրություն և 2 (2013թ.՝ 7) հանձնարարական:

Դատախազների կողմից ծառայողական պարտականությունների կատարման և վարքագծի կանոնների պահպանման, ինչպես նաև օրենքի պահանջների կատարման վիճակը պարզելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների հանձնարարությամբ և նախաձեռնությամբ իրականացվել է 3 կարգապահական վարույթ՝ 4 դատախազի (2013թ.՝ 13 կարգապահական վարույթ՝ 18 դատախազի նկատմամբ) նկատմամբ:

Ավարտված կարգապահական վարույթների արդյունքներով 4 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժը:

2014թ. ընթացքում քաղաքացիների դիմում-բողոքների և առանձին ստուգումների արդյունքներով իրականացվել է 19 ծառայողական քննություն՝ 28 դատախազի և 1 ծառայողական քննություն՝ ՀՀ դատախազության աշխատակազմի 1 աշխատակցի նկատմամբ (2013թ.՝ 33 ծառայողական քննություն՝ 47 դատախազի նկատմամբ):

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ կարգապահական վարույթի և ծառայողական ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ոլորտը համակարգող ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ անցկացված օպերատիվ խորհրդակցություններում, որոնց ընթացքում ընդունված որոշումներով դատախազները խիստ նախազգուշացվել են և միաժամանակ նրանց ուշադրությունը հրավիրվել է արձանագրված թերությունների, բացթողումների ու

խախտումների վրա՝ անհրաժեշտ հետևություններ անելու և այսուհետ դրանք բացառելու համար:

2014թ. վերահսկողության է վերցվել ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից հսկողության վերցված 2,849 (2013թ.՝ 2,830) դիմում-բողոք և գրագրություն, որոնց արդյունքներով կազմվել է 1 (2013թ.՝ 2) տեղեկատվական նամակ:

Ամփոփվել, վերլուծվել և ընդհանրացվել են ՀՀ դատախազության կոլեգիայի 07.07.2010թ. նիստի (Արձանագրություն N 3) օրակարգի 5-րդ հարցի որոշման 4-րդ կետի (ԱՄՆ-ի ՄԶԳ-ի հիմնած՝ շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների (ՇՊԱԿ) հետ համագործակցության) պահանջների կատարման վերաբերյալ դատախազություններից ու կառուցվածքային ստորաբաժանումներից 2014թ. ընթացքում ստացված 12 (2013թ.՝ 24) զեկուցագրերն ու հաղորդումները, որոնց արդյունքներով կազմվել է 1 տեղեկատվական նամակ (2013թ՝ 2):

2014թ.-ին ՀՀ դատախազությունը շարունակել է իրականացնել.

1) ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված հավելվածներով ՀՀ դատախազության մասով նախատեսված միջոցառումները,

2) ՀՀ Կառավարության 2008թ. մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը հաստատելու մասին» N 1039-Ն որոշմամբ հաստատված հավելվածով ՀՀ դատախազության մասով նախատեսված միջոցառումները,

3) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. մարտի 28-ի «Ծրագրերի իրականացումը բնութագրող արդյունքային ցուցանիշների կատարման մասին» N 324-Ն հրամանով նախատեսված միջոցառումները,

4) ՀՀ Նախագահի 2012թ. ապրիլի 16-ի «ՀՀ-ում ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» N ՆԿ-51-Ն կարգադրությամբ հաստատված հավելվածով ՀՀ դատախազության մասով նախատեսված միջոցառումները,

Այսպես, ՀՀ Նախագահի 30.06.2012թ. N ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի» և դրանից բխող միջոցառումների ցանկի 7.5.1 ու 7.5.2 կետերի պահանջների, ՀՀ գլխավոր դատախազության համակարգում իրականացված համապատասխան գործընթացների շրջանակում, մշակման և ներդրման փուլում են ՀՀ դատախազության համակարգում վիճակագրության և արխիվի վարման էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգերը (ծրագրերը), որոնց սկզբնական՝ նախապատրաստական փուլի համապատասխան աշխատանքների իրականացման համար բանակցություններ են վարվում Համաշխարհային բանկի հետ՝ ծրագրին նրա հնարավոր մասնակցության և օժանդակության առումով:

Նշված համակարգի ներդրմամբ ՀՀ դատախազության աշխատանքի ոչ ֆինանսական ցուցանիշները (լիազորություններից բխող գործառույթներին բնորոշ միջոցառումներ) ներկայացվելու են ամենօրյա կարգով վարվող աճողական էլեկտրոնային վիճակագրության և համապատասխանաբար դրանց հիմքում ընկած

բովանդակային՝ փաստաթղթային հիմքերի տեսքով և այլևս դրանք առանձին՝ ըստ տարբեր հաշվետու ժամանակահատվածների ներկայացնելու և տրամադրելու անհրաժեշտություն չի լինի, այլ ցանկացած պահի հասանելի կլինի այն մարմնին, որին տրվել են իրեն անհրաժեշտ հասանելիության սահմանները: Հիշյալ համակարգը նաև դատախազության սահմանադրական լիազորությունների, դրանցից բխող գործառույթների և, ընդհանրապես, դատախազության գործունեության կազմակերպման իրականացման արդյունքների մասին փաստող ընդարձակ և տեսանելի տվյալների բազա է, որն, իր հերթին, տեղեկություններ է պարունակելու դատախազի աշխատանքի ոչ ֆինանսական ցուցանիշների արդյունքների մասին, որի կապակցությամբ էլ հենց կիրառվելու են գրությունում նշված չափորոշիչները:

Ի կատարումն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 28.03.2007թ. N 324-Ն հրամանի և այդ կապակցությամբ տրված՝ ՀՀ գլխավոր դատախազի 27.12.2013թ. N 122 հրամանի պահանջների, ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներից և ՀՀ դատախազության կազմում գտնվող դատախազություններից ընդունվել, ստուգվել, վերլուծվել և ամփոփվել է 2013 թվականի տարեկանի համար՝ 38, 2014թ. 1-ին եռամսյակի համար՝ 38, 2014թ. 1-ին կիսամյակի համար՝ 38, 2014թ. ինն ամսվա համար՝ 37, ընդամենը՝ 151 (2013թ.՝ 152) հաշվետվություն՝ համապատասխան ժամանակաշրջաններում ՀՀ դատախազության պետական բյուջեի՝ «Ծրագրերի իրականացումը բնութագրող տարեկան արդյունքային ցուցանիշներում» նշված դատախազական լիազորությունների և գործունեության կազմակերպման 14 ոլորտում կատարված աշխատանքների վերաբերյալ, որոնց հիման վրա կազմվել է ՀՀ դատախազության «Ծրագրերի իրականացումը բնութագրող տարեկան արդյունքային ցուցանիշների մասին» հաշվետվությունում ընդգրկվելիք համապատասխանաբար՝ 2013թ. տարեկան, 2014թ. 1-ին եռամսյակի, 2014թ. 1-ին կիսամյակի և 2014թ. ինն ամիսների համար 4 ամփոփ կատարողական ցուցակ (2013թ.՝ 4) և ուղարկվել ՀՀ դատախազության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչություն՝ ֆինանսական ցուցանիշներին միացնելու և ՀՀ Կառավարություն ուղարկելու համար, ինչը շարունակվելու է նաև առաջիկայում:

### *7. Միջազգային-իրավական օգնության ոլորտ*

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է համապատասխան աշխատանք քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման, ներառյալ՝ քրեական հետապնդման կամ դատավճիռն ի կատար ածելու նպատակով հետախուզվող անձանց հանձնման, երկկողմ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների շրջանակում համագործակցության և այլ ոլորտներում:

Հաշվետու ժամանակաշրջանում միջազգային-իրավական օգնության ոլորտում ՀՀ դատախազության կողմից քննարկվել և ընթացք է տրվել այս ոլորտին վերաբերող 6,296 (2013թ.՝ 6,036) փաստաթղթի, որոնցից՝ 3,256-ը (2013թ.՝ 3,021) ստացվել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից, իսկ 3,040-ը (2013թ.՝ 3,015) օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղարկված հարցումներն են:

Համաձայն միջազգային կոնվենցիաների, պայմանագրերի, համաձայնագրերի դրույթների՝ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության ցուցաբերման ոլորտում 2014 թվականի ընթացքում ԱՊՀ պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 94 (2013թ.՝ 46), իսկ այլ օտարերկրյա պետություններից՝ 28 (2013թ.՝ 43) միջնորդություն: Ընդհանուր առմամբ ստացվել է քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու 122 (2013թ.՝ 89) միջնորդություն:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՊՀ մասնակից պետությունների դատախազություններ է ուղարկվել քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու 145 (2013թ.՝ 55), իսկ այլ օտարերկրյա պետություններ՝ 126 (2013թ.՝ 61) միջնորդություն, ընդամենն ուղարկվել է 271 (2013թ.՝ 116) միջնորդություն:

Հանցագործների հանձնման և դատապարտյալների փոխանցման մասին հարցումների նախապատրաստման և ուղարկման կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքների կապակցությամբ իրականացվել են Հայաստանի Հանրապետությունում քննվող քրեական գործերով հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց հանձնելու մասին 91 (2013թ.՝ 77) միջնորդության նախապատրաստման և ուղարկման աշխատանքներ, որոնցից 72-ն ուղարկվել է ԱՊՀ մասնակից պետությունների, իսկ 19-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների քննարկմանը:

ՀՀ իրավապահ մարմինների կողմից հետախուզվողների հայտնաբերման մասին ստացված հեռագրերի հիման վրա պահանջված փաստաթղթերի փաթեթները հանգամանալից ուսումնասիրության և գործընթացի ճիշտ կազմակերպման արդյունքում բացառվում են հանձնման միջնորդությունների անհիմն մերժումները:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված 91 հանձնման միջնորդությունից 36-ը բավարարվել է, 6-ը մերժվել է, 49-ը քննարկման փուլում է, բավարարվել է նաև նախկինում ներկայացված 11 միջնորդություն:

Ստացված 22 (2013թ.՝ 27) միջնորդությունից բավարարվել է 7-ը, հիմնականում քաղաքացիության հիմքով մերժվել է 5 միջնորդություն, 9-ը ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն, իսկ 1-ը քննարկման փուլում է:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից բավարարվել է նախորդ հաշվետու ժամանակահատվածում ստացված 2 միջնորդություն: Հանձնումը թույլատրելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 2 որոշում բողոքարկվել է դատական կարգով, որոշումները թողնվել են անփոփոխ:

Դատարան է ներկայացվել 31 միջնորդություն օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ-ում հայտնաբերված անձանց նկատմամբ ժամանակավոր, ինչպես նաև հանձնման համար կալանավորում կիրառելու և կալանավորման ժամկետները երկարացնելու մասին: Դատախազները մասնակցել են նաև ՀՀ գլխավոր դատախազի՝ հանձնումը թույլատրելու մասին որոշումների դեմ բերված բողոքների քննության դատական նիստերին:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերվել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից հետախուզվող 208 (2013թ.՝ 222) անձ, որոնցից 182-ը հետախուզվել է ԱՊՀ մասնակից-պետությունների, 8-ը՝ Լեհաստանի, 4-ԱՄԷ-ի, 4-ը՝ Վրաստանի, 2-ը՝ ԱՄՆ-ի, 2-ը՝ Չեխիայի, 2-ը՝ Թուրքիայի, 1-ական հետախուզվող՝ Գերմանիայի, Լիբանանի, Քուվեյթի և ԻԻՀ-ի իրավապահ մարմինների կողմից: Հաշվետու

ժամանակահատվածում ՀՀ-ից հանձնման են ենթարկվել 17 (2013թ.՝ 10) անձ, որոնցից 4-ը՝ ՌԴ, 2-ական՝ ԻԻՀ, Վրաստան, 1-ը՝ Շվեդիա, 1-ական՝ Հարավային Կորեա և Թուրքիա:

2014 թվականին ՀՀ է տեղափոխվել ՀՀ իրավապահ մարմինների կողմից հետախուզվող 50 (2013թ.՝ 61) անձ, որոնցից 40-ը՝ ՌԴ-ից, 3-ը՝ Վրաստանից, 2-ը՝ Ղազախստանից, 1-ական՝ Հունաստանից, Ավստրիայից, Բելգիայից, Գերմանիայից և Բելառուսից:

Բացի այդ, հաղորդումներ են ստացվել ՀՀ-ում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող անձանց վերաբերյալ: Հայտնաբերված հետախուզվողների քաղաքացիության պարզման նպատակով հարցումներ են կատարվել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, անմիջապես տեղեկացվել է հետախուզման նախաձեռնողը, պահանջվել են հանձնման փաստաթղթեր, իսկ ՀՀ քաղաքացի հանդիսանալու պարագայում ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնելու նպատակով պահանջվել են հարուցված քրեական գործերը:

Այլ պետությունների իրավապահ մարմիններին քրեական հետապնդում իրականացնելու հանձնարարությամբ ուղարկվել է 16 (2013թ.՝ 30) քրեական գործ և նյութեր, որոնցից 14-ն ուղարկվել է ԱՊՀ իրավասու մարմիններին, իսկ 2-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին:

Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 17 (2013թ.՝ 17) քրեական գործ և նախապատրաստված նյութեր:

Քրեական գործերի ստացումը և ուղարկումը նկատելիորեն կանոնակարգել է դրանց ստացման ժամկետների, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993թ. Մինսկի կոնվենցիայի պահանջներին դրանց համապատասխանության և հանձնման թույլտվության սահմաններում քրեական հետապնդման արդյունքների մասին հայտնելու բնագավառում իրականացվող գործունեությունը:

Հատկանշական է ԱՄՆ իրավապահ մարմինների հետ իրավական օգնության բնագավառում պայմանագրի բացակայության պայմաններում իրականացվող մշտական արդյունավետ համագործակցությունը, որն ընթանում է ԱՄՆ-ում հանցագործություն կատարած և Հայաստանում թաքնվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձանց քրեական հետապնդման նպատակով ԱՄՆ իրավասու մարմիններին հանձնելու, ԱՄՆ-ում հարուցված քրեական գործերը Հայաստանի Հանրապետությունում քննելու համար տրամադրելու, ինչպես նաև համագործակցության այլ ձևերով:

Պատժի հետագա կրման նպատակով դատապարտյալների փոխանցման հարցերը կարգավորող միջազգային-իրավական փաստաթղթերով այս ոլորտի պատասխանատուն ՀՀ արդարադատության նախարարությունն է, հստակեցվել են նաև այս բնագավառում ցուցաբերվող համագործակցության շրջանակները: Նմանատիպ դիմումների հետագա ընթացքը լուծելու նպատակով դրանք վերահասցեագրվում են ՀՀ արդարադատության նախարարությանը:

Հաշվետու ժամանակահատվածում այս ոլորտում համագործակցության շրջանակներում կազմակերպվել է այլ պետությունների դատախազությունների,

իրավապահ այլ մարմինների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ու պատվիրակությունների շուրջ 10 հանդիպում ՀՀ գլխավոր դատախազի և գլխավոր դատախազի տեղակալների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում ակտիվ համագործակցությունը շարունակել է զարգացնել 2008 թվականի դեկտեմբերի 9-ին Ստեփանակերտ քաղաքում երկու պետությունների գլխավոր դատախազների կողմից կնքված՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության միջև համագործակցության մասին» համաձայնագիր-հուշագրի շրջանակներում:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազությունը շարունակել է զարգացնել իր համագործակցությունը Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարի մշտական ներկայացուցչի գրասենյակի, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի, ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի, ԵԱՀԿ-ի, ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի քարտուղարության, Դատախազների Միջազգային Ասոցիացիայի, Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդից ստացվել է 102 (2013թ.՝ 61) փաստաթուղթ: Ստացված փաստաթղթերը ուսումնասիրվել են, ներկայացվել են կարծիքներ և առաջարկություններ, կազմվել են տեղեկատվական նամակներ և կատարման ուղարկվել դատախազության այլ ստորաբաժանումներ:

ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի գործադիր քարտուղարի խնդրանքով, տեղեկատվության փոխանակման կարգով, տրամադրվել են մի շարք տեղեկանքներ:

ՀՀ դատախազությունը մասնակցել է միջազգային-իրավական համագործակցության հարցերով Հայաստանի Հանրապետության միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերի ու համաձայնագրերի, ներպետական իրավական ակտերի նախագծերի մշակմանը:

Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ՀՀ դատախազությունը ներգրավված է ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի համաձայն Հայաստանի համատեղ զեկույցները նախապատրաստող աշխատանքային խմբում:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության ոլորտում կարևորագույն ձեռքբերումը վերջին տարիներին մի շարք պետությունների դատախազությունների միջև երկկողմ համագործակցության ակտիվացմանն ուղղված համաձայնագրերի և նորերի կնքման համաձայնության ձեռքբերումն է:

ՀՀ գլխավոր դատախազության 2014թ. 2-րդ կիսամյակի աշխատանքի ծրագրի 3-րդ կետի համաձայն՝ ուսումնասիրվել է **2012-2013թթ. ընթացքում օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների կողմից հետախուզվող և Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված անձանց վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն հաղորդում ներկայացնելու, ձերբակալման կարգի, դատարան ներկայացված կալանավորման միջնորդությունների քննարկման պրակտիկայի վիճակը**:

Ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ գործնականում խնդիրներ են առաջանում օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և հայերենին չտիրապետող անձանց ձերբակալելիս, երբ նրանց չեն հանձնվում ձերբակալման արձանագրության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 17.09.2007թ.-ի N 3-Ն հրամանով հաստատված՝ մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների մասին գրավոր ծանուցումների թարգմանությունները: Արդյունքում՝ խախտվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.4-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, համաձայն որի՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող անձանց տրվում են նշված հոդվածի առաջին մասով նախատեսված հանձնման ենթակա փաստաթղթերի պատճեններն այն լեզվով, որին նրանք տիրապետում են և ՀՀ Կառավարության 14.06.2007թ. N 818-Ն որոշմամբ հաստատված՝ մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների ծանուցման կարգի 6-րդ կետի պահանջները, ըստ որի, եթե անձը չի տիրապետում հայերենին, ապա գրավոր ծանուցումը տրվում է նրան հասկանալի լեզվով:

Ավելին՝ ՀՀ Կառավարությանն առընթեր ոստիկանության կողմից մինչ օրս համակարգային մակարդակով չի լուծվել հայերենին չտիրապետող անձանց պետական միջոցների հաշվին թարգմանիչ տրամադրելու և դատավարական փաստաթղթերի թարգմանությունն ապահովելու հարցը, ինչը լուրջ խոչընդոտներ է ստեղծում անձանց ձերբակալելիս հետաքննության մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.4 կետով սահմանված իրավունքներն ապահովելու հարցում, մինչդեռ ըստ նշված հոդվածի 3-րդ մասի՝ արգելանքի վերցված անձանց իրավունքների ապահովումը հետաքննության մարմինների պարտականությունն է:

Դատավարական փաստաթղթերի թարգմանությունն ապահովելու հարցը արդյունավետ կերպով լուծվել է Հայաստանի Հանրապետության դատախազությունում: Անհրաժեշտության դեպքում փաստաթղթերի թարգմանությունն ապահովում է դատախազության աշխատակազմը՝ համապատասխան մասնագետների և լիցենզավորված թարգմանչական գրասենյակների միջոցով:

Այս կապակցությամբ խնդիրներ կարող են առաջանալ միայն տոնական և ոչ աշխատանքային օրերին հետախուզվողներին ձերբակալելիս, քանի որ դատավարական փաստաթղթերի թարգմանությունն անհրաժեշտ է ապահովել մինչև օրենքով ձերբակալման համար սահմանված 72 ժամը լրանալը՝ անձանց կալանավորելու համար դատարան միջնորդություն ներկայացնելու նպատակով:

Ուսումնասիրությամբ վեր հանված խախտումները բացառելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին ու տարածքային դատախազություններին տրվել է 24.02.2014թ. N 21/2-14 հանձնարարականը, իսկ պատկան մարմիններին ներկայացվել են միջնորդագրեր՝ թերությունները և բացթողումները վերացնելու կամ շտկելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար:

### *8. Իրավական ապահովման ոլորտ*

Հաշվետու ժամանակաշրջանում իրավական ապահովման ոլորտում ՀՀ դատախազության կողմից դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունների հիման վրա մշակվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր, որոնց նպատակն է կատարելագործել ՀՀ օրենսդրությունը և բարելավել ՀՀ դատախազության գործունեությունը, ամփոփվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացված կարծիքները, գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին ներկայացվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ամփոփ կարծիքներ:

Մասնավորապես, հաշվետու ժամանակաշրջանում իրավաստեղծ գործունեության ոլորտում իրականացվել են իրավական ակտերի մշակման և լրամշակման աշխատանքներ: Լրամշակվել են շուրջ 26 (2013թ.՝ 26) իրավական ակտ: Հաշվետու ժամանակահատվածում արդյունքում ներկայացվել է 3 (2013թ.՝ 2) օրենսդրական նախաձեռնություն՝ շուրջ 4 օրենքի նախագիծ:

Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել է ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների 95 (2013թ.՝ 123) հրաման:

Հաշվետու ժամանակաշրջանում ստացվել են 149 (2013թ.՝ 31) օրենքի, 38 (2013թ.՝ 22) կառավարության որոշման, 2 (2013թ.՝ 2) վարչապետի որոշման նախագծեր, որոնք ուսումնասիրվել են և դրանց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան կարծիքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ դատախազությունը շարունակել է իրականացնել.

1) ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված հավելվածներով ՀՀ դատախազության մասով նախատեսված միջոցառումները,

2) ՀՀ Նախագահի 2012թ. ապրիլի 16-ի «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2012-2013 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N ՆԿ-52-Ա կարգադրությամբ հաստատված հավելվածով ՀՀ դատախազության մասով նախատեսված միջոցառումները,

3) ՀՀ Կառավարության 2012թ. ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրի դրույթների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 533-Ն որոշմամբ հաստատված հավելվածով ՀՀ դատախազության մասով նախատեսված միջոցառումները.

4) ՀՀ Կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության

Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 15-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1694-Ն որոշմամբ հաստատված հավելվածով՝ ՀՀ դատախազության մասով նախատեսված միջոցառումները ՀՀ դատախազության մասով նախատեսված միջոցառումները

5) ՀՀ Նախագահի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ-159-Ն կարգադրության՝ ՀՀ Կառավարության կողմից 2014 թվականի փետրվարի 27-ին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 303-Ն որոշմամբ նախատեսված միջոցառումների ծրագրով ՀՀ դատախազության մասով նախատեսված միջոցառումները:

Այսպես, Հայաստանի Հանրապետության Նախագահի 30.06.2012թ. ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թ.թ. ռազմավարական ծրագրի» իրականացման շրջանակներում կազմվել, ներքին շրջանառության են դրվել և ՀՀ արդարադատության նախարարություն են ուղարկվել մի շարք օրենքների նախագծեր՝ ուղղված դատախազության գործունեության բարեփոխմանն ու դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի կատարելագործմանը՝ եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու և եվրաինտեգրման քաղաքականության իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ՀՀ Նախագահի 30.06.2012թ. N ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով» և դրանից բխող միջոցառումների ցանկի 7.1.1, 7.1.2, 7.1.3., 7.4.1, 7.8 կետերով նախապատրաստվել և մշակվել են իրավական ակտերի նախագծեր:

ՀՀ դատախազության մասով նախատեսված վերը նշված մի շարք միջոցառումներ ներկայումս իրականացման փուլում են, որոնք վերաբերում են գործող օրենսդրության կատարելագործմանը և դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման արդյունավետ կառուցակարգեր սահմանելուն, մասնավորապես՝ նախատեսված է կանոնակարգել և հստակեցնել վերադաս-ստորադաս դատախազ փոխհարաբերությունը, սահմանել հանցավորության դեմ պայքարում իրավական մարմինների գործողությունների՝ դատախազության կողմից համակարգման գործառույթը, դատախազի կողմից իր լիազորությունների շրջանակներում տրված օրինական պահանջների պարտադիր կատարման վերաբերյալ դրույթը, միևնույն դատախազության կամ կառուցվածքային ստորաբաժանման շրջանակներում մեկ դատախազի վարույթից մեկ այլ դատախազի վարույթ գործերը տեղափոխելու հստակ և կանխատեսելի հիմքերը, ներդնել դատախազի օգնականի ինստիտուտը, դատախազությունում պետական ծառայությունը կարգավորող իրավական ակտի ընդունումը և այլն:

Նույն խնդրի համատեքստում են դիտարկվում նաև նշված ցանկով նախատեսված՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության հստակեցման, այդ թվում՝ դատախազության հսկողական լիազորությանը բնորոշ պետաիշխանական լծակների ու ներգործության միջոցների վերապահման, այս ոլորտում հսկողության և

վերահսկողության մեթոդների ու եղանակների սահմանման հարցերը, ինչպես նաև պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման ոլորտում դատախազական գործառույթի հստակեցման՝ ՀՀ գլխավոր և ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունների կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային դատախազությունների միջև այս լիազորություններից բխող գործառույթների իրականացման շրջանակները հստակեցնելու չափորոշիչները սահմանելու հարցերը և այլն:

Նշված օրենսդրական փաթեթները, սահմանված ժամանակացույցի համաձայն, կազմվել և ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն՝ սահմանված կարգով ընթացքը լուծելու և քննարկման, իսկ մյուս մասը մշակման փուլում են: Այսպես,

1. Դատախազության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծեր՝ ի կատարումն Ծրագրի 7.1.1-րդ և 7.3.1-րդ կետերի (որպես դատախազների անկախության ապահովման երաշխիք վերանայել դատախազների նշանակման, ծառայողական առաջխաղացման կարգն ու պայմանները՝ նախատեսելով օբյեկտիվ և թափանցիկ ընթացակարգերը բարեփոխել դատախազների կարգապահական պատասխանատվության ենթարկելու համակարգը՝ հստակեցնելով այն կարգավորող նորմերը):

2. լրամշակվել են «Դատախազության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերը՝ ի կատարումն Ծրագրի 7.1.3-րդ, 7.1.2-րդ, 7.6-րդ, 7.9-րդ, 7.8-րդ կետերի (հստակեցնել դատախազների վերադասության հարաբերությունները կարգավորող նորմերը՝ համապատասխան սահմանել միևնույն դատախազության կամ կառուցվածքային ստորաբաժանման դատախազի վարույթից նույն դատախազության կամ կառուցվածքային ստորաբաժանման մեկ այլ դատախազի վարույթ գործերը տեղափոխելու հստակ և կանխատեսելի հիմքեր, ուսումնասիրել պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության դատախազական գործառույթի բնագավառում միջազգային փորձը, հանցավորության դեմ պայքարում իրավապահ մարմինների գործողությունների համակարգման կազմակերպահրավական կառուցակարգերը, ապահովել դատախազի կողմից իր լիազորությունների շրջանակում տրված օրինական պահանջների պարտադիր կատարումը):

ՀՀ Կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրի դրույթների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 533-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ դատախազությունը հանդիսանում է իր իրավասությունների մասով իրականացվելիք միջոցառումների համակատարող, որի վերաբերյալ ՀՀ ազգային անվտանգության խորհուրդ է ներկայացվել համապատասխան հաշվետվություն:

Ի կատարումն ՀՀ Նախագահի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը հաստատելու

մասին» ՆԿ-159-Ն կարգադրության՝ ՀՀ Կառավարության կողմից 2014 թվականի փետրվարի 27-ին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 303-Ն որոշմամբ նախատեսված միջոցառումների ծրագրով սահմանված գործողություններից ՀՀ դատախազությանը վերաբերում են 29-րդ և 36-րդ կետերում նշված գործողությունները, որոնց մասով ՀՀ Նախագահի աշխատակազմ է ներկայացվել համապատասխան հաշվետվություն:

ՀՀ գլխավոր դատախազի 2014թ. հոկտեմբերի 29-ի՝ «Անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոլորտում պարտականությունների բաշխում կատարելու մասին» N 85 հրամանով իրականացվել է անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեությանն առնչվող իրավական ակտերի ուսումնասիրություն, ՀՀ գլխավոր դատախազին և նրա տեղակալներին ներկայացվել են դրանց արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ, այս ոլորտում ապահովվել է այլ մարմինների ու կազմակերպությունների հետ համագործակցությունը:

2014 թվականի ընթացքում ՀՀ դատախազությունն աջակցել է դատախազության աշխատողների ուսուցման և որակավորման բարձրացման գործընթացի արդյունավետության բարելավմանը: Դատախազները, ներգրավված են դատախազների վերապատրաստման, ինչպես նաև դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման դասընթացներին՝ Արդարադատության ակադեմիայում դասախոսելով մի շարք առարկաներ:

Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից շարունակվել է «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի հրատարակման աշխատանքների կազմակերպումը: 2014 թվականին հարատարակվել է «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի 5 համար:

ՀՀ դատախազության գործունեության միատեսակ և միասնական գործունեությունն ապահովելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին և դատախազություններին է ուղարկվել 11 շրջաբերական, որոնք վերաբերել են ՀՀ դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերում կատարված փոփոխություններին, լրացումներին, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներին, ՀՀ Կառավարության կողմից ընդունված որոշումներին:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ դատախազությունը ՀՀ օրենսդրության կատարելագործման հարցերով ակտիվորեն համագործակցել է այլ գերատեսչությունների ու կազմակերպությունների, մասնավորապես՝ ՀՀ Կառավարության, ԱԺ պետահիրավական հարցերի հանձնաժողովի, ՀՀ ազգային անվտանգության խորհրդի, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ տարածքային կառավարման նախարարության (Միգրացիոն պետական ծառայություն), ՀՀ ոստիկանության համապատասխան վարչությունների ու բաժինների, ՀՀ

կենտրոնական բանկի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, ՀՀ հատուկ քննչական ծառայության և այլ գերատեսչությունների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ դատախազությունը՝ դատախազության բարեփոխումների և եվրաինտեգրման գործընթացի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում համագործակցել է նաև այլ պետությունների դատախազությունների հետ: Այդ կապակցությամբ հատկանշական են դեղամիջոցների հետ կապված հանցագործությունների հարցերով անկախ փորձագետ Լ. Բլոնդյունի (23.01.2014թ.), վկաների պաշտպանության միջազգային փորձագետ Ռ. Գասպարի (06.02.2014թ.), ինչպես նաև «Աջակցություն Հայաստանում պրոբացիոն ծառայության ստեղծմանը» ծրագրի շրջանակներում (17.10.2014թ.) ՀՀ գլխավոր դատախազությունում կազմակերպված հանդիպումները:

Ակտիվ է եղել համագործակցությունը նաև ԱՊՀ անդամ-պետությունների գործադիր կոմիտեի, ԱՊՀ անդամ-պետությունների կոորդինացիոն խորհրդի, Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի, ինչպես նաև մի շարք միջազգային կազմակերպությունների և զարգացման ծրագրերի («Թրանսպարենսի ինթերնեյշնլ» ՀԿ, Երևանում ժողովրդավարության զարգացման ծրագիր, ԵՄ թվինինգ ծրագիր և այլն) հետ:

Հաշվետու ժամանակահատվածում դատախազները մասնակցել են միջազգային համագործակցության, եվրաինտեգրման, մարդու իրավունքների պաշտպանության, քրեական դատավարության և քրեական օրենսգրքերի հայեցակարգերի և նախագծերի քննարկման և այլ թեմաներով կազմակերպված 12 հանդիպումների, սեմինար-խորհրդակցությունների և քննարկումների:

ՀՀ դատախազությունն ընդգրկված է «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի 1954 թվականի կոնվենցիայի հարցերով փորձագետների միջգերատեսչական մշտական աշխատանքային խմբում:

Այս ոլորտում որպես հիմնախնդիր կարելի է առանձնացնել այն, որ շատ դեպքերում ՀՀ Կառավարությունը ՀՀ դատախազության վերաբերյալ մշակված կամ ՀՀ դատախազությանն առնչվող իրավական ակտերի նախագծերը չի ուղարկում ՀՀ գլխավոր դատախազություն՝ կարծիք ստանալու նպատակով, և արդյունքում՝ դատախազությունը չի կարողանում ժամանակին ներկայացնել դիրքորոշում նշված նախագծերի վերաբերյալ:

## *9. ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ*

### *1) Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ*

Հաշվետու ժամանակահատվածում **ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտում՝** ՀՀ ԶՈւ–ի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 3,728 (2013թ.՝ 4,032) դեպք: Նվազում է արձանագրվել 304 դեպքով կամ 7.5%-ով: Արձանագրված դեպքերից 2,578-ը (2013թ.՝ 2,883) կամ 69.2%-ը (2013թ.՝ 71.5%) եղել են պատահարներ-զանցանքներ, 1,150-ը (2013թ.՝ 1,134) կամ 30.8%-ը (2013թ.՝

28.1%)՝ հանցագործություններ, այդ թվում՝ 746-ը (2013թ.՝ 766) կամ 64.9%-ը (2013թ.՝ 67.5%)՝ զինվորական, 404-ը (2013թ.՝ 368) կամ 35,1%-ը (2013թ.՝ 32.5%)՝ այլ ընդհանուր: Նախորդ տարվա համեմատ պատահարները նվազել են 305 դեպքով կամ 10.6%-ով, հանցագործություններն՝ աճել են 16-ով կամ 1.4%-ով:

Ընդ որում, զինվորական հանցագործությունները նվազել են 20-ով կամ 2.6%-ով, իսկ այլ հանցագործություններն աճել՝ 36-ով կամ 9.8%-ով: Եթե 2013թ. ընթացքում արձանագրված 1,134 հանցագործությունից 114-ը կամ 10.6%-ն է եղել ծանր և առանձնապես ծանր, որոնցից 83-ը՝ ծանր, իսկ 31-ը՝ առանձնապես ծանր, ապա 2014թ. արձանագրված 1,150 հանցագործությունից ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ եղել է 187-ը կամ 16.3%-ը, որոնցից 116-ը՝ ծանր, 71-ը՝ առանձնապես ծանր: Այսինքն՝ նախորդ տարվա համեմատ ծանր հանցագործություններն աճել են 33-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները՝ 40-ով:

2014թ. ընթացքում արձանագրվել է զինվորական ծառայության հետ կապված մահվան 40 (2013թ.՝ 29) դեպք, որի հետևանքով մահացել է 44 (2013թ.՝ 30) զինծառայող: Մահվան դեպքերն ունեն հետևյալ պատկերը.

Հակառակորդի կողմից սպանություն՝ 26 (2013թ.՝ 6), սպանություն՝ 2 (2013թ.՝ 3), ականի պայթյունից՝ 2 (2013թ.՝ 1), զենքի հետ վարման կանոնների խախտման հետևանքով՝ 1 (2013թ.՝ 1), ինքնասպանություն և ինքնասպանության հասցնելու՝ 3 (2013թ.՝ 8), հիվանդություններից՝ 4 (2013թ.՝ 4), ավտովթարից՝ 1 (2013թ.՝ 4), դժբախտ պատահարից 3 (2013թ.՝ 3) և դեռևս չպարզված հանգամանքներ՝ 2:

Հաշվետու ժամանակաշրջանում ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ է ստացել 1,330 (2013թ.՝ 1,346) զինծառայող, այսինքն՝ նվազում է արձանագրվել 16-ով կամ 1.2%-ով: 58 (2013թ.՝ 52) զինծառայող ստացել է ծանր մարմնական վնասվածք, 1,271-ը (2013թ.՝ 1,281)՝ միջին ծանրության և թեթև, 1-ի (2013թ.՝ 13) մարմնական վնասվածքների ծանրության աստիճանը ամփոփումների պահին դեռևս պարզված չի եղել:

Հաշվետու ժամանակաշրջանում 1,330 (2013թ.՝ 1,346) մարմնական վնասվածքից 423-ը (2013թ.՝ 405) կամ 31.8%-ը (2013թ.՝ 30.1%) պատճառվել է հանցագործության հետևանքով:

2014թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության դատախազների հսկողությամբ նախապատրաստվել է 4,336 (2013թ.՝ 4,696) նյութ, որոնցից 1,249-ը (2013թ.՝ 1,230)՝ քննչական, 3,087-ը (2013թ.՝ 3,466)՝ ՌՈ ստորաբաժանումների և զորամասերի կողմից:

Քննչական ստորաբաժանումների կողմից նախապատրաստված 1249 նյութից 768-ով (2013թ.՝ 806) հարուցվել է քրեական գործ, 450-ը (2013թ.՝ 352)՝ մերժվել է, որոնցից 300-ը (2013թ.՝ 182)՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 149-ը (2013թ.՝ 166)՝ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-13-րդ կետերով, 1-ը (2013թ.՝ 4)՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, 4 (2013թ.՝ 17) նյութ ուղարկվել է ըստ ենթակայության, 26 (2013թ.՝ 47) նյութ միացվել է այլ նյութերի, իսկ 1 (2013թ.՝ 8) նյութ փոխանցվել է 2015թ.:

Մերժված 450 (2013թ.՝ 352) նյութի օրինականությունն ստուգվել է:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ՊՆ ՌՈ մարմինների և զորամասերի կողմից նախապատրաստված և ընթացք տրված 3,087 (2013թ.՝ 3,466) նյութից 2,308-ով (2013թ.՝ 2,414) մերժվել է քր. գործի հարուցումը: Դրանցից 2,277 (2013թ.՝

2,376)՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 31-ը (2013թ.՝ 38)՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-13-րդ կետերի հիմքերով, 768-ն (2013թ.՝ 1,022) ուղարկվել է ըստ ենթակայության, 11 (2013թ.՝ 21) նյութ փոխանցվել է 2015թ., (2013թ. 9 նյութ միացվել է այլ նյութերի):

Հետաքննության մարմինների կողմից նախապատրաստված նյութերով կայացված 2,308 մերժման որոշումից 8-ը (2013թ.՝ 8) վերացվել է, հարուցվել է քրեական գործ: Դրանցից 1-ը (2013թ.՝ 4) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 5-ի (2013թ.՝ 1) վարույթը կարճվել է, 1-ն (2013թ.՝ 0) ուղարկվել է ըստ ենթակայության, 1 (2013թ.՝ 2) քրեական գործի նախաքննությունն ընթացքի մեջ է (2013թ.՝ 1 քրեական գործի վարույթը կասեցվել է):

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ զինվորական դատախազության դատախազների կողմից դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել ՀՀ ՔԿ ԶՔԳՎ բաժինների վարույթում քննվող 2,279 (2013թ.՝ 1,898) քրեական գործի նկատմամբ, այդ թվում՝ 12-ը (2013թ.՝ 5)՝ կրկնակի: Դրանցից 299-ը (2013թ.՝ 330) փոխանցվել է նախորդ տարվանից, 1,260-ը (2013թ.՝ 1,255) հարուցվել է հաշվետու տարում, որոնցից 989-ը (2013թ.՝ 999)՝ քննչական մարմնի, 8-ը (2013թ.՝ 1)՝ հետաքննչական մարմնի, 263-ը (2013թ.՝ 255)՝ կայազորների զինվորական դատախազների կողմից, 491-ը (2013թ.՝ 150) ստացվել է այլ մարմիններից, 29-ը անջատվել է այլ քրեական գործերից (2013թ.՝ 19), 197-ով (2013թ.՝ 139) վերսկսվել է նախաքննությունը, 3-ը (2013թ.՝ 5) դատախազի կողմից վերադարձվել է լրացուցիչ նախաքննության:

1,286 (2013թ.՝ 1,267) քրեական գործի նախաքննությունն ավարտվել է: Ավարտված քրեական գործերից 776-ը՝ 1,156 անձի նկատմամբ (2013թ.՝ 729 գործ, 1,030 անձ) մեղադրական եզրակացությամբ, 9 գործ 9 անձի (2013թ.՝ 0) նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ ուղարկվել է դատարան:

501 քրեական գործով վարույթը կարճվել է (2013թ.՝ 538): Դրանցից 216-ը (2013թ.՝ 277)՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, այդ թվում՝ 20-ը (2013թ.՝ 33) 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 196-ը (2013թ.՝ 244)՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, 224-ը (2013թ.՝ 206)՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-13-րդ կետերի հիմքով և 61-ը (2013թ.՝ 55)՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածի 1-ին մասով:

2014թ. 154 (2013թ.՝ 125) քրեական գործով վարույթը կասեցվել է, որոնցից 64-ը (2013թ.՝ 65)՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 35-ը (2013թ.՝ 31)՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 55-ը (2013թ.՝ 29)՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով: 68 (2013թ.՝ 87) քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 125-ը (2013թ.՝ 112) միացվել է այլ քրեական գործերի, 640-ը (2013թ.՝ 299) փոխանցվել է 2015թ.:

2014թ. ընթացքում դատախազների կողմից վերացվել է քրեական գործով վարույթը կարճելու 9 (2013թ.՝ 4) որոշում, քրեական գործի վարույթը կասեցնելու 25 որոշում:

Հաշվետու ժամանակաշրջանում դատախազների կողմից քրեական գործերով տրվել է 296 (2013թ.՝ 208) գրավոր ցուցում: Դրանցից ոչ մեկի դեմ բողոք չի բերվել ինչպես 2013թ., այնպես էլ 2014թ. ընթացքում:

2014թ. քրեական գործերով և նյութերով ՀՀ քր. դատ. օր.-ի 200-րդ հոդվածի կարգով՝ հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին, դատախազների կողմից 118 (2013թ.՝ 210) միջնորդագիր է ներկայացվել համապատասխան պաշտոնատար անձանց:

Բացի այդ, քրեական գործերով և նյութերով դատախազների կողմից պետական և այլ մարմիններին ներկայացվել են 46 (2013թ.՝ 120) միջնորդություն և հաղորդում:

2014թ. ընթացքում դատախազների կողմից լրացուցիչ նախաքննության է վերադարձվել 3 (2013թ.՝ 5) քրեական գործ՝ մեղադրական եզրակացությունը չհաստատելու պատճառով: Մեղադրական եզրակացությունը չհաստատված 3 քրեական գործից 2-ն ավարտվել է, որոնցից 1-ն ուղարկվել է դատարան, իսկ 1-ի վարույթը կարճվել է:

Հաշվետու ժամանակահատվածում, հետաքննության և նախաքննության բնագավառի աշխատանքների հետ կապված, կատարվել են 517 (2013թ.՝ 546) ուսումնասիրություն, ստուգում և ամփոփում: Այդ թվում՝

«2012-2013թ.թ. ընթացքում ՀՀ ԶՈՒ սպաների կողմից կատարված հանցագործությունների և այլ իրավախախտումների վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման, նյութերի նախապատրաստման, քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության և մեղադրանքի պաշտպանության բնագավառներում իրականացված դատախազական գործունեության արդյունքների վերաբերյալ»,

«2013թ. 1-ին կիսամյակի և 2014թ. 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ ԶՈՒ-ում արձանագրված մահվան ելքով դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման, նյութերի նախապատրաստման, քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության և մեղադրանքի պաշտպանության բնագավառում իրականացված դատախազական գործունեության արդյունքների վերաբերյալ»,

ՀՀ զինվորական դատախազության և Պաշտպանության նախարարության 2014թ. համատեղ միջոցառումների պլանով նախատեսված ամսական և եռամսյակային ամփոփումներ՝ կապված «Զինծառայողների իրավական գիտելիքներն ընդլայնելու, իրավագիտակցությունը բարձրացնելու նպատակով զորամասերում իրավական թեմաներով դասախոսությունների վերաբերյալ»,

«Կոռուպցիոն ռիսկեր պարունակող, զինծառայողների բարոյահոգեբանական և զինվորական կարգապահության վիճակի վրա ազդող բացասական երևույթների, սոցիալական անհավասարության և հովանավորչության դրսևորումների վերաբերյալ»,

«ՊՆ և ՊԲ զորամասերում զինվորական կարգապահության վրա ազդող բացասական գործոնների, ինքնասպանությունների, ինքնախեղումների, ոչ կանոնագրքային հարաբերություններ ծնող պատճառների վերաբերյալ»,

«ՊՆ զորամասերում, զորամիավորումներում հանցագործությունների, պատահարների, զինծառայողների զոհվելու և վիրավորվելու դեպքերի հաշվառումը կանոնակարգելու և հանցագործությունների օպերատիվ բացահայտմանն ուղղված միջոցառումների մասին» ՀՀ ՊՆ 22.04.2008թ. N 478 հրամանի պահանջների կատարման ընթացքի վերաբերյալ:

Հանցագործությունների բացահայտման, կորած գույքի հայտնաբերման, հանցագործություն կատարած անձանց հայտնաբերելու, հետախուզում իրականացնելու և այլ հարցերով տեղեկություններ ստանալու նպատակով ՕՀ միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ կատարված վերլուծություններով պարզվել է, որ դեռևս պահանջվող մակարդակի վրա չէ դատախազների, քննչական և օպերատիվ-հետախուզական աշխատողների համագործակցությունը հանցագործությունների բացահայտման բնագավառում: Հետաքննական մարմինները չբացահայտված հանցագործությունների վերաբերյալ նյութեր նախապատրաստելուց և նախաքննական մարմնին կամ դատախազություն ուղարկելուց հետո, ոչ միշտ են ակտիվորեն մասնակցում հանցագործությունների բացահայտմանը, իսկ քննչական մարմիններն այդպիսի փաստերով հարուցված քրեական գործերով նախաքննության ընթացքում երբեմն լիարժեք չեն համագործակցում օպերատիվ ծառայությունների հետ, տրված հանձնարարությունները երբեմն լինում են մակերեսային և կրում ձևական բնույթ: Զինվորական դատախազության դատախազները այդ գործերով դատախազական հսկողություն իրականացնելու ընթացքում պարբերաբար ուսումնասիրել են քրեական գործերի նյութերը, տվել գրավոր ցուցումներ՝ կատարվելիք գործողությունների անհրաժեշտության, դրանց հաջորդականության և առանձին գործողությունների տակտիկայի ու մեթոդիկայի հարցերի վերաբերյալ: Չնայած ցուցումների պահանջներն ըստ էության կատարվել են, սակայն կատարված գործողությունները և ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումները պահանջված արդյունքները չեն տվել և հանցագործությունները մնացել են չբացահայտված:

2014թ. հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 7 (2013թ.՝ 19) միջնորդություն, որոնց հիման վրա անցկացված ծառայողական քննության արդյունքներով հետաքննության կամ նախաքննության մարմինների աշխատակիցները կարգապահական տույժերի չեն ենթարկվել (2013թ.՝ 7):

2014թ. նախաքննության կատարման ընթացքում 5 (2013թ.՝ 1) քննիչ է վարույթից հեռացվել:

2014թ. ՀՀ զինվորական դատախազության սպասարկման տարածքում անչափահասների կողմից կատարված հանցագործության 2 (2013թ.՝ 1) դեպք է արձանագրվել, որոնցով հարուցվել են քրեական գործեր: Դրանցից 1-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, մյուսի նախաքննությունն ընթացքի մեջ է:

2014թ. ընթացքում քրեական գործերի նախաքննության ժամկետների երկարացման պատճառները հիմնականում կապված են եղել տարբեր, իսկ երբեմն էլ նույն քրեական գործով 1-ից ավելի փորձաքննություններ նշանակելու և դրանց եզրակացությունները երկամսյա ժամկետում չստանալու հետ: Դրանք հիմնականում եղել են դատահոգեբուժական, ռազմաբժշկական, դատաձգաբանական, ինչպես նաև համալիր ու հանձնաժողովային փորձաքննություններ: Մասնավորապես, դատաձգաբանական փորձաքննությունները, եթե կապված են լինում հրազենային մարմնական վնասվածքներ պատճառելու հանգամանքների ստուգման հետ,

կասեցվում են մինչև դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններն ստանալը:

Մինչև քրեական գործերի նախաքննության ժամկետը երկարացնելը քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, պարտադիր կարգով, մեկ անգամ ևս ուսումնասիրում է գործի նյութերը, չհիմնավորված ձգձգումների դեպքում նախաքննության մարմնին ցուցումներ է տալիս դրանք վերացնելու և հետագայում թույլ չտալու վերաբերյալ: Չնայած ժամկետների երկարացումները հիմնականում ունեցել են օբյեկտիվ պատճառներ, սակայն քրեական գործերը ճիշտ պլանավորելու, աշխատանքը ճիշտ կազմակերպելու, փորձաքննությունները ժամանակին նշանակելու, քննության համաչափությունը պահպանելու դեպքում դրանց մի մասից հնարավոր կլիներ խուսափել: Յուրաքանչյուր քրեական գործով ժամկետ երկարացնելիս, պարտադիր կարգով, նախաքննական մարմնի ուշադրությունը հրավիրվում է այդ հանգամանքի վրա:

Հատուկ ուշադրություն է դարձվել կալանավորված անձանց հետ կամ նրանց մասնակցությամբ քննչական գործողությունները առանց ձգձգելու կատարելու անհրաժեշտության և կալանավորական գործերով նախաքննությունը ժամանակին ավարտելու ու կալանքի տակ պահելու ժամկետներն առանց բավարար հիմքերի երկարացնելու անթույլատրելիության վրա:

2014թ. ընթացքում քննչական մարմինների վարույթում քննված քրեական գործերով և նախապատրաստված նյութերով հիմնավորվել են հանցագործություններով պետությանը 78,819,078 (2013թ.՝ 244,593,454) դրամի վնասի պատճառման փաստերը, որից մինչդատական վարույթում վերականգնվել է 25,860,932 (2013թ.՝ 30,338,630) դրամը:

***2) Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ***

2014թ. ընթացքում զինծառայողների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազության դատախազների կողմից մեղադրական եզրակացությամբ ընդհանուր իրավասության դատարաններ է ուղարկվել 776 քրեական գործ, 1,156 անձի (2013թ.՝ 729 գործ, 1,030 անձ) վերաբերյալ: Դատարան ուղարկված բոլոր գործերն էլ ընդունվել են վարույթ:

Նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ ընդհանուր առմամբ 713 քրեական գործ 1,045 անձի վերաբերյալ քննվել է դատարանում, որոնցից 695 քրեական գործի դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 1,015 անձ (2013թ.՝ 689 գործ, 1,011 անձ):

Դատարանների որոշումներով 12 քրեական գործ 18 անձի (2013թ.՝ 72 գործ, 122 անձ) վերաբերյալ կարճվել է: Բացի այդ, 55 անձ (2013թ.՝ 137 անձ) պատժի կրումից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ: 1 քրեական գործով 2 անձի վերաբերյալ և 3 առանձին քրեական գործով 3 անձի մասով կայացվել է արդարացման դատավճիռ (2013թ.՝ 2 գործ, 5 անձ), իսկ 5 քրեական գործով 5

(2013թ.՝ 2) անձի նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ:

Դատապարտված 1,015 անձից 986-ը (2013թ.՝ 959) եղել է զինծառայող: Դատապարտված զինծառայողներից 194-ը (2013թ.՝ 195) եղել է սպա, 792-ը (2013թ.՝ 764)՝ պայմանագրային և ժամկետային զինծառայող: Նախորդ տարվա համեմատությամբ 27-ով ավելացել է դատապարտված զինծառայողների թիվը: Զինծառայողների հետ մեկտեղ դատապարտվել է նաև 29 քաղաքացիական անձ, այդ թվում՝ 8 կին, 1 անչափահաս (2013թ.՝ 52, որից 10-ը՝ կին, 2 անչափահաս):

Դատապարտված 1,015 անձից 183-ը դատապարտվել են ազատազրկման, որոնցից 2 (2013թ.՝ 216) անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածը, 103-ի նկատմամբ (2013թ.՝ 229)՝ կալանքը, 107-ի նկատմամբ (2013թ.՝ 128)՝ կարգապահական գումարտակում պահելը, 69-ի նկատմամբ (2013թ.՝ 75)՝ տուգանքը, 74-ի նկատմամբ (2013թ.՝ 39)՝ զինվորական ծառայության մեջ սահմանափակումը, պատիժը պայմանականորեն չի կիրառվել ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ 479 (2013թ.՝ 324) անձի նկատմամբ: Դատապարտվածներից 15 անձ նախնական կալանքից ազատվել է այլ պատժի նշանակմամբ, այդ թվում՝ 11-ը (2013թ.՝ 21) համաներման ակտի կիրառմամբ, իսկ ազատազրկման է դատապարտվել նախնական կալանքի տակ չգտնվող 66 (2013թ.՝ 56) անձ:

Դատավճռի կայացմամբ ավարտված 1,015 անձի վերաբերյալ 695 քրեական գործից 573-ով կամ 82,4%-ով, 805 անձի (2013թ.՝ 539 գործ, 773 անձ) նկատմամբ կիրառվել է դատաքննության արագացված կարգ: 116 քրեական գործով 186 անձի (2013թ.՝ 108 գործ, 157 անձ) վերաբերյալ մեղադրողներն առարկել են դատաքննության արագացված կարգի դեմ, որը պայմանավորված է եղել ամբաստանյալների կողմից մեղադրանքը չընդունելու, պաշտպանից հրաժարվելու, ինչպես նաև առանձնապես ծանր հանցագործություն կատարած լինելու և օրենքով սահմանված 10 տարուց ավելի պատիժ սահմանելու հանգամանքներով:

Մեղադրողների կողմից 2014թ. մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու, մեղադրանքը մեղմացնելու կամ խստացնելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ ներկայացվել է 21 միջնորդություն 29 անձի վերաբերյալ, որոնցից 3-ը խստացման առումով արարքի վերաորակման, 18-ը (2013թ.՝ 18)՝ մեղմացման՝ հիմքով, որոնք դատարանի կողմից բավարարվել են:

2014թ. 1 քրեական գործով 2 անձի վերաբերյալ և 3 առանձին քրեական գործով 3 անձի (2013թ.՝ 2 գործ, 5 անձ) մասով, առանց մեղադրողի միջնորդության, դատարանի նախաձեռնությամբ կայացվել է արդարացման դատավճիռ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի մասի 2-րդ կետով: Բոլոր գործերով բերվել են վերաքննիչ բողոքներ, որոնց քննությունն ընթացքի մեջ է:

Դատարանների որոշումներով 12 քրեական գործ 18 անձի վերաբերյալ կարճվել է, այդ թվում՝ 5 գործ 7 անձի վերաբերյալ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 2 գործ 2 անձի վերաբերյալ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 1 գործ 1 անձի վերաբերյալ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածով, 1 գործ 1 անձի վերաբերյալ՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, 1 գործ 3 անձի վերաբերյալ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2 գործ 4 անձի վերաբերյալ՝ դատախազի կողմից մեղադրանքից

հրաժարվելու հիմքով (2013թ.՝ 72 գործ, 122 անձ): Նշված որոշումներից 3 գործ 5 անձի վերաբերյալ բողոքարկվել են, բողոքները մերժվել են:

Դատարանների կողմից 1 գործով 1 անձի (2013թ.՝ 0) վերաբերյալ կայացվել է վարույթը կասեցնելու որոշում՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով:

Հաշվետու ժամանակաշրջանում մեղադրողների կողմից 291 քրեական գործով 298 անձի (2013թ.՝ 162 գործ, 168 անձ) վերաբերյալ բերվել է վերաքննիչ բողոք: Դրանցից 30-ը բավարարվել է, 230-ը՝ մերժվել, 24-ի քննությունը չի ավարտվել, 7-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 265-ը բերվել է պատժի մեղմության դեմ, 2-ը՝ արդարացման, 1-ը՝ պատժի խստության, 5-ը՝ մեղադրանքի վերաորակման, 18-ը՝ այլ հիմքով:

Մեղադրողների կողմից 13 (2013թ.՝ 18) քրեական գործով բերվել է վճռաբեկ բողոք, որոնցից 9-ը հետ է վերադարձվել, 2-ը՝ բավարարվել, 1-ը՝ մերժվել, 1-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը:

ՀՀ զինվորական դատախազության համակարգում հիմնականում ապահովվել է դատարաններում մեղադրողների կողմից քրեական գործերով մեղադրանքի պաշտպանության պատշաճ որակը, նույն հանցատեսակներով փաստական հանգամանքներով միանման զինվորական հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով մեղադրողները հանդես են եկել հիմնականում միատեսակ միջնորդություններով, ինչը նպաստել է միասնական պատժողական քաղաքականության իրականացմանը և համապատասխան պրակտիկայի ձևավորմանը:

### *3) Պետական շահերի պաշտպանության ոլորտ*

ՀՀ զինվորական դատախազության դատախազների կողմից 2014թ. ընթացքում իրականացվել է պետական շահերի պաշտպանության ոլորտում 590 (2013թ.՝ 523) ուսումնասիրություն: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է պետության գույքային շահերի 401 (2013թ.՝ 470) խախտում, պետությանը պատճառված վնասը կամովին հատուցելու անհրաժեշտության մասին 180 (2013թ.՝ 311) նախազգուշացում է արվել, ուղարկվել է 160 (2013թ.՝ 180) հաղորդում:

Իրականացված ուսումնասիրություններով արձանագրվել է պետությանը պատճառված 2,234,491,618 (2013թ.՝ 1,668,362,239) դրամի վնաս:

Հաշվետու ժամանակահատվածում փաստացի վերականգնվել է պետությանը պատճառված 616,357,392 (2013թ.՝ 608,738,477) դրամի վնաս:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ զինվորական դատախազության կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով նախապատրաստվել և քննչական մարմիններին է փոխանցվել 158 (2013թ.՝ 145) նյութ, հարուցվել է պետական շահերի պաշտպանության 1 հայց՝ 267,445 դրամ (2013թ.՝ 5 հայց, 23,766,041 դրամ) բռնագանձելու պահանջի մասին:

Պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով նախապատրաստված նյութերով քննչական մարմինների կողմից հարուցվել է 67 քրեական գործ (2013թ.՝ 60):

Նախապատրաստված նյութերով և հարուցված քրեական գործերով արձանագրվել է պետությանը պատճառված 1,898,583,828 դրամի վնաս, որից 131,929,262 դրամը վերականգնվել է մինչդատական վարույթի ընթացքում, 996,250 դրամը՝ դատական քննության ընթացքում և 412,000 դրամը՝ դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո:

Նախապատրաստված 158 նյութից 91-ով քրեական գործի հարուցումը մերժվել է (ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով):

Հարուցված 67 քրեական գործից 12-ը մեղադրական եզրակացությամբ 17 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, որից 10 քրեական գործով 13 անձի վերաբերյալ կայացվել են մեղադրական դատավճիռներ, 8 անձի նկատմամբ նշանակվել է տուգանք, 4 անձի նկատմամբ՝ զինվորական ծառայության մեջ սահմանափակում, 1 անձի նկատմամբ՝ ազատազրկում՝ ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատժի հետաձգում, 2 քրեական գործ գտնվում է դատաքննության փուլում, 9 քրեական գործերով որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կարճելու մասին, որից 7 քրեական գործ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 1 քրեական գործ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածով, 1 քրեական գործ՝ համաներման ակտի կիրառմամբ, 46 քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

***4) Պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ***

ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից 2014թ. ընթացքում կայազորային կարգապահական մեկուսարաններում կատարվել են 146 (2013թ.՝ 117) ստուգում և ուսումնասիրություն, որոնց արդյունքում արձանագրվել է 1 (2013թ.՝ 3) խախտում և կարգավորման ենթակա հարց, ներկայացվել է 1 (2013թ.՝ 3) հաղորդում:

2014թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումներում կատարվել է 5 (2013թ.՝ 10) ուսումնասիրություն, որոնց ընթացքում խախտումներ չեն արձանագրվել:

2014թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից դատական ակտերի հարկադիր կատարման ստորաբաժանումներում իրականացվել է 5 (2013թ.՝ 4) ուսումնասիրություն: Խախտումներ չեն արձանագրվել:

2014թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության ավագ դատախազը դատապարտյալներին պատիժը կրելուց ազատելու գործերով դատարաններում մասնակցել է 32 (2013թ.՝ 177) միջնորդության քննությանը, որոնցից 29-ը (2013թ.՝ 45) վերաբերել են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ գործերին, 1-ը (2013թ.՝ 1)՝ պատժի կրումից հիվանդության պատճառով ազատելու վերաբերյալ գործին, 2-ի (2013թ.՝ 131) վերաբերյալ միջնորդությունների քննարկումը դատարանի կողմից կասեցվել է՝ դատավճիռը բողոքարկվելու պատճառով:

2014թ. ընթացքում դատարանի որոշմամբ 5 (2013թ.՝ 0) անձի նկատմամբ նշանակվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ:

Ինչպես նախորդ տարիներում, այնպես էլ հաշվետու ժամանակահատվածում իրականացված վերլուծությունները ցույց են տալիս, որ զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների պատճառներ են շարունակում հանդիսանալ՝

- զինծառայողների մոտ տարբեր բնույթի՝ ընտանեկան, անձնական, կենցաղային խնդիրների առկայությունը,
- ծառայության պայմաններին չհարմարվելն ու անտարբեր վերաբերմունքը ծառայության նկատմամբ,
- զինծառայողների նկատմամբ համածառայակիցների, կրտսեր ու ավագ սպայական կազմի ներկայացուցիչների կողմից դրսևորվող ոչ կանոնադրային վարքագծի դրսևորումները, որոնք հաճախ հանգեցնում են, իբրև բողոքի նշան, զորամասը կամ ծառայության վայրը լքելուն և այլն:

Ինչպես նախորդ տարիներում, այնպես էլ հաշվետու ժամանակահատվածում զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների վերլուծությունները և հարուցված քրեական գործերի, նյութերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս հանցատեսակի կատարման պատճառներ են շարունակում հանդիսանալ՝

- զինծառայողների հետ տարվող դաստիարակչական աշխատանքներում առկա բացթողումները, զինվորական կանոնագրքերի պահանջների վատ իմացությունը, ծառայությունը դրանց համապատասխան կազմակերպելու մշակույթի բացակայությունը, հատկապես զորակոչին հաջորդած ժամանակաշրջանում զորակոչիկների միջանձնային հարաբերություններում վտանգավոր ու անխուսափելի դրսևորումների կանխարգելմանն ուղղված անբավարար աշխատանքը,
- զորամասերում առանձին հեղինակությունների առկայությունը և կրտսեր հրամանատարական կազմի կողմից նրանց հակակշռելու և սեփական հեղինակությամբ նրանց ազդեցությունը չեզոքացնելու անկարողությունը,
- համածառայակիցների և կրտսեր ու ավագ սպայական կազմի հետ փոխհարաբերություններում զինծառայողների կողմից սադրիչ վարքագծի տարաբնույթ դրսևորումները,
- առանձին զինծառայողների ինքնահաստատվելու, սեփական անձի ենթադրյալ առավելություններն ընդգծելու ցանկությունն ու դրանով պայմանավորված՝ շրջապատի անխուսափելի հակազդեցությունը և այլն:

### *10. ՀՀ դատախազության պետական ծառայության ոլորտ*

Հաշվետու ժամանակահատվածում **ՀՀ դատախազության աշխատակազմը** իր համապատասխան կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների պետական ծառայողների միջոցով, իրականացրել է իր գործառույթներից բխող, իրեն վերապահված պարտականությունները. այն է՝ դատախազության ստորաբաժանումներում ստացվող փաստաթղթերի ներքին մուտքի և ելքի աշխատանքների կազմակերպում, վարել է գերատեսչական մարմիններից ստացված միջնորդությունների, քաղաքացիների դիմումների, քաղաքացիական գործերի և նյութերի, գրագրությունների, հսկողության տակ վերցված

փաստաթղթերի, հարուցված քրեական գործերի գործավարությունը, հետևել է հսկողության վերցված փաստաթղթերի ժամանակին կատարմանը, օժանդակել է ՀՀ դատախազության կոլեգիայի նիստերի նախապատրաստական ու կազմակերպական աշխատանքների իրականացմանը, աջակցել է «Օրինականություն» գիտագործնական հանդեսի ժամանակին լույսընծայման աշխատանքներին, ինչպես նաև կազմակերպել է քաղաքացիների ընդունելություն: Այսպես,

**1)** ***Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման ոլորտում*** ֆիզիկական անձանց, իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունների աշխատակիցների կատարած հանցագործությունների, պետության շահերի, օրենքով նախատեսված դեպքերում՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, օրինականության խախտումների մասին դիմումների, բողոքների և առաջարկությունների (այսուհետ՝ դիմում), պետական մարմինների պաշտոնատար անձանց գրագրության սահմանված ժամկետներում արդյունավետ քննարկման, ինչպես նաև ՀՀ դատախազությունում քաղաքացիների և այլ անձանց ընդունելության հետ կապված աշխատանքները կազմակերպել է՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածի դրույթը, և ղեկավարվել «Դատախազության մասին», «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննարկելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգը հաստատելու մասին» N 59 հրամանով հաստատված կանոնակարգով և իրավական այլ ակտերով:

2014թ. ՀՀ դատախազությունում ստացվել է 12,993 (2013թ.՝ 12,041) դիմում-բողոք, որոնցից 3,245-ը (2013թ.՝ 3,077) եղել է կրկնակի, 713-ը (2013թ.՝ 663) բավարարվել է, 972-ը (2013թ.՝ 1,093) մերժվել է, 5,813-ը (2013թ.՝ 3,775) ուղարկվել է այլ մարմին, 16 (2013թ.՝ 10) անանուն դիմում թողնվել է առանց քննարկման, 120-ը (2013թ.՝ 188) մնացել է անավարտ, 26-ը (2013թ.՝ 9) վերադարձվել է հեղինակներին, 95-ը (2013թ.՝ 97) թողնվել է առանց պատասխանի, 38-ը (2013թ.՝ 49) թողնվել է առանց լուծման, 112-ի (2013թ.՝ 55) թղթակցությունը դադարեցվել է, 2,655-ին (2013թ.՝ 2,547) տրվել է պարզաբանում, 2,310-ը (2013թ.՝ 3,470) ուղարկվել է դատախազության այլ ստորաբաժանում, 119-ի (2013թ.՝ 82) քննարկման արդյունքում հարուցվել է քրեական գործ:

Հաշվետու ժամանակահատվածում միայն այս ոլորտում ՀՀ գլխավոր դատախազությունում մուտքագրվել է 366 (2013թ. 350) քաղաքացուց ստացված 447 (2013թ. 350) դիմում, որոնցից 27-ը (2013թ. 83) (6%) (2013թ.՝ 15.2%)՝ կրկնակի, իսկ 54-ը (2013թ. 112) (12%) (2013թ. 20.6%)՝ կրկնօրինակ դիմում: Նշված 447 դիմումից 41-ը (9.2%) (2013թ.՝ 545 դիմումից՝ 57 (10,5%)) բավարարվել է, 5-ը (1.1%) (2013թ.՝ 10 (1.8%)) մերժվել է, 12 (2.7%) դիմում (2013թ.՝ 0) թողնվել է առանց պատասխան, որոնցից 7-ը դիմումատուների հետ թղթակցությունը դադարեցնելու վերաբերյալ նախկինում կազմված եզրակացությունների համաձայն, իսկ 5-ը հանձնվել է ի տնօրինություն:

2 (0.4%) դիմումի (2013թ.՝ 0) պատասխան չի տրվել՝ դիմումներն ընթեռնելի չլինելու պատճառով, 3 (0.7%) դիմում (2013թ.՝ 6 (1.1%)) թողնվել է առանց լուծման՝

տրամաբանությունից ու իմաստից զուրկ լինելու և այլ պատճառով, 1 (0,2%) դիմումի (2013թ.՝ 6 (1,1%)) պատասխան չի տրվել՝ դիմումատուի հետ թղթակցությունը դադարեցնելու վերաբերյալ կազմված եզրակացության համաձայն, 121 (27,1%) դիմումի (2013թ.՝ 189 (34.7%)) տրվել է պարզաբանում, 39 (8.7%) դիմում (2013թ.՝ 6 (1.1%)) ուղարկվել է այլ մարմիններ՝ ընթացքը լուծելու համար, 223 (49.9%) դիմում (2013թ.՝ 270 (49.5%)) ուղարկվել է դատախազության այլ ստորաբաժանում՝ դիմումում նշված փաստարկները ստուգելու կամ ներկայացված բողոքը օրենքով սահմանված կարգով քննարկելու համար:

Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու հարցերով ստացված 108 դիմումից 16-ով (14.9%) (2013թ.՝ 24 (19%)) կազմակերպվել է ընդունելություն, 6-ով (5.5%) (2013թ.՝ 4 (3.2%)) տրվել է պարզաբանում, 86 դիմում (79,6%) (2013թ.՝ 93 (73.8%)) ուղարկվել է դատախազության այլ ստորաբաժանում:

Մեղադրանքի պաշտպանության վերաբերյալ հարցերով մուտքագրվել է 11 (2.4%) դիմում (2013թ.՝ 18 (3.3%)), որոնցում կրկնակի և կրկնօրինակ դիմումներ չկան (2013թ.՝ 2):

Մեղադրանքի պաշտպանության վերաբերյալ հարցերով մուտքագրված 11 դիմումից 3-ով (27.3%) (2013թ.՝ 4 (22.2%)) կազմակերպվել է ընդունելություն, իսկ 8 դիմում (72.7%) (2013թ.՝ 13 (72.2%)) ուղարկվել է դատախազության այլ ստորաբաժանում:

Հաշվետու ժամանակահատվածում պետական շահերի պաշտպանության հարցերով մուտքագրվել է 2 դիմում (0.4%) (2013թ.՝ 3 (0.5%)), որոնցից 1-ով կազմակերպվել է ընդունելություն, իսկ մյուսն ուղարկվել է դատախազության այլ ստորաբաժանում:

Հաշվետու ժամանակահատվածում դատախազության գործունեությանը վերաբերող այլ հարցերով ստացվել է 184 (41.2%) դիմում (2013թ.՝ 165-ի (30.3%), այսինքն՝ 10.9%-ով ավելի): Նշված բնույթի դիմումներից 20-ով (10.9%) (2013թ.՝ 6 (3.6%)) կազմակերպվել է ընդունելություն:

Մուտքագրված 447 դիմումից 79-ը (17.7%) (2013թ.՝ 69 (12.7%)) վերաբերել է մարդու դեմ ուղղված հանցագործություններին, որոնցից 11-ը (13.9%) բավարարվել է և նշանակվել է ընդունելություն (2013թ.՝ 8 (11.6%)),

Մուտքագրված դիմումներից 90-ը (20.1%) (2013թ.՝ 99 (18.2%)) վերաբերել է սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններին, որոնցից 10-ը (11.1%) բավարարվել է և կազմակերպվել է ընդունելություն (2013թ.՝ 14 (14.1%)):

Մուտքագրված դիմումներից 76-ը (17%), (2013թ.՝ 116 (21.3%)) վերաբերել է ընդհանուր բնույթի հանցագործություններին, որոնցից 9-ը (11.8%) բավարարվել է և կազմակերպվել է ընդունելություն (2013թ.՝ 18 (15.5%)):

Մուտքագրված դիմումներից 61-ը (13.6%) (2013թ.՝ 56 (10.3%)) վերաբերել է կոռուպցիոն բնույթի հանցագործություններին, որոնցից 8-ը (13.1%) բավարարվել է և կազմակերպվել է ընդունելություն (2013թ.՝ 8 (14.3%)):

Մուտքագրվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություններին վերաբերող 8 դիմում (1.8%) (2013թ.՝ 7 (1.3%)): Նշված դիմումներից 3-ը (37,5%) բավարարվել է և կազմակերպվել է ընդունելություն (2013թ.՝ 2 (28,6%)):

**2014 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում կազմակերպվել է քաղաքացիների 110 ընդունելություն** (2013թ.՝ 196 և 2012թ. 236), այդ թվում՝

1) ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների մոտ կազմակերպվել է 13 (2013թ.՝ 50) ընդունելություն, որոնցից 12-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի, իսկ 1-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ:

2) 15 ընդունելությունից (2013թ. 55 և 2012թ.՝ 92) 4-ը կազմակերպվել է ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների և բաժինների պետերի մոտ, 9-ը՝ վարչությունների և բաժինների պետերի տեղակալների մոտ, 1-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի ավագ օգնականի մոտ, 1-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականի մոտ:

3) 19 ընդունելություն (2013թ. 91 և 2012թ. 87) կազմակերպվել է ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների և բաժինների դատախազների մոտ, որոնցից 9-ով կազմակերպվել է ընդունելություն ավագ դատախազների, իսկ 10-ով՝ դատախազների մոտ:

4) 62 քաղաքացու (2013թ. 48 և 2012թ. 92) ընդունել է ՀՀ դատախազության աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժնի պետը:

Այսպիսով, ընդունելության ներկայացած քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ տրվել են պատշաճ պարզաբանումներ, անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են ընդունելություններ դատավարական հսկողություն իրականացնող դատախազների և նրանց վերադասների մոտ, դիմումներն ուղարկվել են դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ կամ այլ մարմին՝ ըստ ենթակայության ընթացքը լուծելու և քաղաքացիներին պատասխանելու համար:

**2) Անձնակազմի կառավարման ոլորտում** ապահովվել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ դատախազության անձնակազմին և նրա գործունեության երաշխիքներին վերաբերող պահանջների, ինչպես նաև անձնակազմի հարցերով՝ գլխավոր դատախազի հրամանների, ցուցումների և կարգադրությունների կատարումը:

ՀՀ դատախազությունը 01.01.2014թ.-ի դրությամբ ունեցել է **337** հաստիքային միավոր: 2014 թվականի ընթացքում դատախազության համակարգում աշխատանքի է ընդունվել 64 դատախազ. 15-ը՝ ՀՀ գլխավոր դատախազությունում, 16-ը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում, 21-ը՝ մարզերի դատախազություններում, 2-ը՝ զինվորական կենտրոնական դատախազությունում, 6-ը՝ կայազորների զինվորական դատախազություններում: Համակարգից ազատվել է 47 դատախազ:

01.01.2015թ.-ի դրությամբ թափուր է 22 հաստիք:

2014 թվականի ընթացքում 79 հավակնորդ ընդգրկվել է դատախազների թեկնածությունների ցուցակում, որոնցից 10-ը՝ նաև դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում: «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվածներից 15-ն ուղարկվել են

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ՝ ուսումնառության ծրագիր անցնելու նպատակով:

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար դիմել է 237 անձ, որոնցից 84-ի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն: 64 թեկնածուի վերաբերյալ տրվել է բացասական եզրակացություն, 23 թեկնածու չի ներկայացել հանձնաժողովի նիստերին, իսկ 3-ին փաստաթղթային ստուգման արդյունքում չի թույլատրվել մասնակցելու հավակնորդների ստուգմանը:

Գումարվել է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի 21 նիստ: Լսվել է 78 գնահատագիր, 215 թեկնածուի տեղեկանք:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով արտահերթ դասային աստիճան է շնորհվել 5 դատախազի, շնորհակալություն է հայտարարվել 37 դատախազի և 7 պետական ծառայողի, հուշանվերով խրախուսվել է 9 դատախազ, 3 հայեցողական պաշտոն զբաղեցնող աշխատակից և 4 պետական ծառայող, դրամական պարգև տրվել է 19 դատախազի և 7 պետական ծառայողի:

ՀՀ գլխավոր դատախազի հրամանով հուշանվերով են խրախուսվել նաև Հայրենական մեծ պատերազմի մասնակից դատախազության 5 թոշակառու:

ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով խրախուսվել է այլ մարմինների (Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննչական գլխավոր վարչության) 73 աշխատակից. 32-ը խրախուսվել է հուշանվերով, 41-ին հայտարարվել է շնորհակալություն:

ՀՀ դատախազության աշխատակազմի ղեկավարի հրամաններով խրախուսվել է 43 աշխատակից. 31-ին տրվել է դրամական պարգև, 5-ին հայտարարվել է շնորհակալություն, 7-ին շնորհվել է դասային աստիճան:

ՀՀ վարչապետի որոշմամբ խրախուսվել է 6 դատախազ, ՀՀ Ազգային ժողովի նախագահի կարգադրությամբ խրախուսվել է 7 դատախազ, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով խրախուսվել է 6 դատախազ, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի հրամանով խրախուսվել է 7 դատախազ և 1 հայեցողական պաշտոն զբաղեցնող անձ, ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի հրամանով խրախուսվել է 4 դատախազ, ՀՀ ոստիկանության պետի հրամանով խրախուսվել է 12 դատախազ, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի կողմից խրախուսվել է 3 դատախազ և 1 հայեցողական պաշտոն զբաղեցնող անձ, ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի հրամանով խրախուսվել է 3 դատախազ:

Կարգապահական տույժի է ենթարկվել 4 դատախազ և 1 պետական ծառայող:

Հաշվետու ժամանակահատվածում կասեցվել է 1 դատախազի լիազորությունները:

ՀՀ դատախազությունից կենսաթոշակների նշանակման հանձնաժողովին է ներկայացվել 50 դատախազի կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ դիմում, որոնցից 43-ի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն, իսկ 7-ի՝ բացասական: Դադարեցվել է 8 կենսաթոշակառուի կենսաթոշակի վճարումը:

Կազմակերպվել է տարբեր բուհերի 56 ուսանողի արտադրական պրակտիկայի անցկացումը ՀՀ դատախազության ստորաբաժանումներում:

2014 թվականի ընթացքում ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության թափուր պաշտոնների հետ կապված ստացվել է 140 դիմում, կազմակերպվել է 57 բաց մրցույթ:

3) **Ֆինանսական և հաշվապահական հաշվառման, գնումների և նյութատեխնիկական ապահովման, ներքին աուդիտի, տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման, վիճակագրության և վերլուծության ոլորտներում** աշխատանքներն իրականացրել է «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմանը համապատասխան, ըստ ծրագրերի կազմվել են պահպանման ծախսերի նախահաշիվները, ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցերը, կնքված պայմանագրերին համապատասխան կատարվել են անհրաժեշտ վճարումներ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով:Սահմանված կարգով և ժամկետներում կազմվել ու համապատասխան մարմիններին են ներկայացվել հաշվապահական հաշվեկշիռները, պահպանման ծախսերի կատարման, դեբիտորական, կրեդիտորական պարտքերի մասին հաշվետվությունները, եկամտային հարկի ամփոփ հաշվարկները, վիճակագրական հաշվետվությունները:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 1231-Ա որոշման համաձայն՝ կազմվել և ֆինանսների նախարարություն են ներկայացվել 2015-2017 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերը, 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտը, ապրանքների և ծառայությունների գնումների անվանացանկերը:

2014 թվականին ներդրվել է հաշվապահական համակարգչային ծրագիր, որի շնորհիվ աշխատավարձերի հաշվարկը և հիմնական միջոցների, նյութական արժեքների հաշվառումն իրականացվում են այդ ծրագրով:

Կազմակերպվել է գնման 60 ընթացակարգ, որի արդյունքում կնքվել է շուրջ 480 մլն դրամի 85 պայմանագիր: Կազմվել և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ է ներկայացվել 2014 թվականի 9 ամսվա ընթացքում կատարված գնումների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն, ֆինանսների նախարարության կողմից տրամադրված ձևաչափերին համապատասխան կազմվել է 2015 թվականի գնումների անվանացանկը, կատարվել է պայմանագրերի մուտքագրում Client Treasuty համակարգ:

Հաշվետու տարում մշակել և ՀՀ գլխավոր դատախազի հաստատմանն է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության դատախազության ներքին աուդիտի գործունեության կանոնակարգը», «Հայաստանի Հանրապետության դատախազության ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը», «Հայաստանի Հանրապետության դատախազության ներքին աուդիտի 2014 թվականի ծրագիրը», հաստատվել է ՀՀ դատախազության ներքին աուդիտի կոմիտեի կազմը: Ներքին աուդիտի 2014 թվականի տարեկան ծրագրի համաձայն կատարվել է ՀՀ դատախազության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության

գործունեության 01.01.2013.-31.12.2013թթ. հաշվետու ժամանակաշրջանի ներքին աուդիտ՝ փաստաթղթերի ընտրանքային ուսումնասիրության եղանակով: Կազմվել գործողությունների ծրագիր՝ ուղղված արձանագրված թերությունների պատճառների վերացմանը:

Հաշվետու տարում իրականացվել է Հայաստանի Հանրապետության դատախազությունում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներ, կազմակերպել է դատախազների և Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստումը:

Հաշվետու տարում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում ներդրվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը, համապատասխան աշխատանքներ են իրականացվել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչական շենքի անցագրային համակարգի փոխարինման ուղղությամբ: Սահմանված կարգով տրամադրվել և հաշվառվել են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչական շենք մուտք գործելու համար նախատեսված էլեկտրոնային անցագրերը:

Վիճակագրության և վերլուծության ոլորտում համակարգչային համապատասխան ծրագրի միջոցով մշակվել և կազմվել են «Հայաստանի Հանրապետությունում հանցավորության վիճակի մասին», «Քննչական աշխատանքի մասին» (ՁԵ 1Մ) և (ՁԵ 1.1Մ) և «Դատախազի աշխատանքի մասին» (1-14-րդ բաժիններ) ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվության ձևերը: Կազմվել են «Դատախազի աշխատանքի մասին» և «Քննչական աշխատանքի մասին» 2014 թվականի 1-ին կիսամյակի և տարեկան հաշվետվության ձևերի փաթեթներն՝ ըստ տարածքային պատկանելության, դրանց թղթային ու էլեկտրոնային տարբերակները և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հաստատած ժամանակացույցը ստանալու մասին առանձին ցուցակները:

4) **Հանրային կապերի ոլորտում** ՀՀ դատախազությունը աշխատանքներ է իրականացրել հրապարակայնության և հանրային իրազեկման ապահովման համար և կարևորելով այդ ոլորտում անձի՝ տեղեկություն ստանալու իրավունքը, հաշվետու ժամանակաշրջանում հետևողական քայլեր է ձեռնարկել՝ դատախազության աշխատանքների թափանցիկությունն ապահովելու ուղղությամբ՝ պարբերաբար տեղեկություն տրամադրելով դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման վերաբերյալ: Առանձնակի տրվել և տրվում դատախազության պաշտոնական կայքէջի արդյունավետ գործարկմանը, ինչը հավասար պայմաններ է ստեղծում բոլոր շահագրգիռ անձանց, այդ թվում՝ լրագրողների համար դատախազության աշխատանքների վերաբերյալ տեղեկություն ստանալու հարցում, ինչպես նաև թույլ է տալիս օպերատիվ կերպով տարածել անհրաժեշտ տեղեկատվությունը: ՀՀ գլխավոր դատախազության կայքէջի վերագործարկման և ավելի թափանցիկ ու ամբողջական դարձնելուն ուղղված քայլերի արդյունքում «Պետական կայքերի բովանդակությունը և տեղեկատվական բացերը» ծրագրի փորձագիտական մոնիտորինգն արձանագրել է կայքի առաջընթացը բազմաթիվ կողմերով:

Հանրային կապերի ոլորտում ապահովվել է ՀՀ գլխավոր դատախազի հրավիրած միջգերատեսչական խորհրդակցություններին ԶԼՄ-ների մասնակցությունը և ՀՀ դատախազության գործունեության պատշաճ լուսաբանումը: Աշխատանքներն ուղղված են եղել հանրության իրազեկմանը, հանրության լայն շրջանակներում ՀՀ իրավապահ մարմինների նկատմամբ վստահության բարձրացմանը և փոխադարձ համագործակցության խրախուսմանը:

Հանրային կապերի ոլորտում կազմակերպվել են ՀՀ գլխավոր դատախազի մամուլի ասուլիսները, որոնց հրավիրվել են մի շարք հեռուստաընկերությունների, ինչպես նաև էլեկտրոնային և տպագիր մամուլի ներկայացուցիչներ: Մասնակիցների համար ստեղծվել են բոլոր աշխատանքային պայմանները, տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն՝ աշխատանքը արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել է նաև *«Մարդու իրավունքների եվրոպական չափանիշները և Եվրոպական դատարանում Կառավարության լիազոր ներկայացուցչի դերը մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման հարցում»* խորագրով միջազգային համաժողով, որի նպատակն էր քննարկել մարդու իրավունքների պաշտպանության ժամանակակից կառուցակարգերը և մեր երկրում դրանց ներդրման հնարավորությունները: Միջոցառմանը հրավիրված էին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի տեղակալ Ա. Թաթոյանը, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը, ՀՀ արդարադատության նախարար Հ. Մանուկյանը, Հայաստանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Օ. Պավլյուկը, ՀՀ սահմանադրական դատարանի անդամ, ՄԻԵԴ նախկին դատավոր Ա. Գյուլումյանը, ՄԻԵԴ-ում Ռուսաստանի Դաշնության կառավարության լիազոր հանձնակատար Գ. Մատյուշկինը, ՄԻԵԴ-ում Չեխիայի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ Վ. Շորմը, ԵՄ Նախարարների կոմիտեի Իրավունքի գերակայության և մարդու իրավունքների գլխավոր տնօրինության, Եվրոպական դատարանի վճիռների կատարման վարչության բաժնի ղեկավար Ի. Կիտսու-Միլոնասը, ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր Ռ. Մելիքյանը, Հայաստանի փաստաբանների պալատի նախագահ Ա. Զոհրաբյանը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հարցերով փորձագետ Ա. Ղազարյանը, ՀՀ արդարադատության նախարարության Եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետ Ա. Սեդրակյանը և այլ պաշտոնատար անձիք:

Ապահովվել է ԶԼՄ-ների մասնակցությունը համաժողովին և իրականացվել են աշխատանքներ՝ միտված լրագրողների աշխատանքի արդյունավետության և համակողմանիության բարձրացմանը: Համաժողովի ավարտից հետո լրագրողներին հնարավորություն է ընձեռվել ՀՀ գլխավոր դատախազին ուղղել ինչպես այդ համաժողովի վերաբերյալ հարցեր, այնպես էլ դատախազության գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

Կատարվել են ՀՀ դատախազության պաշտոնական կայքի սպասարկման այլ աշխատանքներ: Մասնավորապես, լրատվական կայքերի ու տպագիր մամուլի մշտադիտարկում, դրա հիման վրա՝ վերլուծություններ ու հետևություններ, ինչպես նաև արխիվացում, տեսանյութերի տեղադրում համացանցում և այլն:

Մշտադիտարկման արդյունքում առանձնացվել է տեղեկատվական պահանջարկը, որը հրապարակվել է պաշտոնական կայքի միջոցով:

Ամենօրյա դիտարկման են ենթարկվել 21 անուն տպագիր մամուլ, circle.am կայքում գրանցված 232 անուն էլեկտրոնային լրատվամիջոց, 18 անուն հեռուստա և ռադիոընկերությունների իրավական թեմաներով հաղորդումներ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազության պաշտոնական էլեկտրոնային փոստով քաղաքացիներից և ՁԼՄ-ներից ստացվել է ընդհանուր առմամբ 490 անվանում փաստաթուղթ, որոնք ուղարկվել են ըստ ենթակայության: Դրանց, ՀՀ դատախազության լիազորությունների սահմաններում, տրվել է համապատասխան իրավական ընթացք և կողմերն իրազեկվել են այդ մասին:

ՀՀ գլխավոր դատախազությունը 2015թ.-ին ևս շարունակելու է հետևողական քայլեր ձեռնարկել դատախազության գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու ուղղությամբ՝ հաշվի առնելով քրեական դատավարության վերաբերյալ տեղեկության տրամադրման առանձնահատկությունները և քաղաքացու ՀՀ Սահմանադրությամբ սահմանված իրավունքներն ու ազատությունները:

5) **«Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-**ի համապատասխան գործառույթները «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, փոխանցվել են Արդարադատության ակադեմիային: ՀՀ գլխավոր դատախազի 12.12.2013թ. N 113 հրամանով, «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ը լուծարվել է:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազի հաստատմանն է ներկայացվել 2014 թվականի ընթացքում «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ում վերապատրաստման ենթակա դատախազների ցուցակը և հաշվետու ժամանակահատվածում վերապատրաստվել են 268 դատախազ: